Ավագ Հարությունյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Երևան
2015

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (5Հ)
Հ 422

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական
խորհրդի որոշման հիման վրա

Գիտական խմբագիր
Ամատունի Վիրաբյան
պատմագիտության դոկտոր

Հարությունյան Ավագ

Հ 422 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ/ Ա.Հարությունյան. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2015. - 164 էջ:

Հայ պատմագրության մեջ առաջին անգամ արխիվային սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի և գրականության լայն ու համակողմանի օգտագործմամբ ներկայացվել և վերլուծվել են 1965թ. Հայաստանի Երկրորդ Հանրապետությունում Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի ոգեկոչման պատմա-քաղաքական գործընթացը, կուսակցական-պետական հանդիսություններն ու համաժողովրդական ցույցերը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Գրողների միության դերակատարությունը, Հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնումը և Սփյուռքի կոմիտեի ձևավորումը, ինչպես նաև Արցախյան հարցի վերարծարծումը և 1970-1980-ական թվականներին Հայոց ցեղասպանության ոգեկոչման մանրամասները:

Աշխատությունը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (5Հ)

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2015
© «Նորավանք» ԳԿՀ, 2015

ISBN 978-9939-825-28-1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ……..... 5

1. ՅԱԿՈՎ ԶԱՐՈԲՅԱՆԻ ՖԵՆՈՄԵՆԸ ……...…..... 7

2. ՊԱՅՔԱՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ
ՈԳԵԿՈՉՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ …….... 22

3. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՈՒՅՑԵՐԸ ……...……..... 47

4. ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ …..... 60

5. ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ….....… 68

6. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ
ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԿՈՄԻՏԵԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ……...…….. 79

7. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒՄԸ …….…..... 106

8. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ
1970-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ …….....…..... 126

ՎԵՐՋԱԲԱՆ …….……..... 135

Հավելված
Վարդան Հայկազյան
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄԸ ՄՈՍԿԱՎՅՈՒՄ ....…... 140

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 154

ՆԱԽԱԲԱՆ

Նշանավոր արձակագիր, հրապարակախոս և հասարակական գործիչ Վարդգես Պետրոսյանի դիպուկ բնորոշմամբ. «Քառասունհինգ տարի, 1920-ից մինչև 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք… տխրելու իրավունքից: Այդ ամենը, հասկանալի է, վիրավորում էր մեր ազգային ինքնասիրությունը՝ տարեցտարի գերլարման հասցնելով մեր ազգային համբերության և արժանապատվության պրկված զսպանակը: Եվ 1965-ին, Մեծ ցեղասպանության 50-ամյա տարելիցի օրը, այդ զսպանակը պայթեց»[1]:

Եղեռնի 50-ամյակի նշանավորում-ոգեկոչումը հիմնականում պայմանավորված էր նաև երկու նկատառումով. Եղեռնի թեմայի շուրջ սփյուռքահայ համայնքների միավորմամբ ու միակ Հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի շուրջ համախմբմամբ, և Ի.Ստալինի մահից հետո ԽՍՀՄ-ում ստեղծված որոշակի «ազատականացման» մթնոլորտով:

Հանուն ճշմարտության պարտավոր ենք փաստել, որ եթե տվյալ ժամանակահատվածում Խորհրդային Հայաստանի կառավարման ղեկին չլիներ հայրենասիրական նվիրյալ դիրքորոշմամբ և քաղաքացիական խիզախ կեցվածքով վճռական Յակով Զարոբյանը, ապա միջոցառումների շարքը լավագույն դեպքում կվերածվեր խորհրդային արարողակարգային սովորական տոնակատարության:

[1] Տե՛ս *Պետրոսյան Վ.,* Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես… իմ վիշտը, Ե., 2003, էջ 133:

Բավական է, որ նա մատների արանքով նայեր ու մոտենար այդպիսի ոչ սովետական ու ոչ կոմունիստական հարցին, ինչն այն ժամանակ հասկանալի և ընթացակարգային կհամարվեր, ու ղեկավարի պաշտոնն էլ կպահպաներ, և առնվազն Եղեռնի զոհերի հիշատակի հուշարձանի կառուցումը կհետաձգվեր անորոշ ժամանակով: 1965թ. հետո ԽՍՀՄ-ում սկսվեց սուսլովյան պահպանողականության հաղթարշավը՝ այսպես կոչված «լճացման տարիները»: Հիշենք, որ Հայոց ցեղասպանության 20-րդ, 30-րդ, 40-րդ տարելիցները բացարձակապես լռության, մոռացության էին մատնված, իսկ 60-րդ, 70-րդ տարելիցների «նշմանը» հիմնականում ընթացակարգային բնույթ տրվեց:

1. ՅԱԿՈՎ ԶԱՐՈԲՅԱՆԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Սկզբից ևեթ պետք է փաստել, որ Յա. Զարոբյանի համար Եղեռնի 50-ամյակը նշելու հարցի լուծումը բավական դժվար խնդիր էր, եթե չասենք՝ գրեթե անհնարին, քանզի անմիջականորեն շոշափվում էին ԽՍՀՄ արտաքին քաղաքականության և գաղափարախոսության հիմունքները: Փաստորեն, անհրաժեշտ էր դուրս գալ ԽՍՀՄ միութենական հանրապետություններից մեկի կոմկուսի ղեկավարի նորմավորված շրջանակներից:

Այսինքն՝ առաջին հայացքից այն խնդիրը, որ նա իր առջև դրել էր, ժամանակի գաղափարաքաղաքական իրականության պայմաններում բացարձակապես երևակայելի չէր, ավելի հստակ. «Այն ժամանակ գոյություն ունեցող պայմաններում Մոսկվայի առջև նման հարցադրումը Յա. Զարոբյանի համար հղի էր մեծ անախորժություններով, նրա կարիերայի, ծառայողական անբասիր ցուցակի համար ռիսկով: Գումարած՝ իշխանությունների հսկողությունից գործընթացի դուրս գալու իրական հնարավորությամբ»[1]:

Դժվարություններն ահռելի էին, իսկ դրանց հաղթահարման հնարավորությունները՝ նվազագույն: Բավական է նշել, որ երբ Եղեռնի 50-ամյակը ոգեկոչելու թույլտվություն ստանալու համար ՀԿԿ Կենտկոմը դիմեց Մոսկվա, ԽՄԿԿ Կենտկոմի

[1] Տե՛ս *Заробян Н.Я.,* Яков Заробян и его эпоха, Ер., 2008, с. 127.

Քաղբյուրոն հարցի քննարկման համար կազմեց հատուկ հանձնաժողով՝ Մ.Սուսլով, Ն.Պոդգորնի, Ա.Գրոմիկո կազմով, որը թեպետ բավական դժկամ, բայցևայնպես համաձայնեց թույլատրել նշել Եղեռնի 50-ամյակը: Արժե հիշատակել, որ մասնավորապես ԽՄԿԿ պաշտոնական գաղափարախոս Մ.Սուսլովը հանրահայտ էր ընդգծված հայատյաց դիրքորոշմամբ:

1964-1965թթ. Յա. Զարոբյանը մի քանի անգամ հանդիպել է Ն.Խրուշչովի, Լ.Բրեժնևի, Ա.Գրոմիկոյի, Մ.Սուսլովի հետ: ԽՍՀՄ արտգործնախարար Ա.Գրոմիկոն անհանգստանում էր թուրքերի դժգոհությունից, որոնց հետ ԽՍՀՄ-ը լավ հարաբերություններ էր հաստատել, հատկապես երբ 1953թ. հայտարարվեց Թուրքիայից հողային պահանջներից հրաժարվելու մասին: Առանձնապես դժվար էր Մ.Սուսլովին համոզելը, որը դրանում տեսնում էր ազգայնականության հրահրում և գաղափարախոսական դոգմաների խաթարում:

Մոսկովյան վերադասին համոզելու հարցում Յա. Զարոբյանն օգտագործեց հայկական Սփյուռքի ազդեցիկ գործոնը՝ ասելով, որ դրանով Կրեմլը ձեռք կբերի Սփյուռքի քաղաքական աջակցությունը, իսկ հակառակ դեպքում Սփյուռքում կուժեղանա հակախորհրդային տրամադրվածությունը:

Սակայն մեկ բան հստակ է. ՀԽՍՀ ղեկավարությունը, առաջին հերթին՝ ի դեմս ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանի[1], ի զորու եղավ հաղթահարել սուսլովյան պատ-

[1] **Զարոբյան Յակով Նիկիտի** - ծնվել է 1908թ. սեպտեմբերի 25-ին Արդվինում: 1914-49թթ. ապրել է Հայաստանից դուրս: 1949թ. տեղափոխվել է Երևան: 1953-58թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար, 1958-60թթ.՝ Նախարարների խորհրդի 1-ին փոխնախագահ, 1960թ. դեկտեմբերի 28-1966թ. փետրվարի 5՝ ՀԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար, 1966-1980թթ.՝ ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության փոխնախարար: Մահացել է 1980թ. ապրիլի 10-ին Մոսկվայում, թաղվել է Երևանի քաղաքային պանթեոնում: Տե՛ս *Заробян Н.Я.,* Яков Заробян и его эпоха, Ер., 2008.

նեշը: Ընդ որում, նա ստանձնեց Եղեռնի 50-ամյակի նշման ողջ գործընթացի անձնական պատասխանատվությունը:

Հարկ է նշել, որ Յա. Զարոբյանը սեփական անձի և գերդաստանի ճակատագրով (1914թ. ծննդավայր Արդվինից գաղթած և ոտքով Ռոստով հասած, ապա մինչև 1949թ. Հայաստանից դուրս ապրած) զգացել էր Մեծ Եղեռնի արհավիրքները: Գաղթականի նույն ճակատագրին էր արժանացել նաև նրա կնոջ ընտանիքը:

Եղեռնի 50-ամյակի նշման կազմակերպմամբ նա առաջին հերթին բավարարում էր հայ ժողովրդի վաղուց հասունացած ոգեղեն հիշատակի պահանջները և լուծում հիրավի ռազմավարական նշանակության խնդիր:

Ուստի, Խորհրդային Հայաստանի և անուղղակիորեն նաև սփյուռքահայության համար պատասխանատվություն ստանձնելով՝ նա կարողացավ կոմունիստական հասարակարգի պայմաններում առաջ քաշել և իրականություն դարձնել ակամայից որոշակի հակախորհրդային երանգավորում ձեռք բերող համազգային միջոցառումները, որոնք արմատապես հեղաշրջեցին խորհրդահայության մտածելակերպը, ձևավորեցին միանգամայն նոր հոգեկերտվածք: 1960թ. դեկտեմբերի 28-ից դառնալով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար՝ Յա. Զարոբյանն անմիջապես ձեռնամուխ եղավ որոշակի ազգային ծրագրերի իրականացմանը[1]:

[1] Օրինակ, տե՛ս *Գրիգորյան Զ.,* Յակով Զարոբյանի դերը հայոց Մեծ եղեռնի 50-ամյակը Խորհրդային Հայաստանում նշելու և հայրենադարձության կազմակերպման գործում, ԲՀԱ, 2003, թ. 1, էջ 202-205:

Արդեն 1961թ. սկզբին նա ՀԿԿ Կենտկոմի ագիտքարոզչական բաժնում ստեղծեց արտասահմանյան կապերի ենթաբաժին, պահանջում ու հսկում էր, որպեսզի դրա ղեկավար Կ.Դալլաքյանը երկու շաբաթը մեկ զեկուցի Սփյուռքի իրադրության մասին: Յա. Զարոբյանը զգուշացրել էր, որ այդ ենթաբաժինը, «արտասահմանյան կոմկուսների պատվիրակություններ ընդունելուց, խաղաղության շարժման գործը Հայաստանում համակարգելուց և նման կարգի ուրիշ հարցերից զատ ու դրանցից առավել, պետք է զբաղվի Սփյուռքի հարցերով, որ ինքը հաճախ, անմիջապես պիտի զբաղվի ենթաբաժնով»[1]:

Յա. Զարոբյանն արդեն 1961թ. հետաքրքրվել էր Եղեռնի 50-ամյակի առիթով Սփյուռքի ծրագրերով: Այս առումով խոսուն է 1962թ. սկզբին լիբանանահայ գործիչ Ա.Ծառուկյանի հետ նրա երկխոսությունը. «Յա. Զարոբյանը, հարցնելով Սփյուռքի ծրագրերի մասին, ասել է. «Իմ երազանքն էլ դա է, հասնել Սփյուռքի համախմբմանը Խորհրդային Հայաստանի շուրջ: Մեկը մյուսին խիստ անհրաժեշտ են: Հատկապես հայապահպանության համար: Հայրենիքը մեկն է, հայությունն էլ թող լինի մեկ, մի ամուր միասնության մեջ»[2]:

1961թ. հունվարի 28-ին Յա. Զարոբյանը նամակ ուղարկեց ԽՄԿԿ Կենտկոմ՝ խնդրելով թույլատրել հայրենադարձության իրականացումը 1961-1965 թվականներին[3]: Սա տասնամյակներով ընդհատված համազգային նշանակության գործընթացի շարունակությունն էր:

[1] Տե՛ս *Դալլաքյան Կ.,* Հուշապատում, Ե., 1998, էջ 62:
[2] Նույն տեղում, էջ 63, 67:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 48, թ. 48:

Սփյուռքի նկատմամբ պետական հոգածությամբ էր պայմանավորված Յա. Զարոբյանի համառ խնդրանքի շնորհիվ ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ն.Խրուշչովի հետ սփյուռքահայ մտավորականների հանդիպումը 1961թ. մայիսի 7-ին Երևանում, խորհրդայնացման 40-ամյակի տոնակատարության օրերին[1]:

Հանդիպումը կազմակերպելով՝ Յա. Զարոբյանը նպատակ ուներ ԽՍՀՄ ղեկավարին ցույց տալ հայ ժողովրդի միասնությունը և ներկայացնել Արևմտահայաստանի, Ղարաբաղի ու Նախիջևանի վերադարձի հարցում սփյուռքահայ ազդեցիկ գործիչների կարծիքները: Հանդիպմանը հանդես եկան Զատիկ Խանզադյանը (քարտեզագետ, Ֆրանսիա), Արամ Դեյրմեջյանը (Արգենտինա), Կարլոս Խրլակյանը (Բրազիլիայի պառլամենտի պատգամավոր), Արթին Ջերեջյանը (Լիբանանի Հնչակյան կուսակցության Կոմիտեի քարտուղար), Համբարձում Բերբերյանը (Ռամկավար-ազատական կուսակցության կենտրոնական վարչության անդամ), Հովհաննես Աղբաշյանը (Լիբանանի Կոմկուսի Կենտկոմի անդամ):

Ընդհանուր պատկերացում կազմելու համար ներկայացնենք հատվածներ այն ելույթներից, որոնք առավել բնորոշ են մեր հետազոտության թեմային:

Զատիկ Խանզադյան. «1914 թվի մեծ պատերազմեն ի վեր, 40 տարիներե ի վեր, անցած անօրինականությունները դատապարտվեցին, իսկ մեր արդար դատը՝ Թուրքահայաստանի դատը, մնաց ոչ լուծելի: Այսօր Դուք ստացաք հազարավոր հայ մա-

[1] Մանրամասն տե՛ս *Վիրաբյան Ա.,* Հանդիպումներ խորհրդային պետության ղեկավարների հետ, ԲՀԱ, 2003, թ. 1, էջ 156-173; ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 141, թթ. 1-24:

նուկների օրհնություններ իրենց հարազատ հողից, բայց նույնչափ հազարավոր մանուկներ այս օրերին կսպասեն, որպեսզի իրենք էլ օգտվեն որպես ազգ, որպես հայրենիք իրենց հարազատ հողում: Մեր մանուկների անունները, մեր երիտասարդության անունները, որոնք գրեթե Հայաստանի ժողովրդի չափ են, կկորսվեն օտար երկրի մեջ: Ես կբերեմ մեր հայ մանուկների օրհնությունը այն հույսով, որ եթե առիթ ներկայանա, չեք մոռանա մեր սփյուռքի մանուկներին, սփյուռքի հայությանը, որոնք ուզում են միանալ իրենց պատմական հայրենիքին»[1]:

Արթին Ջերեջյան. «Պատմական մեծ խնդիրներ մեզ հետ կապված, որոնց ճիշտ լուծումը կդյուրացնի այդ մեկ ու կես միլիոն հայերի տեղափոխումը խորհրդային աշխարհ, եթե ներկայումս հնարավոր չէ, ընկեր Խրուշչովն ինքը լավ գիտի, մեր թուրքահայոց հողերը եթե պահանջելու լինենք, մեծ տուրուդմփոց կառաջանա, այդ մենք չենք ասում, այդ թողնում ենք, որ պատմությունն ինքը լուծի խաղաղ ճանապարհով. մի օր թուրքերն էլ խելացի կդառնան և հողերը կվերադարձնեն, բայց արտասահմանում ապրողներիս շատ շատերի հայրենիքը Նախիջևանն է, Ղարաբաղն է, չի՞ կարելի արդյոք այնպես անել, որ այդ հայերը գան այստեղ, ապրեն Նախիջևանում, Ղարաբաղում և անել այնպես, որ հայկական իշխանությունը տարածվի այդ տեղերի վրա: Մի ժամանակ մենք հարց տվեցինք, թե ներգաղթի մասին Հայաստանի կառավարությունն ինչ է մտածում: Մեզ ասացին, որ ներկա պայմաններում մեր հնարավորության սահմաններում կարող ենք տարեկան 2 հազար հայ ընդունել: Մենք հաշիվ արեցինք և տեսանք, որ շուրջ երկու հարյուր տարի է պետք, որ

[1] Մանրամասն տե՛ս *Վիրաբյան Ա.,* նշվ. աշխ., էջ 156-173:

արտասահմանի հայերը այդ ռիթմով այստեղ հասնեն: Եթե, իհարկե, այն ժամանակ հայ մնա աշխարհիս երեսին: Խոսքս այս կողմին է վերաբերում: Ես երկու խնդիր կդնեմ ընկեր Խրուշչովի առաջ, խնդիր մը, որը Խորհրդային Միության եղբայրական սեղանի վրա լուծվելիք հարց է: Հողի տարածությունը և ներգաղթ, հող, որի վրա կարողանանք կազմակերպել մեր արտասահմանյան հայ զանգվածի ներգաղթը, շենցնենք, հայկական օջախ շինենք Նախիջևանի, Ղարաբաղի հողերի վրա: Այսպիսի մի կարգադրություն որ լինի, ամբողջ արտասահմանի մեկ ու կես միլիոն հայությունը, կզարթնեցնի երիտասարդական այնպիսի զգացում, որը՝ նաև կարտահայտի այն պարտքը, որ հայ ժողովուրդն ունի Խորհրդային Միության հանդեպ, Կոմունիստական կուսակցության հանդեպ, Լենինի շառավիղների հանդեպ, և արտասահմանում մնացող հայերի հարցը իր լուծումը կգտնի Խորհրդային Միության վարչապետ Խրուշչովի օրոք: Դա երախտագիտական նոր ալիք կստեղծի սփյուռքահայության մեջ»[1]:

Նիկիտա Խրուշչով. «Մեր երկրի ներսում ազգային հարց գոյություն չունի, նա լուծված է, և լուծված է շատ լավ: Ահա և ես մոտենում եմ ազգային հարցի լուծմանը, արդեն ոչ թե Խորհրդային Միության շրջանակներում, այլ մեր երկրի սահմաններից դուրս: Դա շատ բարդ հարց է: Դուք շատ լավ հասկանում եք, որ ինչպիսի պատճառաբանություն էլ մենք հիմա բերենք հայկական հողերի և հայերի իրավացիության մասին, այնուամենայնիվ, այն երկրները, որոնք տիրապետել են ձեր հողերին, մեր պատճառաբանությունների հետ երբեք չեն համաձայնվի, ուրեմն, եթե

[1] Նշվ. աշխ., էջ 156-173:

որոշենք, պետք է որոշենք միայն ուժով, և եթե մենք կանգնենք այդ ուղու վրա, ապա դա կործանիչ ուղի է, որովհետև այդ դեպքում մեր դեմ պրոպագանդա կկազմակերպեն, որ մենք ոչ միայն ուզում ենք միավորել հայկական հողերը, այլև մենք դա օգտագործում ենք պատերազմ հրահրելու համար: Հայ ժողովրդի վերամիավորման հարցը կորոշվի, կլուծվի, բայց դրա համար հարկավոր է ունենալ համբերություն: Պատերազմով պետք չէ լուծել այդ հարցը. գիտակցությամբ, համակարգի սոցիալիստական առավելությունների վրա պետք է լուծել այդ հարցը»[1]:

Այսինքն՝ Խրուշչովն ընդունեց, որ Թուրքիան զավթել է հայկական հողերը, բայց հասկացրեց, որ հարցի լուծումն առանց պատերազմի հնարավոր չէ, իսկ Ղարաբաղն ու Նախիջևանն էլ խորհրդային տարածք են[2]:

Այս առումով հատկանշական է այն փաստը, որ 1961թ. հունիսի 3-ին Գրիգոր Զոհրապի 100-ամյակը նշելու խնդրով դիմելով ԽՄԿԿ Կենտկոմին՝ Յա. Զարոբյանը շեշտում էր. «1915թ., հայկական կոտորածի օրերին, հայ մտավորականության հիասքանչ ներկայացուցիչների հետ Գր. Զոհրապը բանտարկվել և թուրքական յանիչարների կողմից գազանաբար սպանվել է»[3]:

Իսկ 1961թ. օգոստոսի 2-ին նա ԽՄԿԿ Կենտկոմին առաջարկեց նաև իրականացնել սփյուռքահայ պարբերականների բաժանորդագրություն և անվանի գրողների երկերի տպագրություն, այդ թվում՝ Մոսկվայում, վճարումը կատարելով արտարժութային ռուբլիներով[4]:

[1] Տե՛ս *Վիրաբյան Ա.,* նշվ. աշխ., էջ 156-173:
[2] Տե՛ս *Ասծատրյան Ե.,* XX դար. Հայաստանի կառուցման ճանապարհին: Հուշեր, Ե., 2004, 236 էջ:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 85, թ. 84:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 85, թթ. 139-140:

Այս համատեքստում էր նաև Յա. Զարոբյանի 1961թ. սեպտեմբերի 7-ի նամակը ԽՄԿԿ Կենտկոմ, որում «ծայրահեղ նպատակահարմար համարվեց ՀԽՍՀ-ում հատուկ սփյուռքահայ դպրոցների համար արևմտահայ լեզվով հայոց լեզվի, գրականության, պատմության և աշխարհագրության դասագրքերի պատրաստումը և տպագրումը կազմակերպելը»[1]:

Վերջապես, ավելի քան 30 տարվա[2] քաղաքական մեկուսացումից հետո, ՀԿԿ 22-րդ համագումարում 1961թ. սեպտեմբերին Յա. Զարոբյանը մասնավորապես հայտարարեց. «Խնդիրն այն է, որպեսզի ընդլայնենք, բարելավենք սփյուռքահայերի և նրանց առաջադիմական կազմակերպությունների հետ մեր կապերը, հաճախակի կազմակերպենք սփյուռքահայ գաղթօջախներ խորհրդահայ գիտության և մշակույթի գործիչների, գեղարվեստական և մարզական կոլեկտիվների այցերը: Դրա հետ մեկտեղ, հարկավոր է Խորհրդային Հայաստան հաճախակի հրավիրել առաջադեմ սփյուռքահայերի և լայնորեն ընդունել զբոսաշրջային խմբերի»[3]:

Ի դեպ, գաղափարադասակարգային տեսանկյունից առաջադիմական էին համարվում միայն Սոցիալ-դեմոկրատական հնչակյան և Ռամկավար-ազատական կուսակցությունները, որոնց նույնպես հատուկ անդրադարձավ. «Մեր դիրքորոշումն

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 86, թ. 68:

[2] Վերջին անգամ Եղեռնի զոհերի հիշատակին ՀԽՍՀ-ում եկեղեցիների զանգերը ղողանջել էին 1926թ. ապրիլի 24-ին: ՀԿԿ Կենտկոմի 1926թ. օգոստոսի 31-ի որոշմամբ Ար. Երզնկյանին հանձնարարվեց «բանակցություններ վարել կաթողիկոսության հետ համաշխարհային պատերազմի (24 ապրիլի) զոհերի հիշատակի օրը նշելը վերացնելու անհրաժեշտության մասին»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 72:

[3] Տե՛ս *Заробян Я.,* Отчетный доклад Центрального Комитета Компартии Армении XXII съезду Компартии Армении, Е., 1961, сс. 115-17.

այդ կուսակցությունների նկատմամբ հստակ է: Մենք նրանց որևէ գաղափարական զիջում չենք պատրաստվում անել, սակայն ողջունում ենք նրանց հայրենասիրական գործունեությունը կապիտալիստական երկրների գաղութների պայմաններում: Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների նման գործելակերպը միշտ մեր աջակցությանը և օգնությանը կարժանանա»[1]:

Սփյուռքի հետ կապերի ամրապնդման անհրաժեշտության մասին Յա. Զարոբյանը շեշտեց նաև 1964թ. հունվարի 7-ին ՀԿԿ 23-րդ համագումարին զեկույցում[2]:

Այս ամենն ակնհայտորեն վկայում էր, որ արդեն 1961-ից Յա. Զարոբյանը (ՀԽՍՀ մյուս ղեկավարներին դեռ տեղյակ չպահելով) սկսել էր լրջորեն նախապատրաստվել Եղեռնի 50-ամյակի ոգեկոչման և Սփյուռքի հետ կապերի ամրապնդման գործին:

Դեռ 1962թ. ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտեն Յա. Զարոբյանին առաջարկել էր ստեղծել այսպես կոչված «Բեռլինի կոմիտե»-ի կամ պաշտոնապես՝ «Արտասահմանում գտնվող հայրենակիցների հետ կապերի կոմիտե»-ի հայկական տարբերակ (ըստ էության՝ ՊԱԿ մասնաճյուղ), ինչին Յա. Զարոբյանը կտրականապես դեմ էր: Այդ մարմինը զբաղվում էր Երկրորդ աշխարհամարտի արդյունքում արտասահմանում հայտնված ԽՍՀՄ ռազմագերի վտարանդի քաղաքացիներով, ինչը սփյուռքահայերի հետ բնավ կապ չուներ, ուստի և վտանգավոր համարվեց նրանց «ապահովության տեսակետից»[3]:

[1] Նույն տեղում, էջ. 115-117.
[2] Տե՛ս *Заробян Я.,* Отчетный доклад Центрального Комитета Компартии Армении XXIII сьезду Компартии Армении, Ер., 1964.
[3] Տե՛ս *Դալլաքյան Կ.,* Հուշապատում, էջ 82:

Օգտվելով այն փաստից, որ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը 1963թ. ապրիլի 23-ին «Հայրենիք վերադառնալու խորհրդային կոմիտեն» «Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի խորհրդային կոմիտեի» վերակազմակերպելու մասին որոշում էր ընդունել, ՀԿԿ Կենտկոմն անմիջապես ձեռնարկեց Սփյուռքի կոմիտեի ստեղծումը: ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը 1964թ. ապրիլի 10-ին «Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե» անվամբ «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե» ստեղծելու մասին որոշում ընդունեց, հանգամանալից նշվեցին հիմնական խնդիրները և գործունեության շրջանակները[1]:

Ուշագրավ է, որ սկզբում այս կոմիտեն պետք է լիներ «կամավոր ընկերություն», այսինքն՝ հասարակական կազմակերպություն, սակայն, նկատի ունենալով դրա կարևորությունը և համազգային հնչեղությունը, որոշվեց այն դարձնել պետական մարմին: Կոմիտեի նախագահ նշանակվեց Վարդգես Համազասպյանը[2]:

Այս առթիվ մեջբերենք Վ.Համազասպյանի վկայությունը. «Հայրենիք-սփյուռք կապերի ընդլայնման, զարգացման նոր, համարձակ քայլ էր 1964թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը, որի հիմնադիրներ դարձան Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, Մարտիրոս Սարյանը, Վիկտոր Համբարձումյանը, Ստեփան Զորյանը,

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 42, թթ. 95-97:

[2] **Համազասպյան Վարդգես Եղիշեի** – 1964-1985թթ. Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ:

Հրաչյա Քոչարը, Նաիրի Զարյանը, Պարույր Սևակը, Սիլվա Կապուտիկյանը, Վարազդատ Հարությունյանը, Տիգրան Պետրոսյանը, Արա Սարգսյանը, Մետաքսյա Սիմոնյանը, Երվանդ Քոչարը, Հովհաննես Զարդարյանը, Մորուս Հասրաթյանը, Պատրիկ Սելյանը և ես՝ նվաստս, ողջ Հայաստանի մտավորականությունն ու աշխատավորությունը: Բոլորին սրտամոտ կազմակերպություն դարձավ կոմիտեն, քանզի նրա ղեկավարությանը իրավունք էր վերապահված կուսակցության ու պետության որոշ օրգանների հսկողությամբ «ազատ» կապերի մեջ մտնել սփյուռքահայ կազմակերպությունների հետ, հաշվի առնելով նաև քաղաքական հանգամանքները»[1]:

Ապա, ներկայացնելով կոմիտեի գործունեությունը[2], բացարձակապես ոչ մի խոսք չի ասում Յա. Զարոբյանի և Ա.Քոչինյանի մասին՝ անգամ չհիշատակելով նրանց անունները: Մինչդեռ նրանց էր պարտական նշանակման և կոմիտեի ստեղծման ու հետագա գործունեության արդյունավետ ծավալման համար:

ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1964թ. մայիսի 26-ին որոշեց կազմավորել կոմիտեն[3], իսկ մայիսի 27-ին հաստատեց դրա ղեկավար կազմը[4]:

Կոմիտեի գործունեության հիմնական խնդիրներ համարվեցին ԽՍՀՄ արտաքին և ներքին քաղաքականության հիմնա-

[1] Տե՛ս *Համազասպյան Վ.,* Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Ե., 2001, էջ 279-280:

[2] Նշվ. աշխ., էջ 280-281:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 191, թթ. 1-3; գ. 192, թ. 2; ֆ. 875, ց. 1, գ. 2, թթ. 1-2; Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, էջ 22-23:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 192, թ. 8; ֆ. 875, ց. 1, գ. 2, թ. 3: Կոմիտեի նախագահ հաստատվեց Վարդգես Համազասպյանը, նախագահի տեղակալ՝ Անդրանիկ Մարտիրոսյանը:

կան դրույթների պարզաբանումը, Խորհրդային Հայաստանի հանդեպ սփյուռքահայերի մեջ հայրենասիրության և հպարտության սերմանումը, հակախորհրդային խմբերի, կազմակերպությունների ու առաջին հերթին՝ Հ.Յ.Դ. գործունեության մերկացումը, առաջադեմ կառույցների հետ կապի ստեղծումը և աջակցությունը, ղեկավարների հրավիրումը, ռադիոհաղորդումների կազմակերպումը, ակտիվիստների երեխաների ուսման և պիոներական ճամբարներում հանգստի կազմակերպումը, սփյուռքահայ գրողների երկերի հրատարակումը: «Բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերության» օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը հանձնվեց կոմիտեին որպես պաշտոնաթերթ: Համապատասխան բոլոր պետական կառույցներին պարտավորեցրին բազմակողմանի օգնել կոմիտեին:

Սփյուռքի կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքները ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատեց 1964թ. ապրիլի 28-ին[1]:

Կոմիտեի ստեղծումը ոչ միայն պետական կազմակերպչական բարձրագույն հոգածության առարկա դարձրեց տվյալ ոլորտը, այլև էապես ընդարձակեց և զարգացրեց Հայրենիք-Սփյուռք կապերը: Մի քանի տարվա ընթացքում կատարվեց հսկայական աշխատանք: Այսպես, եթե 1958թ. կապ էր պահպանվում 23 երկրների 53 կազմակերպության հետ, ապա 1965թ. սկզբին միայն Սփյուռքի կոմիտեի գծով կապեր էին ձևավորվել 42 երկրների 860 կազմակերպության և առանձին անհատների հետ: Մասնավորապես, 1964թ. սփյուռքահայ կազմակերպություններին պարբերաբար ուղարկվել են 24 անուն թերթ և ամսագիր, 32

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 43, թ. 40:

հազար գիրք, 3 անուն 32 օրինակ հայկական խորհրդային շարժանկար, դպրոցների համար՝ 17 հազար դասագիրք, ֆիզիկայի և քիմիայի դպրոցական լաբորատորիաների համար՝ սարքավորումներ: Արտասահման հյուրախաղերի են մեկնել բազմաթիվ համույթներ: Սփյուռքահայ ուսուցիչների համար ստեղծվել էին որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք ավարտել էր 70 հոգի: Սփյուռքահայ ներկայացուցիչները մասնակցել էին Հայաստանի խորհրդայնացման և Կոմկուսի 40-ամյակի, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի, Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի և ուրիշ միջոցառումների տոնակատարություններին: Երեք տարվա ընթացքում միայն «Ինտուրիստ»-ի գծով ՀԽՍՀ էր այցելել ավելի քան 2.600 սփյուռքահայ: Երևանի բուհերում սովորում էր մոտ 200 սփյուռքահայ:

Կարևորելով այս ամենը՝ 1965թ. մարտի 2-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունն ընդունեց «Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի ընդլայնման միջոցառումների մասին» որոշում, որտեղ «գլխավոր խնդիրը համարվեց սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների հետ կապերի բազմակողմանի ընդլայնումը, նրանց ուժերը դաշնակցություն հակահեղափոխական բուրժուա-ազգայնական կուսակցության հետ պայքարում համախմբելը»[1]:

Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեին և ՀԽՍՀ ԳԱ նախագահությանն աշխատանքների բարելավման և կատարելագործման ուղղությամբ տրվեցին հստակ հանձնարարականներ:

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 7, թթ. 19-23:

Եզրափակելով հավելենք, որ ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը պարբերաբար անդրադառնում և կարգավորում էր կոմիտեի գործունեությանն անհրաժեշտ կենսական նշանակության բոլոր հարցերը[1]:

[1] Տե՛ս, օրինակ, ՀԱԱ, ֆ. 113, ց. 95, գ. 863, թ. 15; ց. 97, գ. 699, թ. 10, գ. 987, թ. 12, գ. 1088, թ. 9:

2. ՊԱՅՔԱՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

Առաջին հայացքից որքան էլ արտառոց և զարմանալի թվա, այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչման գործընթացի սկզբնավորումը ոչ թե ժողովրդահասարակական շրջանակների, այլ հենց իշխանական կառույցների կողմից եղավ:

1964թ. հուլիսի 16-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծատուր Աղայանը[1], ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորի[2] վարիչ Հովհաննես Ինճիկյանը[3] և ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջոն Կիրակոսյանը[4] նամակ հղեցին ՀԿԿ Կենտկոմին՝ ներկայացնելով «Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի միջոցառումների անցկացման մասին» 11 կետից բաղկացած գիտաքարոզչական, մշակութային-զանգվածային միջոցառումների կազմակերպման առաջարկություններ[5]:

[1] **Աղայան Ծատուր Պավելի** – 1961-68թթ. Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի տնօրեն:

[2] Հետագայում վերակազմավորվեց ինստիտուտի:

[3] **Ինճիկյան Հովհաննես Գրիգորի** – 1959-71թթ. ԳԱ Արևելագիտության բաժանմունքի վարիչ:

[4] **Կիրակոսյան Ջոն Սահակի** – պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, 1964-66թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ, 1966-69թթ.՝ Ռադիոհեռարձակման և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ, 1969-75թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ, 1975-85թթ.՝ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար:

[5] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 66-73:

Անշուշտ, այս ծրագրային փաստաթղթի հիմնական նախաձեռնողն ու հեղինակը Ջոն Կիրակոսյանն էր: Այն հիմք է ծառայել ԽՄԿԿ Կենտկոմին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանի ուղարկած նամակի համար: Այս նամակը գրեթե նույնությամբ (առանձին ոճական և ոչ էական ձևափոխություններով) նույն հեղինակները ՀԿԿ Կենտկոմին հասցեագրել են նաև 1964թ. սեպտեմբերի 17-ին, որի վրա Յա. Զարոբյանը մակագրել է. «Հույժ գաղտնի: Ընկ. Խ.Խաշխայանին: Խնդրում եմ բազմացնել և բաժանել Կենտկոմի նախագահության անդամներին և անդամության թեկնածուներին: 18.09.1964թ.»: Փաստաթղթում նախ նշվում էր, որ Եղեռնը նոր ժամանակների պատմության մեջ ազգային հարցի լուծման՝ «մարդակերական ցեղասպանության քաղաքականության առաջին դրսևորումն էր»: Ապա, քննադատելով և մերկացնելով արևմտյան կայսերապաշտական տերությունների քաղաքականությունը, միանշանակ շեշտվում էր. «Հայ ժողովրդի պատմության այդ ողբերգական պահին միայն Խորհրդային Ռուսաստանը նրա իսկական բարեկամն ու փրկիչը դարձավ»[1]:

Որպես համոզիչ փաստարկ հրամցվում էր Հ.Յ.Դ. գործոնը. «Հակահեղափոխական, ազգայնական Դաշնակցություն կուսակցությունը ամեն կերպ փորձում է հարցը հակախորհրդային տրամադրությունների բորբոքման նպատակով օգտագործել»: Եվ արդյունքում, մեղադրանքներից զերծ մնալու համար, առաջարկվում էր անպայման նշել Եղեռնի 50-ամյակը. «Հայերի զանգվածային կոտորածների 50-ամյակը լռության մատնելը քաղաքականապես ձեռնտու չի լինի»[2]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 73, թթ. 105-109:
[2] Տե՛ս նույն տեղում:

Որպես կոնկրետ միջոցառում առաջարկվում էր կազմակերպել գիտաժողով[1], հրատարակել հայերի «բնաջնջման քաղաքականությունը մերկացնող փաստաթղթերի և նյութերի հավաքածու»[2], հոդված հրապարակել մոսկովյան մամուլում, կառուցել հուշահամալիր[3], նկարահանել ֆիլմ[4]:

Արդեն 1964թ. դեկտեմբերի 13-ին Յա. Զարոբյանը «1915 թվականին հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի առթիվ միջոցառումների մասին» վերնագրված նամակ հղեց ԽՄԿԿ Կենտկոմին, հարցը ներկայացրեց հիմնավոր և պատմականորեն փաստարկված կերպով: Կարևորելով սփյուռքի գոյությունը (որտեղ Եղեռնի 50-ամյակը պետք է նշվեր համընդհանուր կերպով)՝ հատկապես շեշտվում էր «հակահեղափոխական, ազգայնական «Դաշնակցություն» կուսակցությանը» հակազդելու և այն չեզոքացնելու անհրաժեշտությունը, ընդգծվում էր 200 հազար հայերի հայրենադարձության փաստը: Ներկայացնելով կոնկրետ միջոցառումների ծրագիր և կարևորելով Եղեռնի 50-ամյակի նշման գաղափարաքաղաքական նշանակությունը՝ եզրակացվում էր. «Ելնելով այդ ամենից՝ նպատակահարմար ենք գտնում այդ

[1] Գիտաժողովը կազմակերպվեց 1965թ. ապրիլի 20-ին:

[2] Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Сост. М.Нерсисян, Р.Саакян. Под ред. М.Нерсисян, Е., 1966, 1982, 1983. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1991:

[3] «Բնակչության միջոցների հաշվին կառուցել Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի զոհերի հուշարձան: Հուշարձանը պետք է խորհրդանշի հայ ժողովրդի վերածնունդը»:

[4] 1965թ. «Երևան» կինոստուդիան նկարահանել է 19 րոպեանոց «Նամակները պատմում են» վավերագրական շարժանկարը հայրենադարձների՝ հարազատներին գրած նամակների հիման վրա: Տե՛ս Հայկական կինո - Լիակատար կատալոգ, 1924-1999, Ե., 2000:

տարեթվի 50-ամյակը նշել Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակի, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո: Այդ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի այնպես, որպեսզի այն բացասաբար չազդի հարևան երկրների և մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ փոխհարաբերությունների բարելավման քաղաքականության վրա և հետապնդի նպատակ, որպեսզի ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգություն այլևս չկրկնվի»[1]:

Նամակի պատճենը՝ ժամանակավոր ծանոթանալու և անպայման վերադարձնելու պայմանով, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վ.Ախունդովի խնդրանքով ՀԿԿ Կենտկոմի հատուկ սեկտորի վարիչ Խ.Խաշխյանը 1965թ. ապրիլի 3-ին ուղարկել է՝ «անձամբ նրան հանձնելու» շեշտմամբ[2]:

Փաստաթղթի նախնական տարբերակին Յա. Զարոբյանը ձեռագրով ավելացրել է այս հատվածը. «Նշել Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների բարելավման կարևորությունը, մշակութային և տնտեսական կապերի ամրապնդման ուղղությամբ կատարված առաջին քայլերի, մասնավորապես՝ սահմանային Ախուրյան գետի վրա Ախուրյանի ջրամբարի համատեղ շինարարության վերաբերյալ ձեռք բերված համաձայնության մասին»: Ինչ խոսք, 50-ամյակի նշման թույլտվության ստացման համար մոսկովյան վերադասին համոզելու նպատակին էր ծառայելու նաև հետևյալ փաստարկը. «Մերկաց-

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 170-174:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 44, թ. 47:

նել ազգային թշնամանք հրահրող կայսերապաշտների և նրանց գործակալ դաշնակների սադրիչ գործողությունները»[1]:

Անշուշտ, Եղեռնի 50-րդ տարելիցի պետական միջոցառումների շրջանակում ամենանշանակալից և մնայուն ձեռնարկը զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցման նախաձեռնությունն էր[2]:

Այդ առումով պետք է կարևորել և արժևորել Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին ՀԿԿ Կենտկոմի նախագահության 1965թ. փետրվարի 15-ի որոշումը[3]: Այդ առթիվ արդեն 1965թ. մարտի 16-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը համապատասխան կարգադրություն արեց. «1. Սուլթանական Թուրքիայի կառավարողների կազմակերպած հայկական կոտորածների հիսնամյակի կապակցությամբ, ընդառաջելով ռեսպուբլիկայի աշխատավորների ու հասարակական կազմակերպությունների ցանկություններին, Երևանում կանգնեցնել կոթող՝ ի հավերժացումն 1915թ. եղեռնի զոհերի հիշատակի: 2. Հանձնարարել Հայկական ՍՍՌ Պետշինին հայտարարել կոթողի լավագույն նախագծի մրցանակաբաշխություն: Ժամկետ սահմանել մեկ ամիս՝ սկսած հայտարարության օրվանից: 3. Առաջարկել Երևանի քաղսովետի գործկոմին անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք կատարել և կոթողի կառուցումն ավարտել 1965թ.»[4]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 44, թ. 47:

[2] Մանրամասն տե՛ս *Մարտիրոսյան Մ.,* Փաստաթղթեր 1915թ. Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու վերաբերյալ, ԲՀԱ, 2003, թ. 5, էջ 52-62; *Վիրաբյան Ա.,* Մեծ Եղեռնի հուշահամալիրի ոդիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն, ԲՀԱ, 2008, թ. 1, էջ 292-296; *Mavian Séta,* Tzitzèrnakabèrd: histoire d'un memorial, Revue Arménienne. 2005, Juin, N. 3, pp. 8-20.

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 6, թ. 171:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 96, գ. 88, թ. 2: Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, էջ 25-26:

ՀԽՍՀ Պետշինը 1965թ. մարտի 25-ին հրապարակեց մրցանակաբաշխության հետևյալ պայմանները. 1. կոթողը կառուցել Երևանի Ծիծեռնակաբերդ կոչվող բարձունքի վրա[1]: Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում էր առաջարկել այլ տեղ՝ Երևան քաղաքի սահմաններում, 2. կոթողը պետք է մարմնավորեր ստեղծագործող հայ ժողովրդի մաքառումներով լի կյանքը, վերապրելու, առաջադիմելու անսպառ կենսունակությունը, նրա ներկան ու պայծառ ապագան՝ ի հավերժացումն 1915թ. Մեծ եղեռնի միլիոնավոր նահատակների անմար հիշատակի, 3. կոթողի կառուցման համար շինանյութի ընտրությունը կատարվում է հեղինակի կողմից: Շինարարության արժեքը սահմանվում էր մինչև 250 հազար ռուբլի, 4. մրցանակաբաշխությանը կարող էին մասնակցել ինչպես առանձին նախագծողներ, այնպես էլ նախագծող կոլեկտիվներ: Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնելու նպատակով կառուցվելիք հուշարձանի նախագծերի մրցանակաբաշխության համար ստեղծվել էր պետական հատուկ հանձնաժողով հետևյալ կազմով. Գ.Աղաբաբյան (նախագահ), Հ.Բաբայան (քարտուղար), Գ.Ահարոնյան, Ռ.Գոլթուխչյան, Գ.Խանջյան, Ռ.Խաչատրյան, Կ.Հակոբյան, Գ.Հասրաթյան, Վ.Հարությունյան, Մ.Մազմանյան, Է.Պապյան, Ս.Ստեփանյան, Հ.Հովհաննիսյան:

1965թ. մայիսի 10-ին զումարվեց ժյուրիի առաջին նիստը: Ներկայացված 78 նախագծից 9-ը չէր բավարարում մրցանակա-

[1] Մեկ ուշագրավ փաստ: 1965թ. մարտի 26-ին մի խումբ ինժեներներ և երկրաբաններ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա.Քոչինյանին առաջարկեցին Եղեռնի հուշարձանը տեղադրել Հաղթանակի զբոսայգում անգործության մատնված մոնումենտի վրա, որի գագաթից կախել մի մեծ զանգ՝ այն հնչեցնելով յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 714, ց. 4, գ. 75, թ. 21:

բաշխության պայմաններին (լրիվ չէր նախագծի կազմը, խախտված էր մակետի պահանջվող մասշտաբը կամ ներկայացման ժամկետը): Փաստորեն, մրցանակաբաշխությանը մասնակցելու համար ընդունվեց 69 նախագիծ: Բացի դրանից, ժյուրիի անունով ստացվել էր 13 նամակ, որոնց հեղինակներն իրենց զոհունակությունն էին հայտնում Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու որոշման կապակցությամբ և կոնկրետ առաջարկներ էին ներկայացնում նախագծվող կոթողի տեղադրման, բովանդակության և հորինվածքի ցանկալի ձևի վերաբերյալ: Նիստում որոշվեց քննարկման ընթացքում հնարավորին չափ հաշվի առնել նամակներում արտահայտված ցանկությունները և կարծիքները՝ ապագա կոթողի տեղադրման, ձևի, գաղափարական բովանդակության և գեղարվեստական կերպարի վերաբերյալ, ինչպես նաև հաշվի առնել նախագծերի ցուցահանդեսի հաճախորդների տպավորությունների մատյանում գրանցված կարծիքները, Երևանի ճարտարապետների ընդհանուր ժողովում նախագծերի հասարակական քննարկման ընթացքում արտահայտված ցանկությունները: Հանձնաժողովը բաց քվեարկությամբ հետագա քննարկման համար թողեց հետևյալ ծածկագրեր ունեցող նախագծերը. 1. N 12 «Կարմիր ծաղիկ», 2. N 16 «Կրակ», 3. N 22 «Ղողանջ», 4. N 42 «Ժայռ», 5. N 45 «Փյունիկ», 6. N 47 «Մուշ», 7. N 52 «ՀՍՍՌ դրոշակ», 8. N 63 «Փյունիկ»[1]:

Մայիսի 17-ի նիստում միաձայն շեշտվեց այն հանգամանքը, որ նախագծերից ոչ մեկում լիարժեք կերպով մրցանակաբաշխությամբ առաջադրված խնդիրը լուծված չէ՝ ստեղծել այնպիսի կոթող, որը հավերժացնի Եղեռնի զոհերի հիշատակը

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 714, ց. 4, գ. 75, թթ. 2-4:

և մարմնավորի հայ ժողովրդի վերածնունդը, նրա ներկան և պայծառ ապագան: Ուստի, որոշվում է առաջին մրցանակ չշնորհել, այլ 2-րդ, 3-րդ և խրախուսական մրցանակների համար քննարկման թողնել 4 նախագիծ՝ N 45 «Փյունիկ», N 47 «Մուշ», N 52 «ՀԽՍՀ դրոշակ» և N 63 «Փյունիկ»: Մտքերի փոխանակումից հետո որոշվեց 2-րդ մրցանակ շնորհել N 52 «ՀԽՍՀ դրոշակ», իսկ 3-րդ մրցանակ՝ N 63 «Փյունիկ» նախագծին, վճարելով հեղինակներին 400-ական ռուբլի, իսկ մյուս 2 նախագծերի հեղինակներին վճարել խրախուսական մրցանակ՝ 200-ական ռուբլի: Այս նախագծերի ծածկանունների ծրարները բացելուց հետո պարզվեց, որ նախագծերի հեղինակներն են՝ 1. N 52 «ՀԽՍՀ դրոշակ» - ճարտարապետներ Ա.Թարխանյան և Ս.Քալաշյան, 2. N 63 «Փյունիկ» - ճարտարապետ Ֆ.Դաբաղյան և քանդակագործ Ղ.Չուբարյան, 3. N 45 «Փյունիկ» - ճարտարապետ Է.Արևշատյան և քանդակագործ Ա.Հարությունյան, 4. N 47 «Մուշ» - ճարտարապետ Ռ.Իսրայելյան և քանդակագործ Ա.Հարությունյան[1]:

Սակայն մայիսի 19-ի նիստում ՀԽՍՀ Պետշինի և ժյուրիի նախագահ Գ.Աղաբաբյանը հայտնեց, որ Պետշինը, մինչ բաց մրցանակաբաշխություն հայտարարելը, մի շարք ճարտարապետների հանձնարարել էր կոթողի նախագծեր ներկայացնել, և առաջարկում է մրցանակաբաշխությունում մրցանակի արժանացած և նախքան մրցանակաբաշխությունը ներկայացված նախագծերից լավագույն ճանաչվածների միջև ընտրություն կատարել: Պետշինի հանձնարարությամբ նախագիծ ներկայացրին

[1] Տե՛ս *Վիրաբյան Ա.,* Մեծ եղեռնի հուշահամալիրի ոդիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն, էջ 292-296:

Ջ.Թորոսյանը, Մ.Մանվելյանը, Ս.Քյուրքչյանը, Ս.Գուրզադյանը, Ռ.Իսրայելյանը, Ա.Թարխանյանը, Ս.Կնդեխցյանը: Քննարկումից հետո որոշվեց ընտրություն կատարել N 52 «ՀԽՍՀ դրոշակ», N 63 «Փյունիկ» և Ջ.Թորոսյանի նախագծերի միջև: Ժյուրիի անդամների ընդհանուր կարծիքով՝ նախագծերից ոչ մեկն առանց էական փոփոխությունների չէր կարող հանձնարարվել իրականացման համար: Որպես այդ նախագծերի հիմնական թերություններ նշվեցին՝ 1. «Փյունիկ» - հուշարձանի վերգետնյա մասը կազմող քանդակաձեռքերի ափերի մեջ նստած մանուկը լրիվ ընդունելի չէ որպես խորհրդանիշ վերածնված Հայաստանի: 2. «ՀԽՍՀ դրոշակ» - հորինվածքը բազմաթեմային է և պատմողական բնույթ ունի: Առանձին տարրերի մեջ կա զանգվածային անհամապատասխանություն: 3. Ջ.Թորոսյանի նախագիծ - կոթողը լուծված է չափազանց վերացական ձևերով, հեռու է գաղափարական բովանդակության կոնկրետ մարմնավորումից: Ծավալն ուռճացած չափեր ունի: Ժյուրին նաև որոշում է ընտրություն կատարելիս նկատի ունենալ այն նախագիծը, որն ավելի հեշտ է վերամշակման ճանապարհով հասցնել անհրաժեշտ մակարդակի: Ընտրությունը կատարվում է քվեարկությամբ, որը տալիս է հետևյալ արդյունքը. «Փյունիկ» - 5 կողմ, 6 դեմ, 1 ձեռնպահ; «ՀԽՍՀ դրոշակ» - 2 կողմ, 7 դեմ, 3 ձեռնպահ; Ջ.Թորոսյան - 5 կողմ, 6 դեմ, 1 ձեռնպահ: Փաստորեն, ոչ մի նախագիծ հավանության չի արժանանում, և որոշվում է ընտրության հարցը հետաձգել մինչև հաջորդ նիստ, այդ ընթացքում հնարավորություն տալ ժյուրիի անդամներին շարունակել ուսումնասիրությունը և համեմատական վերլուծությունը[1]:

[1] Տե՛ս *Վիրաբյան Ա.,* Մեծ Եղեռնի հուշահամալիրի ոդիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն, էջ 292-296:

1965թ. հունիսի 7-ի նիստում ժյուրիի անդամներն ընտրված երեք նախագծի վերաբերյալ կատարեցին հետևյալ քվեարկությունը. 1. «ՀԽՍՀ դրոշակ» - 7 կողմ, 2. «Փյունիկ» - 1 կողմ, 3. Ջ.Թորոսյանի նախագիծ - 3 կողմ: Ժյուրիի մեկ անդամ քվեարկությանը չմասնակցեց: Առավել շատ ձայներ ստացած նախագծի հեղինակներին համապատասխան մասնագիտական և կառուցողական դիտողություններ և առաջարկներ արվեցին[1]:

Հուշարձանի նախագծի վերջնական ընտրությունը հստակ պատկերացնելու համար մեջբերենք Ճարտարապետների միության նախագահ, ժյուրիի անդամ Վարազդատ Հարությունյանի ուշագրավ վկայությունը.

«Վերջնական քննարկման մնացել էին երկու նախագիծ: Ես երկուսն էլ չէի հավանում: Իմ կարծիքին էին մրցութային հանձնաժողովի անդամներ Ռ.Խաչատրյանը[2] և Կ.Հակոբյանը[3]՝ երեքս հանձնաժողովում փոքրամասնություն էինք: Մի երեկո, երբ պիտի վերջնական քննարկման թողնված երկու նախագծերից մեկն ընտրեինք, հայտնվեցին հանրապետության ղեկավարները՝ Յակով Զարոբյանը, Անտոն Քոչինյանը, Նագուշ Հարությունյանը և ուրիշներ:

Չգիտեմ ինչու Քոչինյանն ինձ հարցրեց.

- Այս երկուսից ո՞րը կընտրեիր:

- Ոչ մեկը,- պատասխանեցի:

- Ինչո՞ւ:

- Նախ դրանք չեն համապատասխանում մրցութային

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 714, ց. 4, գ. 75, թթ. 12-13:

[2] **Ռոբերտ Խաչատրյան** – ՀԽՍՀ կուլտուրայի մինիստր:

[3] **Կորյուն Հակոբյան** – «Հայպետնախագիծ» ինստիտուտի տնօրեն:

ծրագրին, չեն խորհրդանշում հայրենիքի վերածնության գաղափարը, ապա՝ անհասկանալի կլինեն այցելուներին:

- Իսկ դու ո՞րը կընտրեիր,- հարցրեց Քոչինյանը:

- Որը որ ես կընտրեի, քննարկումից հանված է:

Եկողները խնդրեցին ծանոթացնել այդ նախագծին:

Սեղանին դրվեց դրա մանրակերտը:

- Ինչո՞ւմն է սրա առավելությունը,- հարցրեց Զարոբյանը:

- Պարզ ու հասկանալի լուծում ունի,- պատասխանեցի,- խոնարհված խաչքարաձև քարերը խորհրդանշում են սուգը զոհվածների հիշատակին, իսկ վերասլաց կոթողը՝ վերածնունդ: Դրանցով հեղինակները լիովին արտահայտել են մրցութային ծրագրի պահանջները: Գաղափարը հասկանալի կլինի ամեն տեսակ այցելուի, բացատրելու կարիք չի լինի, քանզի բացատրությունը տրված է ճարտարապետության լեզվով:

Եկողները հավանություն տվեցին ու մեկնեցին: Մրցութային հանձնաժողովի անդամներն այս անգամ քվեարկեցին հօգուտ իրենց մերժած նախագծի: Երբ փակ ծրարը բացեցինք, պարզվեց, որ հեղինակներն են Արթուր Թարխանյանն ու Սաշուր Քալաշյանը»[1]:

Չնայած հուշահամալիրի նկատմամբ կուսակցական-պետական բարձր հոգածությանը և համայն հայության անհամբեր սպասելիքին, այդուհանդերձ, նրա շինարարությունը ձգձգվեց, և նախատեսված 1965-ի փոխարեն ավարտվեց միայն 1967թ.: 1965թ. նոյեմբերի 23-ին Պետշինը որոշեց վերանայել հուշարձանի նախագիծը՝ որոշ փոփոխություն կատարելով: 1966թ. մայի-

[1] Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, էջ 86-88: Ժամանակակիցները Անտոն Քոչինյանի մասին: Ե., 2013, էջ 109-10:

սի 11-ին Երևանի քաղխորհուրդը հաստատեց շինարարության վերջնական նախահաշիվը՝ 399,3 հազ. ռուբլի գումարով: 1967թ. կրկին վերանայվեց շինարարության նախահաշիվը, և այն ավելացվեց 68 հազ. ռուբլով, բացի դրանից՝ շրջակայքի բարեկարգման համար նախատեսվեց 284,9 հազ. ռուբլի, իսկ ավտոճանապարհի համար՝ 92,6 հազ. ռուբլի: Համալիրի շինարարությունն իրականացրեց «Երքիմշինտրեստ»-ը՝ Արտավազդ Օրդուխանյանի գլխավորությամբ:

Վերջապես, 1967թ. նոյեմբերի 29-ին, հազարավոր քաղաքացիների ներկայությամբ, հանդիսավոր պայմաններում, Ծիծեռնակաբերդում բացվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը: ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Քոչինյանի[1] գլխավորությամբ ներկա էին ՀԽՍՀ կուսակցական-պետական ողջ ղեկավարությունը, մտավորականության սերուցքը: Միջոցառումը հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվեց ողջ հանրապետությամբ:

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմում զոհված միլիոն հայերի հիշատակի հուշահամալիրի բացմանը տրվեց ծիսական խորհուրդ՝ համատեղվեց խորհրդային կարգերի հաստատման օրվա հետ, դրանով իսկ՝ համազգային աղետը եզրափակելով համաժողովրդական վերածնունդով: Սրանով նաև մոսկովյան վերադասին ՀԽՍՀ նոր ղեկավարությունը յուրօրինակ հավատարմության հստակ ակնարկ էր անում: Ըստ ընդունված արարողակարգի՝ Երևանի քիմկոմբինատի ապարատավար, սոցաշխատանքի հերոս Ս.Պետրոսյա-

[1] **Քոչինյան Անտոն Երվանդի** – 1952-66թթ.՝ Նախարարների խորհրդի նախագահ, 1966-74թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար:

նը, Շահումյանի կոլտնտեսության կթվորուհի, սոցաշխատանքի հերոս Ա.Ավետիսյանը, Պ.Սևակը, բժշկական գիտությունների դոկտոր Զ.Դոլաբչյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Թ.Ալթունյանը, ՀԼԿԵՄ Երքաղկոմի քարտուղար Բ.Վարդանյանը Երևանի քիմկոմբինատի քուրայից վառված և զրահամեքենայով Ծիծեռնակաբերդ բերած ջահը հանձնեցին Ա.Քոչինյանին, որն էլ վառեց հավերժական կրակը: Ներածական խոսքում ՀԿԿ Երևանի քաղկոմի 1-ին քարտուղար Լ.Ղարիբջանյանն ասաց. «Սովետական իշխանության հաղթանակը մեր ժողովրդին փրկեց վերահաս իսպառ բնաջնջումից և բացեց լուսաշող ու պայծառ ապագա: Մեր ժողովրդի լավագույն վարպետների հմուտ ձեռքերով այդ հոյակերտ հուշարձանը արդեն կանգնել է Հայաստանի մայրաքաղաքում, որպես անշիրիմ նահատակների հավերժ կենդանի հուշարձան, որպես հայ ժողովրդի վերածննդի պայծառ խորհրդանիշ»[1]:

ԽՍՀՄ և ՀԽՍՀ հիմների հնչեցումից հետո ժամանակին համահունչ հանդես եկավ Ա.Քոչինյանը. «Հայ ժողովրդի պատմության այդ օրհասական օրերին միայն բոլշևիկյան կուսակցությունն էր, որ տեսնում և նախանշում էր փրկության միակ իսկական ուղին՝ կապելով այն Ռուսաստանի պրոլետարիատի սոցիալական պայքարի, հեղափոխական շարժման հետ: Դառն ճակատագիր էր սպասում ամբողջ Հայաստանին, եթե մեր պատմության այդ օրհասական պահին Ռուսաստանում չհաղթանակեր Հոկտեմբերյան հեղափոխությունը: Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը փրկեց մեր ժողովրդին ազգովին բնաջնջման վտանգից, ավետեց մեր ժողովրդի հրաշք

[1] Մանրամասն տե՛ս «Սովետական Հայաստան», 1967, նոյեմբերի 30:

վերածնունդը: Հայ ժողովրդի աշխարհով մեկ սփռված տարագիր զավակները, որոնք հեռավոր երկինքների տակ ապրում էին հայրենիքի կարոտով, բռնեցին հայրենիք վերադառնալու ուղին: Հայ ժողովուրդը մի անգամ ևս իր երախտագիությունն ու սերն է արտահայտում սովետական բոլոր ժողովուրդներին, մասնավորապես ռուս մեծ ժողովրդին, որոնց եղբայրական օգնությամբ միայն հնարավոր դարձավ նրա վերածնունդը: Այս կոթողը բողոք է ոչ միայն անցյալի, այլև այսօրվա իմպերիալիստական քաղաքականության դեմ, ցեղասպանության ամեն մի դրսևորման դեմ: Հուշարձան, որը խոր հարգանքի տուրք հանդիսանալով թուրքական ջարդարարների ոճրագործության զոհերի հիշատակին, միաժամանակ խորհրդանշում է ժողովրդի սոցիալիստական վերածնունդը»[1]:

Վ.Համբարձումյանն էլ հավաստեց. «Այսօր բացվող կոթողը միևնույն ժամանակ խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնունդը և նրա բազմաթիվ հաղթանակները: Շինարար, ստեղծագործ աշխատանք և կրկին աշխատանք, անձնվեր աշխատանք՝ սա է մեր կյանքի իմաստը և ապագա հաջողությունների երաշխիքը»[2]:

1965թ. մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատեց «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման միջոցառումների» քարոզչագործնական աշխատանքի 15 կետանոց ծրագիր: Որպես առաջնահերթություն շեշտվեց հետևյալը. «Աշխատավորության շրջանում անցկացնել նպատակասլաց բացատրական աշխատանք, որպեսզի կոտորածի 50-ամյակի հետ կապված միջոցառումներն աշխատավորության

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1967, նոյեմբերի 30:
[2] Տե՛ս նույն տեղում:

լայն խավերի վրա ուժեղացնեն գաղափարախոսական ազդեցությունը, վառ ցույց տան հայ ժողովրդի ճակատագրում խորհրդային իշխանության պատմական դերը, լենինյան ազգային քաղաքականության իրականացման բարենպաստ ազդեցությունը, խորհրդային պետության կողմից անշեղորեն իրականացվող խաղաղության և խաղաղ համագոյակցության քաղաքականության իմաստությունը և մարդասիրությունը: Թուրքիայում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի տարեթիվը պետք է նշել ցեղասպանության մարդատյաց քաղաքականության դատապարտմամբ: Այն պետք է դասակարգային, մարքս-լենինյան դիրքերից, կենսահաստատ լավատեսության դիրքերից նշվի: Մշակել և իրականացնել բուրժուական գաղափարախոսության դեմ հակաքարոզչության ուժեղացման միջոցառումներ»[1]:

Ըստ հաստատված ծրագրի՝ անհրաժեշտ համարվեց իրականացնել հետևյալը. ՀԽՍՀ բոլոր քաղաքներ և շրջաններ Կենտկոմի քարոզչական խմբերի ուղարկում, Երևանի ուսանող երիտասարդության հետ ՀԽՍՀ ղեկավարության հանդիպումների և ձեռնարկություններում դասախոսությունների կազմակերպում, զանգվածային լրատվության միջոցներով նահատակ գործիչների և ցեղասպանության քաղաքականության դատապարտման վերաբերյալ նյութերի հրապարակում, սփյուռքահայ մամուլում Խորհրդային Հայաստանի նվաճումների քարոզում, գիտական նիստի և հասարակայնության ներկայացուցիչների ժողովի անցկացում: Այս ծրագրի բոլոր կետերը, բացի Եղեռնի զոհերի հիշատակի կոթողի կառուցումից, ընդհանուր առմամբ

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թթ. 1-2, 4-5, 8-10:

իրականացվեցին: Անհրաժեշտ է նշել, որ այդ ուղղությամբ շրջանային և հատկապես հանրապետական մասշտաբի որոշ պաշտոնյաների ու մարմինների կողմից կազմակերպչական ու քարոզչական առումներով թերացումներ եղան: Ընդ որում, ավելի հաճախ ենթակայական, քան թե առարկայական պատճառներով՝ վարչահրամայական գործելակերպի չարաշահման արդյունքում:

1965թ. ապրիլի 20-ին ԵՊՀ-ում անցկացվեց Եղեռնի 50-ամյակին նվիրված ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ գիտական նստաշրջան, որը բացեց ԳԱ նախագահ Վ.Համբարձումյանը: Հիշատակենք ելույթների թեմաները. 1. Ա.Եսայան, «Հայ ժողովրդի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ և միջազգային իմպերիալիզմը», 2. Մ.Մկրյան, «Եղեռնի զոհ հայ մտավորականները», 3. Գ.Ստեփանյան, «Արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները», 4. Ե.Սարգսյան, Ռ.Սահակյան, «Եղեռնի պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ», 5. Կ.Ուդումյան, «Ժողովուրդների լենինյան բարեկամության անհաղթ ուժը», 6. Գ.Գալոյան, «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ ժողովրդի վերածնունդը»[1]:

Վ.Համբարձումյանն ասաց. «Հիսուն տարի առաջ սուլթանական Թուրքիայի կառավարողները կատարեցին մի այնպիսի ոճրագործություն, որը դարձավ մարդկային պատմության սև էջերից մեկը: Նախապես մշակված ծրագրով երիտթուրքական կառավարությունը կոտորեց ավելի քան մեկ ու կես միլիոն հայ,

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 21: Հակոբյան Լ., Գիտական սեսիա՝ նվիրված մեծ եղեռնի 50-ամյակին, ՊԲՀ, 1965, թ. 2, էջ 276-277: Դ. Վ., Գիտական նստաշրջան՝ նվիրված եղեռնի 50-ամյակին, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 5, էջ 96-97:

ամայացրեց Արևմտյան Հայաստանը: Կարող էր իրագործվել հայ ժողովրդին ամբողջապես ոչնչացնելու հրեշավոր ծրագիրը, եթե չլինեին Լենինն ու Մեծ հոկտեմբերը»[1]:

Նույն գաղափարական ոգով էին ավարտվում բոլոր զեկույցները: Գ.Գալոյանը հատկապես շեշտում էր. «Հայ ժողովուրդը իր գոյության համար պարտական է խորհրդային իշխանությանը: Մեր ժողովրդի համար ամենածանր պահին մեզ օգնության հասավ ռուս մեծ ժողովուրդը»: ԵՊՀ ռեկտոր Հր.Բատիկյանի եզրափակիչ խոսքը գրեթե տոնական ավարտ ունեցավ. «Փառք և երիցս փառք Կոմունիստական կուսակցությանը, Մեծ հոկտեմբերին, որոնք բուժեցին հայ ժողովրդի վերքերը, նրան ներարկեցին ստեղծարար ոգի, դարբնեցին նրա հոյակապ ապագան»[2]:

Եղեռնի 50-ամյակին առնչվող ցանկացած հարց, մանավանդ, երբ այն վերաբերում էր գաղափարաքաղաքական կողմին, գտնվում էր ՀԽՍՀ ղեկավարության ուշադրության կենտրոնում: Օրինակ, 1965թ. ապրիլի 23-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատեց ՀԽՍՀ պաշտոնական տեսակետն արտահայտող Գ.Գալոյանի և Ջ.Կիրակոսյանի հոդվածը և հանդիսավոր նիստում Վ.Համբարձումյանի զեկուցումը:

Նշյալ հոդվածում Եղեռնը որակվեց որպես «զանգվածային տեղահանում ու բնաջնջում, մարդկության պատմության մեջ աննախադեպ ոճրագործություն, նոր ժամանակների պատմության ամենամասսայական գենոցիդի քաղաքականության սկիզբ»: Ժամանակի գաղափարական ոգուն հարիր էր եզրահանգումը. «Միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, կոմունիստների լենինյան պարտիան հայ ժողովրդին

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 21:
[2] Նույն տեղում:

փրկեցին համազգային աղետից: Սովետական իշխանության հաստատումով դրվեցին հայ ժողովրդի բովանդակ կյանքի վերածնության հիմքերը: Հայ ժողովուրդը երախտապարտ է ռուս ժողովրդին՝ իր անշահախնդիր բարեկամին և ավագ եղբորը»[1]:

Իր հերթին, ՀԽՍՀ գլխավոր պաշտոնաթերթ «Սովետական Հայաստան»-ը հարցը ներկայացրեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով. «Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում իր նոր կյանքն է կառուցում հայ ժողովուրդը: Զինվորագրվելով լենինյան պարտիայի գաղափարներին, ռուս մեծ ժողովրդի, եղբայրական մյուս ժողովուրդների անշահախնդիր օգնությամբ Հայաստանի աշխատավորներն անցած քառասունհինգ տարիների ընթացքում անճանաչելիորեն փոխեցին իրենց հինավուրց լեռնաշխարհի դեմքը: Այս օրերին մեր ժողովուրդը նշում է իր պատմության ամենածանր շրջանի՝ օսմանյան Թուրքիայի կառավարողների կողմից 1915 թվին իրականացրած եղեռնի տարելիցը: Եղբայր ժողովուրդների կողքին, եղբայրությանն ապավինած, եղբայրությամբ հզոր ու երջանիկ ապրում ու ստեղծագործում է հայ ժողովուրդը»[2]:

ՀԽՍՀ ղեկավարության հոգածությամբ հիմք դրվեց ցեղասպանագիտության զարգացմանը, որի հիմնադիրն իրավամբ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանն էր: Ասվածի ակնհայտ ապացույցը նրա արդեն կոթողային դարձած հանրահայտ ժողովածուի հրատարակումն էր[3]:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թ. 74: Տե՛ս *Գալոյան Գ., Կիրակոսյան Ջ.,* Արհավիրքից վերածնունդ, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24:
[2] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24:
[3] Տե՛ս *Պողոսյան Վ.,* «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի լույս ընծայման նախապատմության շուրջ, ՊԲՀ, 2010, թ. 1, էջ 234-44:

Առանձնակի կարևորվում էր ԽՄԿԿ պաշտոնաթերթ «Պրավդա»-ում Եղեռնի պատշաճ ներկայացումը, որը հանձնարարվեց Մ.Ներսիսյանին: Նրա հոդվածը ոմն Ուշակովի համահեղինակությամբ և լրիվ խեղաթյուրված ձևով հրապարակվեց «Պրավդա»-ում: Խորհրդային գրաքննության «շնորհիվ» թեման ամփոփվել էր երկու պարբերության մեջ. «Զգտելով ինչ գնով էլ լինի իրագործել իրենց պլանները Մերձավոր Արևելքում, Գերմանիայի մոնոպոլիստական խմբերը բացեիբաց գենոցիդ հրահրեցին Թուրքիայում: Հիսուն տարի առաջ երիտթուրքերի կառավարությունը բնաջնջեց մոտ մեկ ու կես միլիոն հայ: Սկզբում գաղտնի և ուխտադրուժ կերպով ոչնչացվեցին հայ մտավորականությունը և տղամարդ բնակչությունը: Ապա կոտորածի ոգեշնչողները անցան կանանց և երեխաների մեթոդիկ ոչնչացմանը: Հարյուր հազարավոր հայեր ստիպված եղան փախչել օտար երկրներ: Շատերը զոհվեցին, փորձելով փրկվել կատաղի հետապնդումներից: Այդ եղեռնի կազմակերպիչները ոչ քիչ աղետ պատճառեցին նաև թուրք ժողովրդին: Իրենց ոճրագործությունների համար նրանք արժանացան Թուրքիայի բոլոր առաջադեմ ուժերի, երկրի աշխատավորական լայն մասսաների ատելությանը: Առաջին համաշխարհային պատերազմում գերմանական իմպերիալիզմի ջախջախումից հետո թուրք ժողովուրդը նրանց վռնդեց քաղաքական ասպարեզից: Նոր Թուրքիան, վարելով հակաիմպերիալիստական քաղաքականություն, բարիդրացիական հարաբերություններ հաստատեց երիտասարդ սովետական պետության հետ: Սովետական ժողովուրդը անկեղծորեն ձգտում է, որ այդ հարաբերությունները

հաջողությամբ զարգանան, ավելի ու ավելի բարեկամական դառնան»[1]:

Ինքնին խոսուն է այն հանգամանքը, որ Յա. Զարոբյանը շատ էր հիասթափվել ու նեղվել «Պրավդա»-ում Մ.Ներսիսյանի հոդվածի ամբողջովին աղավաղումից[2]:

Հայոց ցեղասպանության պատմության տարբեր հարցերի վերաբերյալ Մ.Ներսիսյանը հեղինակել է մի շարք արժեքավոր աշխատություններ[3]:

1965թ. նախորդող և հաջորդող տարիներին հրատարակվեցին բազմաթիվ փաստաթղթային հրապարակումներ, աշխատություններ և հոդվածներ[4]:

Ինչ խոսք, Եղեռնի 50-ամյակի շրջանակներում, գործնականից զատ, նաև պատմագիտական տեսանկյունից հարկավոր է կարևորել Ջոն Կիրակոսյանի[5] դերակատարությունը: Առանձնահատուկ պետք է շեշտել նրա «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ.» աշխատության խաղացած կարևոր դերն ազգային զարթոնքի և հատկապես ցեղասպանագիտության զարգացման առումներով:

Միաժամանակ, Խորհրդային Հայաստանում սկիզբ դրվեց նաև սփյուռքագիտության տարածմանը՝ տեղեկատվական և

[1] Տե՛ս *Нерсисян М., Ушаков Н.,* Геноцид самое тяжелое преступление против человечества, «Правда», 1965, 25 апреля.

[2] Տե՛ս *Заробян Н.Я.,* Яков Заробян и его эпоха, Ер., 2008, с. 133.

[3] Տե՛ս օգտագործված գրականության ցանկում:

[4] Տե՛ս օգտագործված գրականության ցանկում:

[5] Եղեռնի 50-ամյակին նվիրված նրա հոդվածները մասնավորապես տե՛ս ՀԱԱ, ֆ. 1149, ց. 1, գ. 36: Նրա հասարակական-քաղաքական և հրապարակախոսական գործունեության մասին մանրամասն տե՛ս Ջոն Կիրակոսյան. անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում, Ե., 2009:

գիտական առումներով, ինչը հետագայում ոլորտի զարգացման իրական հիմք դարձավ[1]:

1965թ. ապրիլի 24-ին Օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ «1915 թվականի և Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Երևան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էր ՀԽՍՀ ողջ կուսակցական-պետական ղեկավարությունը, Վազգեն Ա կաթողիկոսը: Արժե հիշատակել, որ ժողովին հնարավոր էր մասնակցել միմիայն ՀԿԿ Կենտկոմի տրամադրած հատուկ հրավիրատոմսերով:

Ժողովը հակիրճ ճառով բացեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ն.Հարությունյանը[2]: Նա մասնավորապես ասաց. «Ամեն մի ժողովրդի կյանքում կան պատմական բախտորոշ իրադարձություններ, որոնք հավիտյան դրոշմվում են նրա սրտում և դառնում են այդ ժողովրդի կամ ամենամեծ ու խոր ազգային վիշտը, կամ նրա ամենավսեմ, ամենանվիրական, համազգային ուրախության տոնը: Բազում դարերի տարիք ունեցող հայ ժողովրդի կյանքում այդպիսի երկու հակոտնյա իրադարձություններ են՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարված մեծագույն աղետն ու անլուր ողբերգությունը և լենինյան դարաշրջանում ազատագրումը, հզոր վերածնունդն ու ծաղկումը: Հիսուն ապրիլ է անցել այն մահաբեր օրերից, երբ սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանները, օգտագործելով համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ընձեռած հնարավորությունները, սկսեցին իրագործել արև-

[1] Տե՛ս օգտագործված գրականության ցանկում:

[2] **Հարությունյան Նազուշ Խաչատուրի** – 1963-75թթ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, ակադեմիկոս:

մտահայության իսպառ բնաջնջման իրենց վաղուց մշակած ոճրապարտ ծրագիրը: Պատմական Հայաստանի ավանդական հողը ողողվեց նրա հինավուրց և ստեղծարար ժողովրդի արյունով: Ժողովրդասպան բռնակալ դահիճները ավերեցին ու թալանեցին երկիրը հայոց, սրախողխող արին և անապատներում մեռցրին նրա մեկ ու կես միլիոն զավակներին և նույնքան հայերի էլ պոկեցին իրենց մայրենի հողից ու հողմացրիվ արին ողջ աշխարհով մեկ, ուր դեգերում են նրանք մինչև հիմա, հոգիներում պահած իրենց կորցրած հայրենիքի անհուն կարոտը: Մենք ամբողջ հոգով ու էությամբ դատապարտում ենք գենոցիդը – ժողովրդասպանությունը: Գենոցիդի համար չկա և չի կարող լինել ոչ որևէ իրավական արդարացում, ոչ էլ որևէ հայցային վաղեմություն: Գենոցիդը, լինի դա 1915թ. Տեր-Զորում կամ Եփրատի ափերին հայերի զարհուրելի սպանդը, թե Երկրորդ համաշխարհային պատերազմում մյուս ժողովուրդների տանջամահ կոտորածները Մայդանեկում և Բուխենվալդում, պետք է մշտապես ու անվերապահ դատապարտվի, իսկ նրա կիրառողները պետք է պատժվեն ողջ մարդկության կողմից:

Հայ ժողովուրդն այսօր առաջին անգամ արժանավայել նշում է Մեծ եղեռնի տարելիցը, բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը: Մենք նշում ենք տարելիցը ոչ թե ողբով ու լացով, այլ մեր հայրենիքի վերածննդի, նրա բեղուն ներկայի և առավել շքեղ ապագայի անպարտելիության վեհ գիտակցությամբ, այն վսեմ գիտակցությամբ, որ ոչ մի ուժ, սոցիալիստական հասարակարգից բացի, չի բերի մեզ այդ լուսաբաղձ ապագան: Դատապարտելով գենոցիդի մարդակեր քաղաքականու-

թյունը, դատապարտում ենք ոչ թե աշխատավոր ժողովրդին, այլ բռնակալ դահիճներին, այդ քաղաքականությունն ստեղծողներին և նրա գործադրողներին: Հայ ժողովուրդը նշում է այսօր Մեծ եղեռնի 50-ամյակը անվտանգ ու ապահով, որովհետև Հայաստանը այլևս պետականությունից զուրկ մի խլյակ չէ, այլ Սովետական Սոցիալիստական հզոր Միության ամրակուռ ու բարգավաճ ռեսպուբլիկաներից մեկը: Հայ ժողովրդի բազում դարեր մղած պայքարի փառապսակը, նրա բյուրավոր զոհերի հիշատակը հավերժացնող ամենավսեմ ու վեհատես կոթողը դա մեր վերածնված Սովետական Հայաստանն է, ամբողջ աշխատավոր հայերի մայր հայրենիքը»[1]:

Ժողովում «Եղեռն և վերածնունդ» թեմայով հանգամանալից, պատմական համապատկերում և արդիական գնահատականով զեկուցեց Վ.Համբարձումյանը[2]:

Պատմելով կոտորածների, ինքնապաշտպանական մարտերի, եվրոպական տերությունների հանդուրժողական դիրքի մասին՝ նա ևս առանձնահատուկ շեշտում էր խորհրդային իշխանության և ռուս ժողովրդի ունեցած դրական դերակատարությունը. «Այսօր մենք հավաքվել ենք այս դահլիճում հարգելու 1915թ. եղեռնի զոհերի հիշատակը և նշելու Հոկտեմբերյան մեծ հեղափոխության շնորհիվ կատարված հայ ժողովրդի այն հոյակապ և հրաշալի վերածնունդը, որի վկաներն ենք բոլորս: Վերջապես, դարերի ընթացքում պետականությունից զրկված հայ

[1] Տե՛ս *Հարությունյան Ն.Խ.,* Բացման խոսք 1915թ. Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հանդիսավոր նիստում, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 25; ՊԲՀ, 1965, թ. 2, էջ 37-40:

[2] Տե՛ս *Համբարձումյան Վ.Հ.,* Եղեռն և վերածնունդ, ՊԲՀ, 1965, թ. 2, էջ 41-54; «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 4, էջ 23-36:

ժողովուրդը դարձավ մեծ Միության իրավահավասար անդամներից մեկը, նրա մեջ արմատավորվեց պետականության գիտակցությունը: Սփյուռքի հայության գոյատևման հիմնական գործոններն են Սովետական Հայաստանի հաջողությունները և հայրենադարձությունը, որը հայրենիք վերադառնալու հույս է ներշնչում օտարության մեջ տառապող բոլոր հայերին: Մենք այստեղ, Սովետական Հայաստանի քաղաքացիներս, պետք է խորապես գիտակցենք, թե որքան մեծ լինեն մեր աշխատանքային, ստեղծագործական նվաճումները, այնքան ավելի շուտ բոլոր հայրենասեր հայերը կհավաքվեն իրենց հայրենիքում՝ Սովետական Հայաստանում:

Մեծ եղեռնի 50-ամյակը և Հայկական Սովետական Հանրապետության 45-ամյակը դիմավորում ենք խաղաղ պայմաններում, սովետական ժողովուրդների ապահով ընտանիքում: Մեր աշխատավոր ժողովրդի լայն զանգվածները գոհունակությամբ ընդունեցին Սովետական Հայաստանի կառավարության որոշումը եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնելու նպատակով Երևանում կոթող կանգնեցնելու մասին: Այս որոշումը ցույց է տալիս, թե ինչպիսի հարգանք են տածում զոհվածների հիշատակի հանդեպ մեր ժողովուրդը և հարազատ կառավարությունը: Սակայն մեր անթիվ զոհերի հիշատակի իսկական հավերժացումը մեր ժողովրդի մեծ վերածնունդն է, մեր այսօրվա և վաղվա շինարարական աշխատանքն է, հանուն հանրապետության տնտեսական ու մշակութային բարգավաճման և բնակչության կենսամակարդակի բարձրացման: Միայն սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, ռուս մեծ

ժողովրդի եղբայրական օգնությունը փրկեցին հայ ժողովրդին իսպառ բնաջնջումից և նրա համար բացեցին դեպի կոմունիզմ տանող լուսաշող ու պայծառ ուղի: Մեր անթիվ զոհերի անմոռաց հիշատակը միշտ կոգևորի մեզ խաղաղ շինարարական աշխատանքում, կոգևորի կառուցելու մեր սքանչելի երիտասարդ երկիրը՝ Հայաստանը»[1]:

Ժողովի մասնակիցները մեկ բոպե լռությամբ հոտնկայս հարգեցին Եղեռնի զոհերի հիշատակը: Ժողովը բացվեց և փակվեց ԽՍՀՄ ու ՀԽՍՀ պետական հիմներով: Տեղին է նշել, որ ելույթներն ավարտվում էին խորհրդային ավանդույթներին հարիր բուռն ծափահարություններով, իսկ ծրագրավորված համերգը տեղի չունեցավ միայն շենքի առջև հավաքված ցուցարարների բողոքից հետո:

Այս ժողովն ավելի շատ սովորական դարձած «հանդիսավոր նիստ» էր, քան սգո և ոգեկոչման երեկո: Հարկ է նշել, որ արդեն իսկ նման ժողովի գումարումը, երբ այդպիսի միջոցառումներն, առանց բացառության, կատարվում էին կոմունիստական տոների կամ հոբելյանների առիթով, անտարակույս, ուներ կարևոր նշանակություն. իր կազմակերպական թերություններով հանդերձ՝ այն ողջ ԽՍՀՄ-ում առաջին ոչ խորհրդային միջոցառումն էր, այն էլ՝ զուտ ազգային թեմայով:

[1] Տե՛ս *Համբարձումյան Վ.Հ.,* Եղեռն և վերածնունդ, ՊԲՀ, 1965, թ. 2, էջ 41-54; «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 4, էջ 23-36:

3. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՈՒՅՑԵՐԸ

1965թ. ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցան համազգային երթեր և հանրահավաքներ, որոնց մասնակցեցին հազարավոր հայորդիներ: Ցույցը սկսվեց առավոտյան ժամը 10-ին Լենինի հրապարակում: Ելույթ ունեցան ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա.Քոչինյանը, ԳԱ նախագահ Վ.Համբարձումյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար Բ.Մուրադյանը, Գրողների միության նախագահ Էդ.Թոփչյանը, Ս.Խանզադյանը:

Ցուցարարները ՀԽՍՀ ղեկավարությանը փոխանցեցին ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Նախարարների խորհրդին և Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված նամակ, որտեղ պարունակվում էր հետևյալ խնդրանքը. «1. Հայկական ԽՍՀ-ին հանձնել Ղարաբաղը, Նախիջևանը և Խորհրդային Միության տարածքում հայերով բնակեցված պատմականորեն հայկական հողերը, 2. հայրենադարձ հայերին բնակեցնել Նախիջևանում, քանզի Խորհրդային Հայաստանի բնակչության խտությունը հասել է ճգնաժամային մակարդակի, 3. ազատել յոթ հայրենասերներին[1], 4. արագացնել արտասահմանից հայերի հայրենադար-

[1] 1963թ. դեկտեմբերի վերջին և 1964թ. հունվարին ձերբակալված ու «հակախորհրդային գործունեության համար» 1964թ. հունիսին դատապարտված, «յոթ հայրենասերներ» անունը ստացած երիտասարդներն էին. 1. Հովհաննիսյան Մերուժան

ձությունը»: Նամակի վերջում ասվում էր. «Նշելով մեր խորին սուգը՝ մենք միաժամանակ արտահայտում ենք մեր ի սրտե շնորհակալությունը ԽՄԿԿ Կենտկոմին և Խորհրդային կառավարությանը մեր ներկայի ու լուսավոր ապագայի համար»:

Այնուհետև ցուցարարները «2.000.000», «Արդար լուծեք հայոց հարցը», «Ազատություն յոթ հայրենասերներին» պաստառներով և Կոմիտասի դիմանկարով անցել են հետևյալ երթուղով. Լենինի հրապարակ, Ամիրյան փողոց, Լենինի պողոտա, Կիրովի փողոց, Տերյան փողոց, Պոլիտեխնիկական ինստիտուտ, Աբովյան փողոց, Չարենցի փողոց, ԵՊՀ, Սայաթ-Նովայի փողոց, Նալբանդյան փողոց, Օրջոնիկիձեի պողոտա, Կոմիտասի անվան Պանթեոն (այստեղ մասնավորապես ելույթ ունեցան ԵՊՀ դասախոս Վարագ Առաքելյանը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը), որտեղ ելույթներ ունեցան մտավորականության

Արտաշեսի, ծնված 1940թ., Էջմիածնում գտնվող ԳԱ տպարանի սրբագրիչ, դատապարտվել էր 5 տարվա ազատազրկման; 2. Ամիրջանյան Խաչատուր Ջումշուդի, ծնված 1924թ., Երևանի անասնաբուծա-անասնաբուժական ինստիտուտի «Կադրերի համար» թերթի պատասխանատու քարտուղար, դատապարտվել էր 5 տարվա ազատազրկման; 3. Բաբայան Վիգեն Ասատուրի, ծնված 1940թ., ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանող, դատապարտվել էր 5 տարվա ազատազրկման; 4. Սաֆարյան Խաչիկ Էլոյի, ծնված 1932թ., Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի հեռակա բաժանմունքի մեթոդիստ, դատապարտվել էր 4 տարվա ազատազրկման; 5. Եղիյան Գրիգոր Հակոբի, ծնված 1926թ. Երուսաղեմում, Եգիպտոսից հայրենադարձվել էր 1948թ., Էջմիածնի Հոգևոր ճեմարանի անգլերեն լեզվի և պատմության ուսուցիչ, սարկավագ, դատապարտվել էր 2 տարվա ազատազրկման; 6. Քիրամիջյան Կարապետ Պողոսի, ծնված 1940թ. Բեյրութում, Սիրիայից հայրենադարձվել էր 1947թ., ԵՊՀ քիմիական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող, դատապարտվել էր 2 տարվա ազատազրկման; 7. Կակոսյան Էդուարդ Վարդանի, ծնված 1936թ., Ղափանի շրջանի Եղվարդ գյուղի դպրոցի ուսուցիչ, դատապարտվել էր 1,5 տարվա ազատազրկման: Տե՛ս *Մանուկյան Ա.,* Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-88թթ., Ե., 2005, էջ 35-38; Այլախոհության դրսևորումները Հայաստանում 1950-70-ական թվերին, ԲՀԱ, 2003, թ. 5, էջ 189-211; *Հարությունյան Վ.,* Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Ե., 2014, էջ 31-48:

ներկայացուցիչներ, երիտասարդներ: Ապա վերադարձել են Օպերայի թատրոն:

Գլխավոր պաստառի վրա գրված էր՝ «Ազնիվ հայեր, միացեք մեզ»: Ցուցարարների գլխավոր բացականչական կարգախոսն էր՝ «Հողերը, հողերը»: Իսկ արդեն Օպերայի և բալետի շենքի հարակից հրապարակում հավաքվելով՝ ավելի քան հարյուր ցուցարարներ ներս մտան շենք, որպեսզի իրենց պահանջները ներկայացնեն: Շենքում կուսակցական-խորհրդային վերնախավը, նրանց ասելիք չունենալով, հեռացավ, և միայն Վազգեն Ա կաթողիկոսը փորձեց հանգստացնել երիտասարդներին: Ինչևէ, թե՛ ապրիլի 24-ին և թե՛ հաջորդ օրը բոլոր խաղաղ ցուցարարների նկատմամբ ձեռնարկվեցին խորհրդային վարչահրամայական համակարգին հարիր պատժիչ գործողություններ:

Պետք է նշել, որ ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքը և ցույցը կրում էին միանգամայն խաղաղ բնույթ, ամենևին հակապետական նպատակներ չէին հետապնդում և միտված էին բացառապես ազգային հիմնախնդիրների վերհանմանը:

Որպես ասվածի վկայություն՝ նպատակահարմար ենք գտնում մինչ պաշտոնական տեսակետը վերլուծելն անդրադառնալ ցույցերի մասնակից և ականատես, գրող Մկրտիչ Արմենի՝ ՀԿԿ Կենտկոմին հղած 1965թ. ապրիլի 26-ի մանրամասն զեկուցագրին[1]:

Անաչառության համար առավել բնորոշող մեջբերումների տեսքով ներկայացնենք որոշ հատվածներ. «Հավաքույթի և ճառերի մեջ չկար և ոչ մի դատապարտելի խոսք կամ նախադա-

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 165, թթ. 2-10:

սություն, ամբողջ ճանապարհին, սկզբից մինչ վերջ, ցուցարարները չտրորեցին ոչ մի խոտ կամ սեզ»: «Օպերայի թատրոնում երեկոն ավելի հանդիսավոր էր, քան սգավոր: Չեմ ասում, թե պետք էր վերածել լացի ու կոծի երեկոյի: Բայց բեմի վրա ոչ մի տեղում գրված չէր ոչ «50» և ոչ էլ «1915» … Ծափերը հաջորդում էին ծափերին, կարծես քեֆի և ուրախության երեկույթ էր հրավիրված»: «Այն, ինչ որ պիտի աներ մեր կառավարության կամ կուսակցության ղեկավարներից որևէ մեկը, այսինքն՝ խոսեր դահլիճ մտած կամ դրսում սպասող երիտասարդության հետ, արեց …Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նա ասաց այն, ինչ որ պետք էր ասել տվյալ պահին»[1]:

Նպատակահարմար է մեջբերել մոտ մեկ ժամ տևած Վազգեն Ա-ի ելույթից հետևյալ պահպանված հատվածը. «Սիրելիներ, սիրելի երիտասարդներ, ես միանգամայն բաժանում եմ ձեր զգացմունքները, սակայն հասկացեք, սիրելիներ, ամեն ինչ այնքան հեշտ չի լուծվում, որքան որ դուք եք ցանկանում: Կան միջազգային նշանակություն ունեցող հանգամանքներ, կան այլևայլ շատ պատճառներ: Մենք սպասել ենք հիսուն տարի, մի՞թե չպիտի կարողանանք սպասել ևս այնքան, որքան որ հարկավոր է: Վստահ եղեք, որ ձեր կառավարությունը և կուսակցությունը կանեն և անում են ամեն բան, որպեսզի լուծվեն մեր առաջ կանգնած բոլոր հարցերը»[2]:

ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը 1965թ. ապրիլի 28-ին որոշում ընդունեց «Երևանում 1965թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին»[3]: Հրահանգվեց

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 165, թթ. 2-10:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թթ. 28-35:

«լուրջ բարելավել գաղափարական աշխատանքը, հատուկ ուշադրություն դարձնել ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակությանը, խիստ պատասխանատվության ենթարկել ուսումնական հաստատությունների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին, պարտավորեցնել ստեղծագործական կազմակերպությունների ղեկավարներին համապատասխան հետևություններ կատարել»: Այդ ամենը համարվեց «Երևանի բնակչության և հատկապես սովորող երիտասարդության շրջանում գաղափարական աշխատանքի մեջ լուրջ թերացումների անմիջական հետևանք»: Քննադատվեց Պետական անվտանգության կոմիտեն, որ «Ժամանակին անկարգությունների հրահրիչների բացահայտման, նրանց գործողությունների նախազգուշացման ուղղությամբ օպերատիվ միջոցներ չի ընդունել»[1]:

Նշվեց ՀԼԿԵՄ Կենտկոմի, Երևանի քաղկոմի և շրջկոմների անբավարար աշխատանքը, ի ցույց դրվեցին[2] ՀԿԿ Երևանի քաղկոմի բյուրոն, ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոն, Հասարակական կարգի պահպանման[3] նախարար Ս.Արզումանյանը[4]: Ի դեպ, ՊԱԿ նախագահ Գ.Բադամյանցն[5] անգամ նկատողություն չստացավ: Երևանի քաղկոմին և շրջկոմներին հանձնարարվեց քննել տեղի ունեցած անկարգությունների փաստերը, քննարկելով ցույցերին մասնակից կոմունիստների անհատական հար-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թթ. 28-35:

[2] Կոմկուսում նկատողությանը նախորդող տույժի տեսակ:

[3] Այդ ժամանակ Ներքին գործերի նախարարության անվանումը:

[4] **Արզումանյան Սերգեյ Արկադիի** – 1961-68թթ. հասարակական կարգի պահպանության-ներքին գործերի նախարար:

[5] **Բադամյանց Գեորգի Արտաշեսի** – 1954-72թթ. ՀԽՍՀ ՊԱԿ նախագահ:

ցերը՝ նրանց նկատմամբ պատժի խիստ միջոցների կիրառմամբ: Հասարակական կարգի պահպանման նախարարությանը, դատախազությանը, ՊԱԿ-ին պարտավորեցրին հանգամանալից հետաքննություն անցկացնել, որպեսզի ցույցերի «հիմնական սկսողները և մեղավորները» պատասխանատվության ենթարկվեն[1]:

ՀԽՍՀ կուսակցական բարձրագույն վերադաս մարմինն՝ ի պատիվ Յա. Զարոբյանի, զերծ չմնաց նաև ինքնաքննադատությունից. «ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը թույլ է տվել մի շարք լուրջ բացթողումներ միջոցառումների նախապատրաստման և իրականացման կազմակերպման գործում՝ իրականացման բոլոր դժվարությունների և առանձնահատկությունների ոչ լրիվ ընկալման մեջ»[2]:

Միաժամանակ, արվեց խորհրդային համակարգին բնորոշ համապատասխան վարչահրամայական քննադատություն, ստեղծագործական միություններին, խմբագրություններին, Ռադիոհաղորդումների և հեռուստատեսության կոմիտեին հրահանգվեց ու պարտավորեցվեց ավելի շատ «ուշադրություն դարձնել աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության հարցերին, լայնորեն ցույց տալ խորհրդային իշխանության տարիներին վերածնված հայ ժողովրդի ձեռքբերումները, Կոմկուսի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը»[3]:

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թթ. 28-35:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թթ. 28-35:

1965թ. ապրիլի 29-30-ին գումարվեց ՀԿԿ Կենտկոմի ընդլայնված պլենումը[1]: Նկատի ունենալով հարցի քաղաքական հրատապությունը և կարևորությունը՝ պլենումի կազմն աննախադեպ մեծաքանակ էր: Բավական է նշել, որ ներկա էր հանրապետական և շրջանային կուսակցական, խորհրդային, տնտեսական ողջ ղեկավարությունը՝ ՀԿԿ Կենտկոմի 99 անդամից 90-ը, 37 թեկնածուից 32-ը, Վերստուգիչ հանձնաժողովի 31 անդամից 28-ը, Կենտկոմի ոչ անդամ շրջկոմների առաջին քարտուղարները, շրջխորհուրդների գործկոմների նախագահները, գյուղական արտադրական վարչությունների պետերը, ընդհանուր առմամբ՝ 193 հոգի: Այսինքն՝ նման կազմով պլենումը յուրօրինակ կուսակցական համագումարի դերակատարություն ուներ[2]:

Յա. Զարոբյանն, ընդարձակ զեկուցման մեջ տեղեկատվություն տալով Եղեռնի 50-ամյակի նշման արդյունքների և տեղի ունեցած «անկարգությունների փաստերի» մասին, մասնավորապես կարևորեց հետևյալը. «ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը երկարատև ժամանակ ուսումնասիրեց կոտորածի 50-ամյակի նշման հարցը: Հաշվի առնելով հարցի բարդությունը, բոլոր դրական և բացասական կողմերը՝ վճռեցինք տարեթիվը նշել: Այդ հարցը ոչ միայն հուզում էր մեր ժողովրդին, այլև դուրս եկավ հանրապետության սահմաններից, ընդունեց միջազգային բնույթ: Երկարատև մտորումներից հետո ՀԿԿ Կենտկոմի նա-

[1] Պլենումի օրակարգի առաջին կետն էր ԽՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումի որոշման՝ «ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության հետագա զարգացման անհետաձգելի միջոցների մասին» քննարկումը: ՀԿԿ պաշտոնական ժամանակագրության մեջ նշվում է միայն սրա մասին: Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն, էջ 427:

[2] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 1, թթ. 2-4: գ. 2, թթ. 31-63, 71: գ. 4, թթ. 34-49, 61-64:

խագահությունը ԽՄԿԿ Կենտկոմ միջոցառումների ծրագիր ներկայացրեց: ԽՄԿԿ Կենտկոմը հանձնաժողով առանձնացրեց ընկերներ Սուսլովի, Պոդգորնու, Գրոմիկոյի և ուրիշների կազմով: Այդ հարցի երկարատև ուսումնասիրությունից հետո ԽՄԿԿ Կենտկոմը թույլատրեց մեզ նշել հայերի կոտորածի 50-ամյակը՝ ցեղասպանության քաղաքականության դատապարտման, մեր կուսակցության գլխավոր գծի լայն քարոզչության՝ ուղղորդված խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության, ինչպես նաև Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակից և Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո հայ ժողովրդի վերածննդի նշանի ներքո: Ըստ հարցի էության պետք է ասեմ, որ Կենտկոմի նախագահությանը պետք էր կամքի մեծ ուժ ունենալ, որպեսզի բարձրացներ այդ հարցը: Մենք մեր կուսակցական պարտքը համարեցինք նշել այդ տարեթիվը, որպեսզի Կենտկոմի շուրջ համախմբենք մեր ժողովրդին: Եթե մենք չնշեինք, մեր ժողովուրդը չէր հասկանա»: Նրա գնահատմամբ. «Այդ օրերը՝ ապրիլի 24-25-26-ը, անցան առանց որևէ ազգամիջյան երկպառակություն բնութագրող պատահարների: Բայց հետո, երբ անկազմակերպ երթին հարեցին ամեն տեսակ թափթփուկներ՝ թմրամոլներ, հարբեցողներ, քրեականներ, Օպերայի և բալետի թատրոնի մոտ սկսվեցին անկարգություններ: Դա, իհարկե, խայտառակ դեպք է, ինչի համար մենք բոլորից շատ ապրումներ ունեցանք, քանզի մեր ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ մենք ձեռնարկեցինք արժանիորեն նշել 1915թ. ցեղասպանության զոհերի հիշատակը»[1]:

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 2, թթ. 31-63:

Յա. Զարոբյանի համոզմամբ, այդ ամենը կարող էր տեղի չունենալ, եթե. «Կենտկոմի նախագահությունը, քաղկոմը, մեր ադմինիստրատիվ մարմինները թույլ չտային մի շարք լուրջ բացթողումներ և թերություններ: Սակայն այդ մեզ չի արդարացնում: Թատրոնում խայտառակ խուլիգանությունը կարելի էր կանխել, եթե նախօրոք կանխատեսեինք բոլոր մանրուքները, և եթե կուսակցական և ադմինիստրատիվ մարմիններն այդ հարցին ավելի մտածված մոտենային»: Առավել ինքնաքննադատական է հնչում հետևյալ խոսքը. «Փաստ է, որ դեմագոգ տարրերի այդ ոչ մեծ խումբը, խաղալով ժողովրդի ազգային զգացմունքների վրա, կարողացավ հավաքել մարդկանց այդպիսի զանգված: Այդ խոսում է այն մասին, որ սկսած Կենտկոմից, քաղկոմից, շրջկոմներից և վերջացրած սկզբնական կուսկազմակերպություններով, երիտասարդության վրա անհրաժեշտ ազդեցություն չունեինք, որպեսզի հետ պահեինք վտանգավոր գործողություններից: Գլխավոր քաղաքական հետևությունն այն է, որ կուսկազմակերպությունների գաղափարադաստիարակչական աշխատանքում, հատկապես սովորող երիտասարդության ու մտավորականության շրջանում, առկա են լուրջ թերացումներ և բացթողումներ: Սկսած Կենտկոմից՝ պետք է ապրիլի 24-ի դեպքերից քաղաքական դասեր քաղել և զանգվածների ու առաջին հերթին երիտասարդության հետ քաղաքական, դաստիարակչական աշխատանքի արմատական բարելավման իրական միջոցներ ընդունել»[1]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 2, թթ. 31-63:

Ինչպես պլենումի, այնպես էլ ՀԽՍՀ քաղաքական-մտավոր վերնախավի տեսակետների հստակեցման առումով ներկայացնենք ելույթներից որոշ հատվածներ:

ՀԽՍՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյան. «ՀԿԿ Կենտկոմն ավելի շատ զբաղվում է մանր հարցերով, իսկ խոշոր, արմատական հարցերի համար ժամանակ չի մնում: Դա վերաբերում է ոչ միայն Կենտկոմին. մենք բոլորս զբաղվում ենք մանր հարցերով, իսկ հիմնական հարցերը բաց ենք թողնում: Եղեռնի նշումն արտահայտում էր ոչ միայն ողջ հայության ցանկությունը, նրա զգացմունքները, նահատակների հիշատակի հարգանքը, այլև մի քանի գլխով բարձրացրեց մեր հանրապետության և մեր միության հեղինակությունը հայրենիքում և հայրենիքից դուրս սփյուռքում: Որոշման մեջ նշված «նացիոնալիստական տրամադրություն» արտահայտությունը պետք է հանել»[1]:

Էդուարդ Թոփչյան[2]. «Հարկավոր է վերանայել ազգայնականության մասին ձևակերպումը: Կենտկոմի որոշման մեջ պետք է հատուկ կետ լինի հայրենադարձների մասին: Մենք այդ մարդկանց բերեցինք Խորհրդային Հայաստան, ապահովեցինք նրանց աշխատանքով և բնակարանով, բայց չենք զբաղվում նրանց դաստիարակությամբ: Դա նույնպես կարևոր հարց է»[3]:

Հին բոլշևիկ Արտաշես Կարինյան[4]. «Ազգայնական տրամադրությունների դեմ պայքարն այնքան էլ ուժեղ չի մղվել: Հար-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 4, թթ. 34-49:
[2] **Թոփչյան Էդուարդ Ստեփանի** – 1954-67թթ. Հայաստանի խորհրդային Գրողների միության վարչության պատասխանատու քարտուղար, 1967-75թթ.՝ վարչության առաջին քարտուղար: Նաև տե՛ս *Թոփչյան Էդ.,* Հոկտեմբերը և հայ ժողովրդի ճակատագիրը, Ե., 1965:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 4, թթ. 34-49:
[4] **Կարինյան Արտաշես Բալասիի** – 1960-68թթ. ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

կավոր է անպայման դատապարտել և ցույցերի կազմակերպիչներին: Կենտկոմը ճիշտ որոշեց 1915թ. ցեղասպանության զոհերի հիշատակին կոթող կանգնեցնել, բայց միևնույն ժամանակ հարկավոր է մտածել և ուսուցիչ-բոլշևիկ, մայիսյան ապստամբության հերոս Սարուխանյանի մասին, ում սպանեցին դաշնակները, հարկավոր է նշել նաև հեղափոխության զոհեր՝ Տաթևում սպանված հերոս հեղափոխականների հիշատակը (աղմուկ դահլիճում) և ուժեղացնել հակախորհրդային հոսանքների և տարբեր տեսքի նացիանալիզմի դեմ պայքարը»[1]:

Պլենումն ամփոփեց Յա. Զարոբյանը. «Կենտկոմի նախագահությանը պետք էր կամքի մեծ ուժ ունենալ, որպեսզի բարձրացներ այդ հարցը: Մենք մեր կուսակցական պարտքը համարեցինք նշել այդ տարեթիվը, որպեսզի Կենտկոմի շուրջ համախմբենք մեր ժողովրդին: Եթե մենք չնշեինք, մեր ժողովուրդը չէր հասկանա: Միայն այն, որ ապրիլի 24-ին հազարավոր մարդիկ փողոց դուրս եկան արտահայտելու իրենց զգացմունքները, մի կողմ թողած կուսկազմակերպությունների կամքը՝ Կենտկոմի և Երևանի քաղկոմի համար խոշոր մինուս է: Անվիճելի է և այն, որ այդ գործի ոգեշնչողներն ու կազմակերպիչներն ազգայնականորեն տրամադրված տարրեր էին, ովքեր խաղացին ժողովրդի զգացմունքների վրա, ստեղծեցին շանտաժ և քաղաքական սպեկուլյացիա հողային հարցի շուրջ»[2]:

Երկօրյա քննարկումներից հետո ՀԿԿ Կենտկոմի պլենումն ընդունեց հետևյալ որոշումը. «1. Հաստատել հայերի կոտորածի 50-ամյակի կապակցությամբ անցկացված ՀԿԿ Կենտկոմի նա-

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 4, թթ. 34-49:
[2] Մանրամասն տե՛ս նույն տեղում:

խագահության միջոցառումները և ՀԿԿ Կենտկոմի նախագահության ապրիլի 28-ի «1965թ. ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին» որոշումը: 2. Հանձնարարել Կենտկոմի նախագահությանը մշակել և իրականացնել կոնկրետ միջոցառումներ աշխատավորության՝ հատկապես երիտասարդության շրջանում գաղափարաքաղաքական, դաստիարակչական աշխատանքների հետագա արմատական ուժեղացման ուղղությամբ, ինչպես նաև բարելավել հանրապետության ադմինիստրատիվ մարմինների աշխատանքը»[1]:

Այս համապատկերում, ժամանակի հեռավորությունից ամենևին էլ հետաքրքրությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ հատկապես ապրիլի 24-ին օպերային թատրոնի մոտ տեղի ունեցած միջադեպից հետո անգամ ՀԿԿ Կենտկոմի նախագահության անդամներն ունեցան Երևան զորք մտցնելու առաջարկներ՝ ցուցարար երիտասարդների հետ զենքի ուժով հաշվեհարդար տեսնելու համար: Սակայն այդ առաջարկին կտրուկ դեմ եղան ինչպես ՀԽՍՀ-ում տեղակայված 7-րդ բանակի հրամանատար Դավիդ Դրագունսկին[2], այնպես էլ հատկապես Յա. Զարոբյանը:

Սեփական ժողովրդի դեմ, որն իր իսկ նախաձեռնած շարժման արդյունքում էր ոտքի կանգնել, զորք հանելը կտրուկ մերժած Զարոբյանն, անշուշտ, քաջ գիտակցում էր, թե ինչպիսին է լինելու մոսկովյան վերադասի վերաբերմունքը, և որ այն առաջին հերթին վնասելու է հենց իրեն: Եվ այդ առումով ամե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 4, թթ. 61-64:

[2] **Դրագունսկի Դավիդ Աբրամի** – 1960-65թթ. ՀԽՍՀ տարածքում տեղակայված խորհրդային բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության կրկնակի հերոս:

նից ծանրը հենց նրա վիճակն էր, քանզի զուտ նրա անձնական պատասխանատվության ներքո էր Կրեմլը թույլատրել ապրիլյան միջոցառումների իրականացումը:

Արդյունքում՝ ոչ մի ցուցարարի դեմ քրեական գործ չհարուցվեց, այլ միայն՝ ինչպես հանրապետության դատախազ Վ.Մուսախանյանը[1] զեկուցեց, բավարարվեցին «մանր խուլիգանություն» գնահատելով: Ապրիլի 25-ին օպերային թատրոնի շենքի կոտրված ապակիները գցվել էին, և երբ 26-ին Մոսկվայից հատուկ հանձնաժողով եկավ քննության համար՝ տեղի ունեցածից այլևս ոչ մի հետք չկար:

Մինչդեռ, ընդամենը երեք տարի առաջ՝ 1962թ., Նովոչերկասկ քաղաքում շատ դաժան հաշվեհարդարի էին ենթարկվել սոցիալ-կենցաղային վիճակի բարելավում պահանջող խաղաղ ցույցի ելած բանվորները:

Եվ միմիայն Յա. Զարոբյանի հայրենասիրության, անձնական տոկունության և հավասարակշիռ կեցվածքի շնորհիվ հնարավոր եղավ զերծ մնալ արյունահեղությունից և ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների սովորական դարձած միջամտություն-հաշվեհարդարից: Արդյունքում՝ նա ստանձնեց կատարվածի ողջ պատասխանատվությունը՝ դառնալով միակ «քավության նոխազը»: Արդեն մի քանի ամիս անց նա զրկվեց Խորհրդային Հայաստանի ղեկավարի պաշտոնից:

[1] **Մուսախանյան Վարդգես Մատթևոսի** – 1961-71թթ. ՀԽՍՀ դատախազ:

4. ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի հետ կապված՝ հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Մայր աթոռ Ս. Էջմիածնի քայլերին: Այս հանգամանքը պայմանավորված է մի քանի հանգամանքներով:

Առաջին, հասկանալիորեն Հայ եկեղեցին չէր կարող անմասն մնալ, ավելին՝ պարտավոր էր ոգեկոչման գործընթացի առաջին դիրքերում լինել: Երկրորդ, ԽՍՀՄ տարածքում գտնվող եկեղեցու ղեկավարության ակտիվ գործունեությունը պայմանավորված էր նաև ՀԽՍՀ իշխանությունների թեկուզև ոչ բացահայտ աջակցությամբ կամ թողտվությամբ: Երրորդ, բուն Մայր աթոռը ժամանակի առումով ավելի շուտ սկսեց նշյալ ուղղությամբ իր աշխատանքները:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը 1964թ. օգոստոսի 17-ին «Ապրիլյան Մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ» հրապարակեց ծրագրային բնույթի կոնդակ[1]: Վազգեն Ա-ն խորապես համոզված փաստում էր, որ «Հայոց նահատակութիւնը վերջնապէս պսակուած է յաղթութեան բրաբիոնով ու նոր կեանքի լուսաբացով եւ վերածնած է մեր հինաւուրց երկիրը Հայաստան, իբրեւ ազգային պետութիւն: Հայ ժողովուրդի զաւակները, որ ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, այսօր, մեծ եղեռնէն յիսուն

[1] Տե՛ս «Էջմիածին», 1964, Ը-Թ, էջ 3-5:

տարի յետոյ, երկիւղածութեամբ կը խոնարհին բիւրաւոր նահատակներու անյայտ գերեզմաններուն առջեւ ու կաղօթեն անոնց անմահ հոգիներու խաղաղութեան եւ երանութեան համար: Եւ կը վերանորոգեն իրենց ուխտը՝ սուրբ պահելու անոնց նուիրական յիշատակը ու մնալու հաւատարիմ անոնց լոյս հաւատքին, անոնց հերոսական ոգիին, հայոց ազգը մէկտեղուած եւ հայոց ամբողջ երկիրը փրկուած տեսնելու անոնց պայծառ երազին»[1]:

Կոնդակով տրվեցին հստակ հրահանգներ. «ա. յառաջիկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին եւ համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի եւ աղօթքի տարի; բ. Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ, ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ եւ հոգեհանգստեան պաշտօններ, աղօթելու համար մեր բիւրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան և լուսաւորման համար; գ. Ս. Էջմիածնի Մայր տաճարին մէջ այսուհետեւ պիտի մատուցուի յատուկ սուրբ պատարագ ամէն տարի ապրիլ 24-ին; դ. բոլոր հայ եկեղեցական համայնքներուն եւ գաղութներուն մէջ, Հայ եկեղեցւոյ հովանիին ներքեւ, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի եւ յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական նիստեր հայ եւ այլազգի հասարակութեանց համար, նուիրուած Ապրիլեան Եղեռնին; ե. հայ եկեղեցական իշխանութիւնները, ազգային-հասարակական կազմակերպութիւնները, պատմագիտական-գրական-մշակութային հիմնարկները եւ հայ մամուլը իրենց սեպուհ պարտքը համարեն խօսքով ու գործով ոգեկոչելու նուիրական յիշատակը մեծ եղեռնի տա-

[1] Տե՛ս «Էջմիածին», 1964, Ը-Թ, էջ 3-5:

րիներուն մարտիրոսացած հայ ժողովուրդին, հայ հոգեւորականներուն եւ գրական հասարակական մեծանուն գործիչներուն, հրապարակելով հայ եւ այլազգի հեղինակներու պատմական վկայութիւնները, վաւերաթուղթերը, ուսումնասիրութիւնները, յուշերը եւ գրական-գեղարուեստական գործերը»[1]:

Բնականաբար, կոնդակն ավարտվեց Խորհրդային Հայաստանին ուղղված բարեմաղթանքով. «Այսօր, բոլոր հայերուն համար, ուր որ ալ գտնուին անոնք, աղօթքի օր է նաեւ մեր ժողովուրդի խաղաղ զարգացման ու բարօրութեան համար, մեր նորակերտ հայրենի երկրի անսասանութեան ու շինութեան համար, ապրող ու շնչող եւ լոյսի մէջ աճող Մայր Հայաստանի համար»[2]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության միջազգային հնչեղության և ճանաչման սկզբնավորումն էլ դրեց հենց Վազգեն Ա-ն, թեկուզ՝ միջեկեղեցական ոլորտում: Այսպես, Եղեռնի 50-ամյակի առթիվ Վազգեն Ա-ն 1964թ. սեպտեմբերի 24-ին նամակներ հղեց Հռոմի Պողոս Զ պապին, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի պատրիարք Ալեքսիին, Քենթրբերիի արքեպիսկոպոս և Համայն Անգլիայի միտրոպոլիտ Մայքլ Ռեմզիին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Վիսեր դ'Հուֆտին[3], այդտեղ փաստելով, որ «Նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանության մեծ ոճիրն էր, որ կատարվեց: Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրև քրիստոնյա և ազատ ազգություն... առաջնորդված քրիստոնեա-

[1] Տե՛ս «Էջմիածին», 1964, Ը-Թ, էջ 3-5:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 8-9: ՀԱԱ, ֆ. 823, ց. 7, գ. 73:

կան գութի և արդարության զգացումից»՝ հորդորում էր նրանց ապրիլի 24-ին իրենց «աղոթքները միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար»[1]:

Իսկ արդեն 1965թ. ապրիլի 24-ին, Եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ, ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից և Հունաստանից հազարավոր ուխտավորների ներկայությամբ, Մայր աթոռում հանդիսություններ տեղի ունեցան: Վազգեն Ա-ն պատարագ մատուցեց, կատարվեց հոգեհանգիստ՝ «Հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսունամյակին նվիրված», ապա Մայր տաճարի հյուսիսային կողմում տեղի ունեցավ Եղեռնի նահատակների հուշարձանի հիմնարկեքի օրհնություն, որի կառուցումը պետք է ավարտվեր 1965թ. հոկտեմբերին: Երեկոյան Վազգեն Ա-ն շքախմբով ներկա եղավ Օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր նիստին: Ապրիլի 25-ին Մայր տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց, ապա գումարվեց հուշի նիստ՝ նվիրված Եղեռնի 50-ամյակին[2]:

Տեղին է հիշատակել, որ հանդիսություններին ներկա էին ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ.Դալլաքյանը, Մ.Սարյանը, Կ.Մելիք-Օհանջանյանը, Ա.Առաքելյանը, Կ.Զարյանը, Լ.Խաչիկյանը, Ա.Ղարիբյանը, Ա.Աբրահամյանը, Բ.Առաքելյանը, Կ.Ղաֆադարյանը, Վ.Հարությունյանը, Ռ.Իսրայելյանը, Ալ.Հարությունյանը, Պ.Սևակը, Գ.Էմինը:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս «Էջմիածին», 1965, ԵԶԷ, էջ 106-113:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Մայր աթոռի խոսնակի տեղեկատվությունն ավարտվում էր արդեն զուտ քաղաքական գնահատականով. «Ու ծնվում է մեր օրերի նոր Վահագնը՝ Սովետական Հայաստանը, մեր արյան բոցերից, մեր պայքարի թափից: Այդ ծանր օրերին արևմտյան աշխարհը քար դրավ իր խղճի և սրտի վրա: Մեզ բարեկամության ձեռք մեկնեց ռուս մեծ ժողովուրդը, բուժեց մեր վերքերը բարի սամարացու նման: Հայ ժողովուրդը իր կյանքը, ապագան ընդմիշտ կապեց ռուս ժողովրդի հետ: Պայծառացավ հայոց երկինքը, փարատվեց մղձավանջը և բացվեց հուսալից այգաբացը Հայոց աշխարհում, հայոց սրտերում: Կատարվեց մեր մեծ նահատակների իղձը, երազը: Հայ ժողովուրդը տիրացավ իր հողին, ազատության, ստեղծեց հայրենիք, պետականություն, ապահով և խաղաղ կյանք: Քառասունհինգ տարուց ի վեր մեր ժողովուրդը իր նահատակների հիշատակին կանգնեցրել է մեծագույն հուշարձանը: Դա մեր վերածնված Մայր Հայրենիքն է՝ Սովետական Հայաստանը: Փա՛ռք իր նահատակությունը հաղթության վերածող մեր շինարար, մեր արդար, մեր խաղաղասեր ժողովրդին: Փա՛ռք մեր ապագա կառուցումների, հույսերի և երազների միակ կռվան մեր մայր Հայրենիքին, Սովետական Հայաստանին»[1]:

«Ապրիլյան Մեծ եղեռնի հիսնամյակի առթիվ» և «Եղեռն ու վերածնունդ» զույգ խմբագրականներով թեմային հատուկ անդրադարձավ Մայր աթոռի «Էջմիածին» պաշտոնաթերթը[2]: Պատկերացում կազմելու համար ուղղակի բնութագրիչ մեջբերումներ կատարենք:

[1] Տե՛ս «Էջմիածին», 1965, ԵԶԷ, էջ 106-113:
[2] Տե՛ս «Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 3-5; 1965, ԲԳԴ, էջ 3-5:

«Այդ անլուր ոճիրը իր նմանը չուներ բարբարոսությունների և ցեղասպանությունների ողջ տարեգրությանց մեջ: Մեր վերածնված հայրենիքի և նրա հերոսական ժողովրդի հետ են նաև ապրիլյան եղեռնից մազապուրծ ազատված բեկորները արևմտահայության: Մեր մայր հայրենիքը՝ վերածնված Սովետական Հայաստանը, ձգողական հզոր ուժ է դարձել Սփյուռքի օտար հորիզոնների տակ ապրող մեր բազմահազար պանդուխտ եղբայրների և քույրերի համար, որոնք Տուն են վերադառնում տարագրության և պանդխտության անհույս ճանապարհներից՝ շենացնելու հայրենի օջախը: Վերջնական հաղթանակն ու արդարությունը կլինեն մեր նահատակների կողմը: Այդ է հայ ժողովրդի խորունկ հավատը: Հավերժական փա՞ռք մեր բյուրավոր նահատակներին»[1]:

«Հայ ժողովուրդը իր բախտը, փրկության հույսը ընդմիշտ կապում է ռուս ժողովրդի հետ, որը նրան ոտքի է կանգնեցնում, բուժում նրա վերքերը: Հայաստանը դարձել է լույսի հայրենիք, հույսի հայրենիք, նոր ու հզոր Սովետական Հայաստան: Փա՛ռք մեր վերածնված Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին»[2]:

1965թ. հունիսի 13-ին Պլովդիվի Հայոց ազգային գերեզմանատանը Վազգեն Ա-ի հանդիսադրությամբ տեղի ունեցավ Եղեռնի նահատակների հիշատակի հոգեհանգիստ և նահատակաց հուշարձանի բացում, որին ներկա էր նաև Բուլղարիայի Կրոնական գործերի խորհրդի նախագահ Մ.Քյուչյուկովը[3]:

[1] Տե՛ս «Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 3-5:
[2] Տե՛ս «Էջմիածին», 1964, ԲԳԴ, էջ 3-5:
[3] Տե՛ս «Էջմիածին», 1965, Ը-Թ, էջ 19:

1965թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն կաթողիկոսը ողջ հոգևոր դասի և հյուրերի ուղեկցությամբ Մայր տաճարի հյուսիսային կողմում բացեց Եղեռնի նահատակների հուշարձանը[1], որի հեղինակն անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն էր: Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրված էր. «Խաչքար Աղոթքի և Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների»: Հուշարձանի երկրորդ երեսի վրա փորագրվել էին Վանի, Մուսա լեռան, Շապին Գարահիսարի, Հաճընի, Մարաշի, Եդեսիայի, Զեյթունի, Սասունի և Սարդարապատի անունները: Բացմանը Վազգեն Առաջինը մասնավորապես ասաց. «Այս տարի, ապրիլի 24-ին, Մենք օրհնեցինք այս հողը, որպեսզի այստեղ մարմին առնե կոթող մը, նվիրված 1915 թվականի հայոց մեծ եղեռնի զոհերու հիշատակին: Ահա այդ կոթողը, խորհրդանիշը հայոց վշտին, խորանը մեր աղոթքին, վեմը մեր ուխտին: Այս օրեն սկսյալ սրբավայր է այստեղ, նվիրված մեր ողբերգական անցյալին, մեր զոհված եղբայրներու և քույրերու հիշատակին, մեր ժողովրդի ինքնապաշտպանության հերոսամարտերուն, մեր ազգին ուխտին»[2]:

Այս առումով, հետաքրքիր է այն փաստը, որ այս միջոցառումը զուգադիպեց Վազգեն Ա-ի գահակալության 10-ամյակին, որին ներկա էին քույր եկեղեցիների պետերը:

Ամփոփելով՝ տեղին ենք համարում անդրադառնալ Հայոց ցեղասպանության 75-ամյակի կապակցությամբ Վազգեն Ա-ի 1990թ. ապրիլի 24-ի կոնդակին[3]:

[1] Մինչ այդ, միակ հուշարձանը՝ մատուռի տեսքով, 1950-ական թվականներին կառուցվել էր Անթիլիասում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի տարածքում, ուր ամփոփվեցին Դեյր Զորից բերված զոհերի աճյունները:
[2] Տե՛ս «Էջմիածին», 1965, ԺԱ-ԺԲ, էջ 44-49:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 127, թթ. 1-2:

Որպես նախորդներից էական տարբերություն՝ կոնդակում հիշատակվում էին Արցախ, Սարդարապատի հաղթանակ, 1918թ. «հայ նորագույն պետություն» բառերը: Հատկապես ուշագրավ էին Վազգեն Ա-ի հետևյալ խոսքերը. «Այսօր, մեր պատմութեան մեծագոյն արհաւիրքը ոգեկոչում ենք մեր հայրենի կեանքի տագնապալի ներկայ վիճակում, երբ ողբում ենք նաեւ նոր զոհերի, պատմական Արցախի մեր զաւակների արդար պայքարի ճանապարհին: Աստուած է վկայ, քաղաքակիրթ ողջ մարդկութեան խիղճն է վկայ, որ Արցախի հայերի ազգային ազատ ինքնորոշման իրաւունքը Մայր Հայաստանին միանալու թէ արդար է, թէ օրինական եւ թէ համաձայն մարդու իրավունքների հրամայականին»[1]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 127, թթ. 1-2:

5. ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ցեղասպանության 50-ամյակը նշելու ողջ գործընթացում հարկ է առանձնահատուկ անդրադառնալ Հայաստանի գրողների գործունեությանը, նրանց դիրքորոշմանը: Անտարակույս, հայ գրողները համազգային զարթոնքի գաղափարական առաջամարտիկներից էին:

1965թ. ապրիլի 23-ին Գրողների տանն անցկացվեց նահատակ գրողների հիշատակին նվիրված երեկո, որը բացեց Ստեփան Զորյանը, ելույթ ունեցան Վաղարշակ Նորենցը, Գևորգ Էմինը, Անահիտ Սահինյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սիլվա Կապուտիկյանը: Լուսավորության աշխատողների տանը կազմակերպվեց երեկո՝ նվիրված «1915 թվին թուրք ջարդարարների կողմից գազանաբար սպանված հայ գրողների հիշատակին», որտեղ ոգեկոչվեցին մեր ազգի մեծ նահատակները՝ Դ.Վարուժան, Գր.Զոհրապ, Ռ.Սևակ, Սիամանթո, Ռ.Զարդարյան...[1]:

Նահատակ մտավորականների մասին տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, ուր երկարատև հանիրավի մոռացությունից հետո վերարժևորվեցին և ըստ արժանվույն գնահատվեցին նրանց ստեղծագործությունները[2]:

---

[1] Տե՛ս «Գրական թերթ», 1965, ապրիլի 23, թ. 17, էջ 4:
[2] Տե՛ս օգտագործված գրականության ցանկում:

Շարունակելով՝ տեղին է հիշատակել, որ 1965թ. մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահության որոշմամբ Երևանի Շահումյանի շրջանի N 89 միջնակարգ դպրոցն անվանակոչվեց Դանիել Վարուժանի անունով[1]:

Խորհրդային իշխանության տարիներին, որպես կանոն, ուսումնական հաստատություններն անվանակոչվում էին հայտնի կուսակցական-պետական գործիչների, իսկ եզակի դեպքերում՝ պաշտոնական ճանաչում գտած անվանի մտավորականների անուններով: Մինչդեռ 1965թ. նախորդող ժամանակաշրջանում ոչ միայն անտեսված էր Հայոց եղեռնի երևույթը, այլև մոռացության էին մատնված նահատակ արևմտահայ գրողներն ու նրանց ստեղծագործությունները: Ուստի, ՀԿԿ Կենտկոմի կողմից դպրոցի անվանակոչման փաստն ինքնին պաշտոնական ուղի էր բացում նահատակ մյուս գրողների «արդարացման» համար, ինչի կարիքը հայոց համար նրանք երբևէ չեն ունեցել:

Շեշտենք, որ «Գրական թերթ»-ն ապրիլի 23-ի համարն ամբողջությամբ նվիրել էր Եղեռնին («Վերածնված իմ Հայաստան» խմբագրական, Գևորգ Էմինի «Եղել է, կա ու կլինի», Վարդան Պարսամյանի «Հերոսական դրվագներ» հոդվածները): Մյուս կողմից, ՀԽՍՀ ռուսալեզու պաշտոնական մամուլը Եղեռնի թեմային, միջոցառումների լուսաբանությանն աննկարելիորեն անդրադարձավ չափազանց հպանցիկ, մինչդեռ քարոզչական նկատառումներից ելնելով՝ միանգամայն հակառակը պետք է լիներ: Ցավալիորեն, ապրիլի 24-ի ցույցին և ընդհանրապես Եղեռնի 50-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 35: Նախարարների խորհուրդը 1965թ. մարտի 23-ին ընդունեց թ. 118 որոշումը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 96, գ. 102, թ. 10:

ամյակի միջոցառումներին աշխույժ չմասնակցեց ժամանակի մտավորականության ազդեցիկ և հեղինակավոր առաջնորդը՝ ՀԿԿ Կենտկոմի անդամ, իր խիզախ դիրքորոշմամբ հայտնի Հրաչյա Քոչարը: Ծանր հիվանդության հանդիման նրա սիրտը տեղի տվեց. մահացավ մայիսի 3-ին[1]:

1965թ. ապրիլի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի գրողների միության կուսկազմակերպության դռնբաց ժողովը: Ներկա էին Կոմկուսի 75 անդամ, նախագահը կուսակցական բյուրոյի 1-ին քարտուղար Սերո Խանզադյանն էր, քարտուղարը՝ Ստեփան Ալաջաջյանը[2]:

«Եղեռնի 50-ամյակի նշման մասին» զեկուցեց միության վարչության պատասխանատու քարտուղար Էդ.Թոփչյանը: Նա շեշտեց, որ 50-ամյակի նշումը պետք էր, և որ այն «կապված էր ավելի քան մեկ ու կես միլիոն հայության բախտի հետ, որ դեգերում էր արտասահմանում»: Նկարագրելով Երևանում ապրիլի 24-ին տեղի ունեցած ցույցերը՝ նա օգտագործեց «խուլիգաններ» ձևակերպումը. «Նրանք ձեռք էին բարձրացրել մեր կուլտուրայի տաճարի (նկատի ուներ օպերայի շենքը) վրա, նրանք թույլ էին տվել ամենակոպիտ անկարգություն»: Մասնակիցներին նա պիտակավորեց որպես «հանցագործ տարրեր, տականքներ, անարժան մարդիկ, թափթփուկ էլեմենտներ, հակահասարակական տարրեր»: Նա միանշանակ առաջարկեց դատապարտել նրանց[3]:

[1] Թեմայի վերաբերյալ նրա դիրքորոշումը տե՛ս *Հր.Քոչար,* Մտորումներ, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24: Նա առանձնապես կարևորում էր 1915թ. ինքնապաշտպանական մարտերի և Սարդարապատի հերոսամարտի մոռացությունից վերհանումը:

[2] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

Ընդգծված հայրենասիրական կեցվածքով և քաղաքացիական դիրքորոշմամբ առանձնացավ Սիլվա Կապուտիկյանը: Նա առաջին հարցը դիտարկեց Հայրենիք-Սփյուռք կապերի քաղաքական փոխվստահության և համագործակցության համապատկերում. «Աշխարհասփյուռ հայությունը նայում է Խորհրդային Հայաստանի վրա, որպես իր հայրենիքի, իր հույսի ու ապավենի վրա: Ինչ պատկեր կստացվեր, եթե այդ հայրենիքը չհարգեր իր միլիոն ու կես զոհերի հիշատակը, որ տեր չկանգներ փրկված մյուս կեսի՝ սփյուռքահայության բաղձանքներին, իր զայրույթի ձայնը չբարձրացներ Ցեղասպանության դահիճների դեմ: Արդյոք դա չէ՞ր խարխլի հայության հավատը դեպի իրենց հայրենիքը, չէ՞ր սառեցնի մեր բարեկամ հայ կուսակցություններին, հիմնավորապես չէ՞ր խանգարի մեր գաղափարակիցների աշխատանքին արտասահմանում»[1]:

Հայ մտավորականին վայել խիզախությամբ նա անգամ չվարանեց քննադատության սլաքն ուղղել նաև իշխանությունների հասցեին. «Համարյա երկու տարի Հայաստանի ժողովուրդը սպասողական վիճակի մեջ էր. պետք է նշեն, թե չնշեն Եղեռնի հիսնամյակը: Անընդհատ գալիս էին ժխտող ու հաստատող լուրեր, թերահավատ ու լավատես պնդումներ: Վերջապես, ապրիլի 24-ից միայն ամիս ու կես առաջ պաշտոնապես հայտարարվեց, թե տարեդարձը նշվելու է: Սակայն, դժբախտաբար, հենց ապրիլի սկզբներին գործը հակառակ ընթացք ստացավ: Հարգելի և անհարգելի նկատառումներով սեղմվեցին բոլոր զսպանակները: Ռադիոն և պաշտոնաթերթերը աշխարհում էլ ինչի մասին ասես որ չգրեցին ու չասացին, բացի Եղեռնին վե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

բաբերող նյութերից: Չկայացան ենթադրելիք ցուցահանդեսները, ֆիլհարմոնիայի գրական-երաժշտական երեկոները և այլն: Հապճեպ կազմակերպված բարեկամության երեկոներին՝ փոխանակ մեզ հյուր եկած եղբայրական ժողովուրդների ներկայացուցիչներին վստահորեն և հարազատորեն մասնակից դարձնելու մեզ համակած զգացումներին և ամբիոնից լսելի անելու նրանց սրտացավ խոսքը մեր անցյալ ողբերգության մասին, անհեռատես և աննրբանկատ ձևով այդ երեկոների ընթացքում բառ իսկ չարտասանվեց Եղեռնի մասին, կարծես թե անվայել մի բան էր դա, որը պետք է թաքցնել հյուրերից»[1]:

Ըստ այդմ, Ս.Կապուտիկյանը նաև տալիս է ժողովրդական ընդվզման պատճառների և թերացումների բացատրությունը. «Ահա այս բոլորը միասին վերցրած վիրավորեց ու նյարդայնացրեց մարդկանց, նորից ստեղծեց լարված իրավիճակ, կրքերի բորբոքում: Մինչդեռ, հարկավոր էր հիսուն տարվա լռությունից և այնուհետև երկու տարվա սպասողական անորոշ դրությունից ստեղծված զգացումների կուտակումը ապրիլ ամսին մաս առ մաս սպառել, ձևեր ու միջոցներ գտնել այդ կատարվածը հունի մեջ դնելու համար: Մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը պետք է վճռական դեր խաղային այդ գործում, հատկապես ապրիլ ամսին պարբերաբար անդրադառնային այդ տարելիցին, ինչպես անում էին Մաշտոցի, Սայաթ-Նովայի օրերին: Պետք է բաց թողնվեին հիսնամյակին նվիրված կրծքանշաններ, ալբոմներ, զոհված գործիչների դիմանկարներ: Պետք է կայանար հուշարձանի հիմնադրման արարողությունը, որտեղ արտասանվող խոսքերը կօգնեին դուրս հորդելու հոգիներում կուտակված

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

ազնիվ ու մաքուր զգացումները: Օրինակ, ինչպես լավ կլիներ, եթե ապրիլի 24-ին ստադիոնում, նահատակների հիշատակը արժանավայել նշելուց հետո, այդ և մյուս օրերին սկսվեր համաժողովրդական հանդես-ֆեստիվալ»: Ս.Կապուտիկյանի վերջնական եզրահանգումն էր. «Այն, ինչ արվեց, արվեց շատ մասնակի, կիսաբերան ասված խոսքով, կիսատ-պռատ միջոցառումներով: Ճշմարիտ չի լինի կարծել, թե անխոհեմ վանկարկումներ անող, բայց իրենց մղումների մեջ ազնիվ մի երկու տասնյակ երիտասարդներն էին միայն, որ ստեղծեցին այդ համաժողովրդական շարժումը: Ոչ»[1]:

Եղեռնից ազատված «խլյակ» Սողոմոն Տարոնցին համոզված շեշտեց. «Չնշել, նշանակում էր ֆիզիկապես կորցնել սփյուռքահայությանը, որ հեռացել էր իր հայրենիքից այդ եղեռնի պատճառով, և կկորցնենք սփյուռքահայության վստահությունն այն իմաստով, որ մենք կուրանայինք մեր պատմության այդ էջը»: Նա ևս կտրուկ դեմ էր ցույցերը «նացիոնալիստական» համարելուն[2]:

Ցույցի մասնակից Բաղիշ Հովսեփյանը քննադատաբար նշեց, որ բոլոր գրողները պետք է այնտեղ լինեին, բայց փոխարենը. «Մենք՝ գրողներս էլ վատ ենք կազմակերպված: Ես, ընկերներ, գնացի քայլողների շարքի հետ, որպեսզի թույլ չտամ պրովոկացիա և խուլիգանություն, և եթե մենք բոլորս լինեինք այնտեղ, ապա ոչ մի խուլիգանություն չէր լինի, չէինք թողնի: Մենք շատ վախեցանք մեր աթոռներից, մեր պաշտոններից, չկարողացանք ինչպես պետքն է կազմակերպել սգահանդեսը»:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:
[2] Տե՛ս նույն տեղում:

Նրա կարծիքով՝ պետական դրոշի վրա «որպես սգո նշան մի սև երիզ անցկացնելուց ոչ կոմունիստական շարժումը կտուժեր, ոչ սոցիալիզմի կառուցումը, ոչ էլ մեր ողջախոհությունը», արդյունքում. «Սեղմվեց, սեղմվեց, սեղմվեց եղեռնի նշումը, և ժողովուրդը գրգռվեց»[1]:

«Հպարտության զգացումով» ցուցարարների շարքում քայլած Սևակ Արզումանյանը դատապարտեց «սև դուբինկաներով (մահակ) միլիցիոներների գռեհիկ գործողությունները, երիտասարդների և անչափահասների անխնա ծեծը»: Նա քննադատեց Մոսկվայի կենտրոնական մամուլի պահվածքը, որը, բազմիցս գրելով «ալժիրցի Ջամիլեի, հույն Մանոլիս Գլեզոսի, Կոնգոյի ժողովրդի մասին», լռության մատնեց հայերի եղեռնի 50-ամյակը, իսկ «Պրավդա»-ի հոդվածը համարեց «համաշխարհային գենոցիդի ամբողջ հարցերի մեջ մեծ եղեռնի փաստի տարրալուծում»: Նման մոտեցումը ուշագրավ կերպով նա բացատրեց «երկու չափի, երկու կշեռքի սկզբունքի» կիրառմամբ[2]:

Իսկ Գարեգին Սևունցի հակիրճ, սակայն դիպուկ գնահատմամբ. «Պարզվում է, որ երկու տեղ է նշվում եղեռնը՝ մեկը փողոցում, մյուսը՝ պաշտոնական: Նշանակում է՝ վատ է կազմակերպված շատ բան»[3]:

Անահիտ Սահինյանը խստորեն քննադատեց այն գրողներին («որոնց ծափահարելուց մազոլակալել էին այդ երիտասարդների ձեռքերը»), որոնք բացակա էին ցույցից և Լենինի հրապարակում հավաքված խոսքի սպասող երիտասարդու-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

թյան առջև ելույթ չունեցան. «Ցավի հետ գլուխ չունեին, նրանց գլուխները միայն դափնիներ կրելու համար են: Սիրում են ամբիոններ, ահա ամբիոն էր»: Արդյունքում, ըստ նրա վկայության. «Հրապարակում ծովացած այդ երիտասարդներն ու պատանիները, որ ուրիշ չէին, այլ մեր երեխաները, մեր քույրերի ու եղբայրների երեխաները, ամբողջ օրը անգլուխ թափառում էին՝ մեկ դեպի պանթեոն, մեկ դեպի ուսանողական թաղամաս, ոչ մի կերպ տեղ չգտնելով իրենց համար»: Այս առումով միանշանակ ընդունելի է հայուհու նրա անկեղծ եզրակացությունը. «Եթե պետք է դատապարտվի որևէ մեկը, ապա եկեք դատապարտենք ինքներս մեզ, որ չկարողացանք այդ երիտասարդների ու պատանիների զգացումների խորքը թափանցել»[1]:

Համո Սահյան. «Կատարվածը տարերային էր, և տարերքը կազմակերպված դուրս եկավ: Այս դեպքը ցույց է տալիս, որ մենք մեր ժողովրդին լավ չգիտենք, լավ չենք ճանաչում: Իսկ այստեղ այս անգամ ոչ մի սիզամարգ չի կոխոտվել, ոչ մի ծաղիկ չի փչացել, ոչ մի քար չի փշրվել: Ախր, սառը ջուր ենք բաց թողել նրանց վրա, և ուզում ենք նրանց դատապարտել: Մեղք չե՞ն այդ երիտասարդները: Մենք ինքներս մեզ պիտի դատապարտենք, որ չկազմակերպեցինք գործը, մենք կարող էինք նրանցից առաջ ընկնել պատշաճ ձևով, և նրանք կմնային ետևում: Բարբարոսություն ցուցաբերեցին միլիցիոներները, և պիտի դատապարտենք ջահելների՞ն»[2]:

Սաղաթել Հարությունյանն անգամ ԽՄԿԿ Կենտկոմին քննադատեց. «Ամիսներ շարունակ ձգձգում էին, խաբում էին

[1] Տե՛ս նույն տեղում
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

Եղեռնի նշման հարցի կապակցությամբ: Խոսքս վերաբերում է մեր Կենտկոմին, և ես քննադատում եմ ԽՄԿԿ Կենտկոմին էլ, որ չհասկացավ, թե 1915 թվականի ապրիլի 24-ին ինչպիսի դժբախտություն է պատահել հայ ժողովրդի հետ»[1]:

Վաղարշակ Նորենցի վերջնական համոզումն էր. «Մեկ խոսքով, Եղեռնի 50-ամյակը չնշվեց պատշաճ ձևով»[2]:

Ինչևէ, բուռն քննարկումներից Խորհրդային Հայաստանի մտավորականության ավանգարդ կոմունիստ գրողներն իրենց տեսակետն արտահայտող միաձայն բանաձև ընդունեցին:

Բանաձևում հենց սկզբից տրվում էր քաղաքական գնահատական. «ԽՄԿԿ-ի նախագահության հավանությանը արժանացած ՀԿԿ Կենտկոմի որոշումը՝ պատմության մեջ իր նախընթացը չունեցող հայ եղեռնական կոտորածների 50-ամյա տարելիցը նշելու մասին, ***միանգամայն տեղին էր և համարում է ճիշտ***[3]: Դա սովորական ջարդ չէր, դա նախամտածված ու խնամքով ծրագրված ժողովրդասպանություն էր, ցեղասպանություն»:

Ցույցերը համարվեցին «տարերայնորեն, բայց և ինքնաբուխ կարգապահությամբ», ելույթները՝ «հիմնականում և գերազանցապես գենոցիդը, թուրքական ոճրապարտ ջարդարարներին քննադատող ու իրենց էությամբ առողջ», որի արդյունքում «որևէ խուլիգանական, հակահասարակական արարք» տեղի չունեցավ: Իսկ օպերային թատրոնի միջադեպի մեղավոր համարվեցին «մի խումբ քրեական տարրերը», որոնց հակահասա-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Ընդգծումը փաստաթղթինն է:

րական, խուլիգանական արարքը միահամուռ կերպով դատապարտվեց»: Միահամուռ հավանության արժանացավ ՀԿԿ Կենտկոմի վերջին տարիների աշխատանքը, մասնավորապես՝ «սփյուռքահայության հետ կապերը ընդլայնելու, հայրենադարձություն կազմակերպելու» հարցում[1]:

Այսուհանդերձ, «միլիցիայի և վարչական օրգանների որոշ աշխատողների կողմից անմեղ բնակչության» նկատմամբ թույլ տրված «որոշ կոպիտ վերաբերմունքը և ծեծը» համարվեց «խորհրդային օրինականությանը անհարիր և դատապարտելի»: Կոմունիստ գրողները տեղին համարեցին նշել միջոցառումների ընթացքում եղած «կազմակերպչական բնույթի լուրջ թերությունները», ռադիոյի, հեռուստատեսության, կենտրոնական մամուլի լուսաբանումների «անբավարար լինելը»[2]:

Եվ այսպես, թվում էր, որ նման քննարկումներից և բուռն ելույթներից հետո վերջում ընդունված որոշման մեջ կընդգրկվեն Եղեռնին, Սփյուռքին և ազգային հնչեղության այլ հարցերին նվիրված կետեր, սակայն այդ ամենը կարծես թե մոռացության մատնվեց: Փոխարենը՝ հանձնարարվեց «պարբերաբար մեկնաբանել հայ ժողովրդի սոցիալիստական վերածնունդը, գեղարվեստական ստեղծագործություններով լուսաբանել խորհրդային մարդու հերոսական աշխատանքը, լենինյան սկզբունքով շարունակել, վեր հանել անցյալի մեր գրական արժեքները, միջոցառումներ մշակել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 և Լենինի ծննդյան 100-ամյակը արժանավայել նշելու համար, գրական ստեղծագործություններում ար-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:
[2] Տե՛ս նույն տեղում:

տացոլել Հոկտեմբերի հռչակած սկզբունքների մեծ նշանակությունը հայ ժողովրդի բախտի համար»: Եվ ի վերջո, կոմունիստ գրողները չմոռացան և իրենց պարտքը համարեցին ՀԿԿ Կենտկոմին հավաստիացնել, որ «այսուհետև ևս պատվով կկատարեն կուսակցության օգնականի իրենց բարձր կոչումը»[1]:

Փաստորեն, որոշման 5 կետից ոչ մեկում այդպես էլ չարտացոլվեց Եղեռնի և նրա 50-ամյակի հիմնահարցը, չտրվեց քաղաքական գնահատական: Համեմատելով ելույթների ոգին ու հնչած քննադատությունները ընդունված բանաձևի ձևակերպումների հետ՝ վերջինս աներկբա պետք է համարել թույլ՝ համաժողովրդական ոգևորության և առանձին գրողների հայրենասիրական դիրքորոշման համապատկերում:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

6. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԿՈՄԻՏԵԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Եղեռնի 50-ամյակի շրջանակներում Հայրենիք-Սփյուռք կապերի թեման առանձնահատուկ տեղ ունի: Հենց դրանով էին պայմանավորված տասնամյակների մեկուսացումից հետո Սփյուռքի նկատմամբ պետական նոր քաղաքականության որդեգրումը և լայնամասշտաբ կապերի սկզբնավորումն ու զարգացումը: Ընդ որում, այդ ամենը կատարվում էր մշակութային փոխայցերի կազմակերպումից մինչև համապատասխան պետական (թեպետ անվանապես՝ հասարակական) կառավարման մարմնի ստեղծումը:

Եվ որպես սկիզբ՝ ՀԿԿ Կենտկոմն ընդունեց Վահան Թեքեյանի մահվան 20 և Սեմա Աթմաճյանի մահվան 25-ամյակները նշելու վերաբերյալ Սփյուռքի կոմիտեի նախագահ Վ.Համազասպյանի առաջարկը[1]:

ՀԿԿ Կենտկոմը նման դրական վերաբերմունք ցուցաբերեց նաև Նոր Արաբկիրի հիմնադրման 40 և Նոր Հաճնի հիմնադրման 50-ամյակը նշելու առաջարկների հարցում[2]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45. գ. 67, թթ. 9, 21: Նաև տե՛ս *Կապուտիկյան Ս.,* Վահան Թեքեյանի մահվան 20-ամյակը, «Գրական թերթ», 1965, ապրիլի 16: Ա.Սեմա, «Գրական թերթ», մայիսի 21:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թթ. 31, 50:

Ուշագրավ է հիշատակել, որ եթե 1964թ. (Սփյուռքի կոմիտեի հիմնադրման ժամանակ) կապ էր պահպանվում սփյուռքահայ 620 կազմակերպությունների և գործիչների հետ, ապա 1965թ. մայիսին՝ Եղեռնի 50-ամյակի նշումից հետո, նրանց թիվը կազմեց 900[1]:

1958-ից սկիզբ առած սփյուռքահայ երիտասարդների ուսումնառությունը Երևանի ուսումնական հաստատություններում ժամանակի ընթացքում լայն թափ ստացավ: Արդեն 1961 թվականից ՀԽՍՀ սփյուռքահայ ուսանողների հրավիրումը և ուսման գործընթացի կազմակերպումն առավել կազմակերպված բնույթ և լայն մասշտաբ ընդունեց: 1961-65թթ. ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը 16 որոշում է ընդունել ուսանողների ՀԽՍՀ հրավիրելու մասին, արդեն 1965թ. վերջին ՀԽՍՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում էին ավելի քան 200 սփյուռքահայ երիտասարդ և պատանի[2]:

Եթե 1958-63թթ. Երևանի բուհերում նրանց տարեկան 20 տեղ էր հատկացվում, ապա 1963-ից՝ 70 տեղ, որից 50-ը՝ բուհ, 20-ը՝ տեխնիկում, իսկ արդեն 1968-ից՝ 70 տեղ, որից 50-ը՝ բուհ, 10-ը՝ տեխնիկում, 10-ը՝ ասպիրանտ: Միաժամանակ, ընդլայնվեցին ուսանողների աշխարհագրական սահմանները: Եթե մինչև 1965թ. բուհ ընդունվում էին միայն Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, ապա հետագա տարիներին՝ արդեն 15 երկրից

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թ. 42:

[2] Այս առթիվ ուշագրավ հրապարակումներից, օրինակ, տե՛ս «Մենք եկանք տեսանք Հայաստանը», «Սովետական Հայաստան», 1962, թ. 12, էջ 9-11: *Մարտիրոսյան Լ.*, Ուսումնառությունը հարազատ երկրում, «Սովետական Հայաստան», 1964, թ. 12, էջ 24-25:

եկած երիտասարդներ: Ընդհանուր առմամբ, 1961-71թթ. Երևանի բուհեր էին ընդունվել 529 սփյուռքահայ ուսանողներ, իսկ տեխնիկումներ՝ 50 հոգի, ընդ որում՝ նրանց թվի աճ նկատվեց հենց 1965թ. սկսած: Նշյալ ժամանակ բուհերն ունեցել էին 180 սփյուռքահայ շրջանավարտ՝ 62-ը Սիրիայից, 60-ը Լիբանանից, 15-ը Իրաքից[1]:

Սփյուռքահայ ուսանողների համար պետական բյուջեի հաշվին ամանորյա ընդունելություն-տոնահանդեսներ էին կազմակերպվում[2]:

1965թ. ապրիլի 19-ին Երևանի բուհերում սովորող սփյուռքահայ ուսանողների հետ Արվեստի աշխատողների տանը հանդիպում-երեկո կազմակերպվեց: Այն բացեց Վ.Համազասպյանը, ելույթ ունեցան Գ.Էմինը, Ս.Կապուտիկյանը, ակադեմիկոս Ա.Շահինյանը, սփյուռքահայ ուսանողներ Ազնիվ Արաբյանը, Մանվել Ադամյանը, Թորոս Թորանյանը[3]:

1965թ. հունվարի 26-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը «Սփյուռքահայ գաղութներում և առաջին հերթին աճող սերնդի շրջանում Խորհրդային Հայաստանի ձեռքերումների քարոզչության ուժեղացման նպատակով» որոշեց 1965թ. ամռանը 45 օրով կատարելագործման և վերապատրաստման դասընթացների հրավիրել 30 սփյուռքահայ ուսուցչի[4]: Այս ենթատեքստում հիշատակենք, որ 1965թ. մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը, հաշվի առնելով 1964թ. փորձը, որոշեց 1965թ.

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 3, գ. 10; ց. 6, գ. 1:
[2] Օրինակ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 95, գ. 942, թ. 7:
[3] Տե՛ս «Ավանգարդ», 1965, ապրիլի 24, N 49, էջ 3:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 47; ֆ. 113, ց. 97, գ. 255, թ. 12: Դեռևս 1964թ. հունիսի 10-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդն էր նման որոշում ընդունել: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 95, գ. 374, թ. 6:

ամռանը ՀԽՍՀ պիոներական ճամբարներում հանգստի հրավիրել 60 սփյուռքահայ դպրոցականների (այդ թվում՝ Լիբանանից՝ 15, Սիրիայից՝ 13), մեկ ամիս ժամկետով[1]:

Տեղին է շեշտել, որ դրանից հետո սփյուռքահայ ուսուցիչների և երեխաների ՀԽՍՀ հրավիրումը կանոնավոր կերպով ամեն տարի կազմակերպվում էր: Սկիզբ առնելով Եղեռնի 50-ամյակի միջոցառումների շրջանակներում՝ այս ծրագրի հետագա շարունակումն, անտարակույս, Հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնմանն էր միտված:

Հիշատակենք, որ դեռևս 1962թ. մայիսի 18-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը որոշել էր Երևանում կազմակերպել սփյուռքահայ ուսումնական հաստատությունների համար կազմել և հրատարակել 12 միավոր դասագիրք[2]: Դրանց արևմտահայերեն և դասական ուղղագրությամբ խմբագրման համար ՀԿԿ Կենտկոմի նախագահության 1963թ. մարտի 27-ի որոշմամբ Լիբանանից և Սիրիայից համապատասխան մասնագետներ հրավիրվեցին[3]:

Իսկ արդեն 1965թ. դասագրքերի առաքումը ԽՍՀՄ համապատասխան վերադաս մարմինների միջոցով ավելի կազմակերպված բնույթ ստացավ:

Չնայած Եղեռնի 50-ամյակին ընդառաջ Սփյուռքի նկատմամբ վերաբերմունքն էական փոփոխությունների ենթարկվեց,

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 30: ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1965թ. ապրիլի 20-ին ընդունեց թ. 288 կարգադրությունը ծախսերը հոգալու մասին:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 42, գ. 18:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 43, գ. 10: Այդ ամենը ֆինանսավորվում էր ՀԽՍՀ բյուջեի հաշվին՝ Սփյուռքի կոմիտեին համապատասխան ֆինանսական միջոցների հատկացմամբ: Օրինակ, Նախարարների խորհրդի 1964թ. օգոստոսի 7-ի որոշումը տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 95, գ. 547, թ. 12:

սակայն խորհրդային ամբողջատիրական համակարգի պայմաններում, հասկանալի պատճառներով, որոշակի սահմանափակումներ պահպանվեցին: Օրինակ, դեռևս 1963 թվականից թեպետ հանրապետությունում թույլատրվեց վաճառել որոշ սփյուռքահայ պարբերականներ և գրականություն, սակայն դրանց նկատմամբ կատարվում էր խիստ հսկողություն՝ «հակախորհրդային գաղափարախոսության» տարածումը կանխելու համար: Այս ուղղությամբ անվերապահ հետևողականություն էր ցուցաբերում ՀԽՍՀ Պետական գաղտնիքների պահպանման գլխավոր վարչությունը՝ Գլավլիտը, որին առաջին հերթին հետաքրքրում էր համակարգի քաղաքական խիստ ուղղափառության պահպանումը[1]:

Սփյուռքի հետ կապերի ամրապնդման ուղղությամբ որոշակի աշխատանքներ էր ծավալում Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունը, մանավանդ՝ մինչև Սփյուռքի կոմիտեի ստեղծումը: Այս ընկերության գործառույթներից էին Երևանի բուհերում սովորող սփյուռքահայ ուսանողների հետ տարվող աշխատանքները, արտասահմանի համար տրվող ռադիոհաղորդումները, սփյուռքահայության կյանքի քարոզումը, մշակութային կապերը, սփյուռքահայ կազմակերպությունների և միությունների հետ գրագրությունը, ՀԽՍՀ-ից սփյուռքահայ կրթամշակութային հաստատություններին օգնության տեղ հասցնումը, սփյուռքին նվիրված միջոցառումների կազմակերպումը[2]:

[1] Օրինակ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1254, ց. 3, գգ. 76, 78, 86, 90:
[2] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, ց. 3, գգ. 140, 143, 145, 147, 149, 155, 171, 321:

Հայոց ցեղասպանության 50-ամյակին ընդառաջ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանն ուղղված համազգային նշանակության կարևորագույն քաղաքական ձեռնարկը Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ստեղծումն էր: Սփյուռքի կոմիտեի հիմնադիր ժողովը տեղի ունեցավ 1964թ. հունիսի 25-ին Երևանի արվեստի աշխատողների տանը[1]:

Ժողովին մասնակցում էին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը և Մարտիրոս Սարյանը: Ընտրվեց 71 հոգանոց կոմիտե, որն իր կազմից ընտրեց 15 հոգանոց նախագահություն: Վերջինիս անդամներն էին՝ Հրաչյա Քոչարը, Սիլվա Կապուտիկյանը, Լևոն Խաչիկյանը (Մատենադարանի տնօրեն), Էդուարդ Միրզոյանը (Կոմպոզիտորների միության նախագահ), Վարազդատ Հարությունյանը (Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ), Արա Սարգսյանը (ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ), Շահե Տատուրյանը (Ռադիոյի արտասահմանյան հաղորդումների գլխավոր խմբագիր), Պատրիկ Սելյանը (ՀԽՍՀ ԳԽ դեպուտատ, ԱՄՆ-ից ներգաղթյալ), Գրիգոր Քեշիշյանը (կոմիտեի մամուլի բաժնի վարիչ), Աշոտ Թադևոսյանը («Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիր), Բերսաբե Գրիգորյանը (ԱՕԿՍ-ի նախագահ), Իլյա Կևորկովը (տուրիզմի վարչության պետ), Գալուստ Գալոյանը (պատմության ինստիտուտի տնօրեն):

Կոմիտեն առաջին հերթին կազմակերպեց ակտիվիստների շրջանակ, ովքեր ցանկանում էին սփյուռքի հետ կապի մեջ մտնել: Նաև կազմակերպվեցին հետևյալ հանձնաժողովները. ֆիզկուլտուրայի (նախագահ՝ Հրանտ Շահինյան), գրականության (նախագահ՝ Ս.Կապուտիկյան), արվեստի (նախագահ՝

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 11:

Ռ.Զարյան), մանկավարժական (նախագահ՝ Ավետիս Ճուղարյան) գիտական (նախագահ՝ Ճաղարյան), հայագիտական (նախագահ՝ Լ.Խաչիկյան), երիտասարդական-պատանեկան (նախագահ՝ Վարդգես Պետրոսյան), հայրենակցական միություններին օժանդակող (նախագահ՝ Վաղարշակ Նորենց), կանանց (նախագահ՝ Մարո Մարգարյան): Արվեստի հանձնաժողովն իր հերթին ուներ հետևյալ մասնաճյուղերը. երաժշտության (նախագահ՝ Էդգար Հովհաննիսյան), ճարտարապետության (նախագահ՝ Վ.Հարությունյան) թատրոն-կինոյի (նախագահ՝ Սարգիս Մելիքսեթյան), կերպարվեստի (նախագահ՝ Միհեր Աբեղյան):

Կոմիտեն ստեղծման պահին կապ ուներ 631 կազմակերպության և անհատի հետ, իսկ վեց ամիս հետո՝ 852-ի հետ 40 երկրից: 1964թ. սփյուռք են ուղարկվել 6.600 միավոր գիրք և 17.000 դասագիրք (բոլորը՝ արևմտահայերեն), 39 գեղարվեստական ֆիլմ, 32 ցուցահանդես, նկարահանվել է երկու մասանոց «Սփյուռքի ուսուցիչները Հայաստանում» վավերագրական ֆիլմը: 1964թ. ամռանն առաջին անգամ 30 սփյուռքահայ երեխա հանգստացավ ՀԽՍՀ-ում: Իսկ Սփյուռքից ստացել էին 3.000 գիրք, 4 արխիվ, տասնյակ նկարներ: Արդեն 1965թ. Սփյուռքի 815 կազմակերպություն և անհատ ստացան ՀԽՍՀ 24-ական թերթամսագիր՝ 5.092 օրինակ քանակով: Եթե 1965թ. կոմիտեն կապ էր պահպանում 42 երկրի 680 կազմակերպության և 720 անհատի հետ, ապա 1966թ.՝ 52 երկրի 1038 կազմակերպության և 2107 անհատի հետ, այդ թվում՝ 500 դպրոցի, 79 պարբերականի, 72 մշակութային միության, 42 հայրենակցական միության: 1966թ. ուղարկվել է 26.745 գիրք, որից 7.000 դասագիրք և

18.745 գեղարվեստական գիրք, 3.000 ձայնասկավառակ, 1966թ. սովորում էր 280 ուսանող, հանգստացել էր 82 երեխա: Կոմիտեի գործունեության ակտիվությունն առավել ակնհայտ էր «Հայրենիքի ձայն» պաշտոնական շաբաթաթերթի պարագայում՝ 1965թ. դրա տպաքանակը 7.000 էր, իսկ 1966թ.՝ 15.000[1]:

Սփյուռքի կոմիտեի ստեղծումը մեծ խանդավառություն առաջ բերեց սփյուռքահայ հայրենասիրական շրջանակներում: Բոլոր թերթերն անմիջապես նյութեր տպեցին կոմիտեի ստեղծման մասին, նաև կոմիտեի նախագահի կենսագրությունը՝ նկարով[2]: Առաջնորդողներում և հոդվածներում, շնորհավորելով հանդերձ, միաժամանակ առաջարկներ էին անում կոմիտեի աշխատանքը բարձր մակարդակի վրա պահելու մտահոգությամբ[3]:

Կոմիտեն սփյուռքահայության հետ հարաբերություններն ամրապնդելու հարցով մշտական սերտ հաղորդակցության մեջ էր ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի և պետական կառավարման բարձրագույն այլ հաստատությունների հետ[4]:

Կոմիտեի գործունեության ընդհանրական պատկերացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն նրա 1964-85թթ. աշխատանքային ծրագրերը[5] և հաշվետվությունները[6]: Կոմիտեի գործունեությունը կարգավորվել, ուղղորդվել և զարգացել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի բազմաթիվ

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 5, թթ. 1-13; գ. 6, թթ. 1-12:
[2] Սփյուռքահայ մամուլի արձագանքի մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 1:
[3] Օրինակ, տե՛ս «Զարթոնք», Բեյրութ, 1964, դեկտեմբերի 1:
[4] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, զգ. 3, 25; ց. 4, գ. 14:
[5] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, զգ. 11, 12, 48; ց. 2, գ. 6; ց. 4, գ. 4; ց. 5, գ. 13; ց. 6, գ. 31; ց. 13, գ. 24:
[6] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 11; ց. 2, զգ. 21, 24; ց. 4, զգ. 5, 6, 9, 11, 12, 17, 74; ց. 5, զգ. 340, 345; ց. 6, զգ. 3, 4, 19, 33; ց. 8, գ. 26; ց. 9, զգ. 40, 47, 54; ց. 13, զգ. 25, 41:

որոշումներով և կարգադրություններով, որոնք վերաբերվել են ֆինանսական, կադրային, կազմակերպչական, արտաքին կապերի և մշակութային ոլորտներին[1]:

Կոմիտեն սկզբից ևեթ ուշադրության կենտրոնում էր պահում նաև կուսակցական-քաղաքական պայքարի հարցերը: Այսպես, 1964թ. առաջնահերթություններից էր համարվում հետևյալը. «Պարբերաբար կազմակերպել դաշնակցության հակասովետական քաղաքականությունը մերկացնող հոդվածների տպագրություն սփյուռքի և սովետահայ մամուլում»[2]:

Սփյուռքի կոմիտեն կատարում էր նաև մեկ այլ կարևոր դերակատարություն, այն կարևոր օղակն էր, որի միջոցով սփյուռքահայ պարբերականներին տպագրելու համար արդեն պատրաստի տասնյակ հազարավոր էջ ծավալով տարաբնույթ նյութեր (հոդվածներ, գրական երկեր) էին ուղարկվում[3]: Դրանց հեղինակները հայրենաբնակ անվանի գիտնականներ, մտավորականներ և լրագրողներ էին: Անշուշտ, այդ ամենը հետապնդում էր մի քանի նպատակ. 1. զգալիորեն հեշտացնել նյութերի հայթայթումը և ապահովումը, 2. սփյուռքահայությանը ծանոթացնել Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին, գիտամշակութային ձեռքբերումներին, 3. Իրականացնել սփյուռքահայության շրջանում խորհրդային քարոզչություն:

[1] Օրինակ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, զգ. 2, գ. 7; ց. 3, գ. 2; ց. 4, գ. 66; ց. 5, գ. 13; ց. 8, զգ. 14, 33; ց. 9, զգ. 9, 16, 27, 32:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 12, թ. 12:
[3] Օրինակ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, զգ. 86-215; ց. 5, զգ. 19-262; ց. 6, զգ. 36-501; ց. 10, զգ. 1-466; ց. 11, զգ. 1-508; ց. 12, զգ. 1-600:

Բնականաբար, 1965թ. Սփյուռքի կոմիտեի գործունեության առանցքային կետերից մեկը հենց Եղեռնի թեման էր: Այդ ամենը բավական լայն մասշտաբ էր կրում և արտահայտվում էր տարբեր ուղղություններում: Այսպես, դեռ 1964թ. դեկտեմբերի 29-ի նախագահության նիստում կոմիտեի հայագիտական հանձնաժողովի 1965թ. աշխատանքի պլանում[1] ներառվեց հետևյալ կետը. «Մշակել և անցկացնել միջոցառումներ՝ նվիրված Մեծ եղեռնի 50-ամյակին»[2]:

Սփյուռքահայ մամուլում տպելու համար պատրաստվեց և ուղարկվեց «Թուրքիան հայերից դատարկվելուց հետո» պատմական տեղեկանք[3], կազմվեցին «Եղեռնի 50-ամյակը սփյուռքահայ մամուլում» վերլուծական ակնարկ[4], սփյուռքահայ մամուլի տեղեկագրեր[5]:

Սփյուռքի կոմիտեի նախագահ Վ.Համազասպյանը «Նոր տարի, նոր խնդիրներ» հոդվածում նշեց, որ 1965թ. նախատեսվում է հայկական կոտորածների տարեդարձի նշում. «Եղեռնի հիսնամյակը, որը պետք է լինի ոչ միայն թրքական յաթաղանից ընկածների հիշատակի հարգանքի ու հավերժացման օր, այլ մեր ժողովրդի ուժի ցուցադրման, նրա վերածննդի, այն մեծագործությունների, որին հասավ հայ ժողովուրդը շնորհիվ սովետական կարգերի ու իր ստեղծագործական մտքի»[6]:

[1] Սակայն կոմիտեի 1965թ. աշխատանքային պլանում Եղեռնի մասին տարօրինակ կերպով հատուկ հիշատակություն չկար: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1., գ. 48, թթ. 1-19:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 9, թ. 3:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 77, թթ. 1-31:
[4] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 42, թթ. 1-17:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գգ. 44, 46:
[6] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 12, թթ. 15-12; ց. 1, գ. 18:

Չբավարարվելով այս ամենով՝ կոմիտեն Եղեռնի 50-ամյակի առթիվ առաջարկներ ներկայացրեց և միջոցառումների պլան կազմեց[1]: Օրինակ, կոմիտեն առաջարկեց ՀԽՍՀ-ում Արևմտահայաստանի բնակավայրերի անուններով ավաններ և քաղաքներ, «եղեռնին արձագանքած հայ ժողովրդի մեծ բարեկամներ» Ֆ.Վերֆելի, Յ.Լեփսիուսի, Պ.Յավորովի, Ա.Ֆրանսի, Ժ.Ժորեսի անուններով փողոցներ, «եղեռնի զոհեր» Գ.Զոհրապի, Երուխանի, Սիամանթոյի, Ռ.Սևակի, Դ.Վարուժանի, Ռ.Զարդարյանի, Թլկատինցու անուններով դպրոցներ (կիսանդրիներ կանգնեցնելով) կոչել, նշել զոհված գրողների մահվան 50-ամյակը, Հանրապետական գրադարանում բացել եղեռնին նվիրված գրքերի ցուցահանդես, նամականիշ թողարկել, 3 միլիոն ծառ տնկել, Եղեռնի 50-ամյակի միջոցառումներին հրավիրել բոլոր գլխավոր գաղթօջախներից մեկական հոգի, կազմակերպել ֆոտոցուցահանդեսներ, զոհված մտավորականների հիշատակին հուշարձան կանգնեցնել, հրատարակել Հ.Մորգենթաուի և Ֆ.Վերֆելի գրքերը:

Եղեռնի 50-ամյակի միջոցառումների ողջ համալիրում կարևոր քարոզչական քայլ պետք է համարել ՀԿԿ Կենտկոմի նախագահության 1965թ. հունվարի 26-ի որոշումը «Արտասահմանում ապրող հայ աշխատավորների վրա ազդեցության ուժեղացման, Կոմունիստական կուսակցության ներքին և արտաքին քաղաքականության, հանրապետության տնտեսության, գիտության, մշակույթի ձեռքբերումների քարոզչության, բուրժուական գաղափարախոսության դեմ հակաքարոզչության հաջող վարման նպատակներով» «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի հրա-

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 40, թթ. 1-8:

տարակման մասին»՝ որպես Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի պաշտոնական շաբաթաթերթ՝ 7 հազար տպաքանակով: Աշխատակազմը պետք է բաղկանար 15 հոգուց, այդ թվում՝ խմբագիր, պատասխանատու քարտուղար, ԽՍՀՄ տնտեսության և մշակույթի նվաճումների քարոզչության, սփյուռքահայ գաղութների գծով և նամակների բաժինների վարիչներ, 2 գրական աշխատող[1]:

Ելնելով այս որոշումից՝ Յա. Զարոբյանը 1965թ. փետրվարի սկզբին ԽՄԿԿ Կենտկոմին հղած նամակում հիմնավորեց նման թերթի հրատարակման անհրաժեշտությունը և քաղաքական նշանակությունը: Նա հատկապես շեշտում էր. «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի նյութերը նշանակալից օգնություն ցույց կտան բուրժուական ազգայնականների-դաշնակների դեմ պայքարում հայկական առաջադիմական կազմակերպություններին, ընկերություններին, միություններին»[2]:

Արդեն 1965թ. մարտի 10-ին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը որոշում ընդունեց, ինչի հիման վրա ՀԿԿ Կենտկոմի նախագահությունն ապրիլի 6-ին վերջնականապես որոշեց շաբաթաթերթի լույսընծայման հարցը[3]:

Հետաքրքիր է հիշատակել, որ ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը նման շաբաթաթերթի հրատարակման մասին որոշումներ ընդունել էր դեռևս 1961թ. նոյեմբերի 11-ին[4], ապա 1964թ. ապրիլի 10-ին[5], սակայն մոսկովյան վերադասը դրանց ընթացք չէր տվել:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 6, թ. 61; գ. 15, թ. 51-52:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 41, թթ. 34-35:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 19, թթ. 61-62:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 35, թ. 113:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 31:

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրական կոլեգիան, ի տարբերություն հանրապետական մյուս պաշտոնաթերթերի, հաստատվեց առանց կուսակցա-պետական գործիչների, հետևյալ կազմով. 1. Ալթունյան Թաթուլ, 2. Դավթյան Վահագն (խմբագիր), 3. Թոփչյան Էդուարդ, 4. Խաչատրյան Հայկ (պատասխանատու քարտուղար), 5. Համազասպյան Վարդգես, 6. Հասրաթյան Մորուս, 7. Սարյան Մարտիրոս, 8. Սևակ Պարույր, 9. Քեշիշյան Գրիգոր: Թերթի աշխատակազմը վերջնական հաստատվեց 15 հոգի, այդ թվում՝ երեք բաժնի վարիչ:

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի առաջին համարում հրապարակվեցին Եղեռնի հուշարձանի մակետը՝ կից հոդվածով, ինչպես նաև Երևանի մաթեմատիկական մեքենաների ինստիտուտի, խորհրդահայ գրականության և արվեստի մասին նյութեր[1]:

Այս շաբաթաթերթը հրատարակվեց ընդհուպ մինչև 1986թ., և Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում անուրանալի դերակատարություն ունեցավ: «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի բազմաբեղուն և հայրենանվեր գործունեության մասին կարելի է հանգամանալից պատկերացում կազմել նրա հաշվետվություններից[2]: Իսկ որպես Հայրենիք-Սփյուռք կապերի խոսնակի վառ առհավատչյա՝ այն հազարավոր նամակ-թղթակցություններն են, որ այն տասնյակ տարիների ընթացքում ստացել է[3]:

Փաստորեն, սկիզբ առնելով Եղեռնի 50-ամյակի ոգեկոչման շրջանակներում՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթն էական դերակատարություն ունեցավ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում:

[1] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 1965, օգոստոսի 1:
[2] Օրինակ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1318, ց. 9, գգ. 1, 2, 3, 6:
[3] Օրինակ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1318, ց. 10, գգ. 9-15, 28, 196; ց. 11, գգ. 2, 16:

ՀԿԿ Կենտկոմը 1965թ. փետրվարի 8-ին «Հայրենիք վերադարձած հայերի ներկայացուցիչների ժողովի անցկացման մասին» որոշում ընդունեց: Նախատեսվեց 1965թ. մարտի 12-ին Երևանում «Խորհրդային Հայաստանը բոլոր աշխատավոր հայերի հայրենիքն է» օրակարգով ժողովում զեկուցող նշանակել Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանին, իսկ Նախարարների խորհրդին հանձնարարվեց հատկացնել անհրաժեշտ միջոցներ[1]:

Հաստատված միջոցառումների ծրագրով ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժինը պետք է հայրենադարձների անունից պատրաստեր ԽՍՀՄ և ՀԽՍՀ կուսակցական և օրենսդիր մարմիններին հասցեագրված ողջույնի նամակ, 50 հայրենադարձի ցուցակ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով պարգևատրելու համար, ապահովեր զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող միջոցառումների լայն լուսաբանումը, իսկ մշակույթի և գիտության բաժինը պետք է պատրաստեր մշակույթի, գիտության, կրթության բնագավառներում վաստակավոր կոչումներ շնորհելու համար հայրենադարձների ցուցակներ: Ժողովին պետք է մասնակցեր 1.230 հոգի: Ծրագիրը նախատեսում էր ուշադրության կիզակետում պահել գերազանցապես հայրենադարձներին, համերգային մասում պետք է ելույթ ունենային Գոհար Գասպարյանը, Օհան Դուրյանը, Միհրան Երկաթը, Հովհաննես Չեքիջյանը[2]:

[1] ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1965թ. փետրվարի 25-ին ընդունեց համապատասխան թ. 140 կարգադրությունը:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 31, թթ. 39-42: Ժողովի մասին տե՛ս «Սովետական Հայաստան», 1965, մարտի 13:

Օպերայի թատրոնի շենքում գումարված ժողովում «Խորհրդային Հայաստանը բոլոր աշխատավոր հայերի հայրենիքն է» թեմայով զեկուցեց Ն.Հարությունյանը: Ելույթով հանդես եկան Յա. Զարոբյանը, Վ.Համբարձումյանը, Ս.Կապուտիկյանը, Պ.Սելյանը:

Արդեն 1965թ. մարտի 12-ի ժողովում ընդունվեց «Խորհրդային Հայաստանի նոր քաղաքացիների» (նկատի ունեին հայրենադարձներին) «սրտալից» ողջույնի նամակը՝ ուղղված ԽՄԿԿ Կենտկոմին և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին: Կոմունիստական նշանաբաններով լեցուն (ինչը հաջորդ օրն իսկ Յա. Զարոբյանն անմիջապես Մոսկվա ուղարկեց) այս նամակում միանշանակ շեշտվում էր. «ՀԽՍՀ-ն օտարության մեջ ապրող աշխատավոր հայերի միակ Հայրենիքն է: Օտար երկնքի տակ գտնվող բոլոր ազնիվ հայերի սրտերն ու մտքերը, երազանքներն ու ակնկալությունները մայր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հետ են: Օտարության մեջ ապրող հայի համար ամենից մեծ երջանկությունը Հայրենիք վերադառնալն է, նախնիների հողում իր մշտական օջախ ունենալը: Մենք մեր սրբազան պարտականությունն ենք համարում ինքնամոռաց աշխատանքով արժանի լինել խորհրդային քաղաքացու մեծ կոչմանը»[1]:

Ի դեպ, ժողովն անցկացվեց ՀԽՍՀ բյուջեի հաշվին:

Եղեռնի 50-ամյակով էր պայմանավորված պետական մակարդակով զանգվածային հայրենադարձության վերսկսումը: Ինչ խոսք, դեռ 1959-ից անհատապես հայրենադարձվում էին, սակայն ընդամենը մեկ կամ մի քանի տասնյակ հոգի: Սակայն, արդեն 1961թ. հետո, ի տարբերություն նախորդ տարիների, հայրե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 41, թթ. 43-45:

նադարձությունը դարձավ միանգամայն կազմակերպված, բոլորն ապահովվեցին բնակարանով, աշխատատեղով, թոշակով, ուսումնական հաստատություններում և մանկապարտեզներում տեղավորվելով: Հայրենադարձներն ազատվեցին ներկրվող գույքի մաքսից և երկու տարով՝ բոլոր տեսակի հարկերից: Ստեղծվեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե, նաև՝ հատուկ կառավարական հանձնաժողով:

Յա. Զարոբյանն անձամբ մեծ կարևորություն էր տալիս հայրենադարձությանը: Դրա վկայությունը 1961թ. սեպտեմբերին ՀԿԿ 22-րդ համագումարում նրա զեկուցման հետևյալ հատվածն է. «Մեր պարտքն ենք համարում ճակատագրի կամոք աշխարհասփյուռ մեր հարյուր հազարավոր հայրենակիցներին օգնել նրանց վերադառնալ իրենց միակ հայրենիք՝ Խորհրդային Հայաստան, նրանց նորմալ կյանքի և ստեղծարար աշխատանքի համար բոլոր պայմանները ստեղծել: Այդ խնդիրը քաղաքական մեծ նշանակություն ունի, և մենք պետք է այն բարձր կազմակերպվածությամբ, մտածված իրագործենք, 1946-1947թթ. զանգվածային հայրենադարձության ժամանակ բնակարանի և աշխատանքի ապահովման հետ կապված թերացումները չկրկնելով: Հայրենիք՝ Խորհրդային Հայաստան վերադարձի կազմակերպման հարցը կարճաժամկետ գործընթաց չէ: Մեր հանրապետության ժողտնտեսության մոտակա 20 տարվա զարգացման հեռանկարը, որի ուրվագծերն արդեն մշակված են, թույլ կտա հաջողությամբ իրականացնել հայերի՝ հայրենիք հետագա վերադարձի խնդիրը»[1]:

[1] Տե՛ս *Заробян Я.Н.,* Отчетный доклад, сс. 115-117.

Որպես նման դիրքորոշման հետևողական արդյունք՝ միայն 1961թ. ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հայրենադարձության մասին մի շարք որոշումներ ընդունեց: Օրինակ, 1961թ. փետրվարի 15-ին, մարտի 24-ին, ապրիլի 28-ին, հունիսի 9-ին, հունիսի 15-ին, օգոստոսի 29-ին, հոկտեմբերի 5-ին, նոյեմբերի 5-ին[1]:

Յա. Զարոբյանը և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա.Քոչինյանը 1963թ. դեկտեմբերի 28-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ա.Կոսիգինին դիմեցին հայրենադարձների բնակարանային և կենցաղային հարցերը լուծելու համար լրացուցիչ միջոցներ տրամադրելու խնդրանքով[2]: Նշելով հայրենադարձության ավելացման առթիվ ՀԽՍՀ-ի համար բնակարանային շինարարության անհրաժեշտ ծավալների ավելացման առթիվ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշման փաստը, միաժամանակ տեղեկացվում էր, որ ինչպես 1962թ., այնպես էլ 1963թ. ԽՍՀՄ Պետպլանն այդ հանձնարարությունը տարեկան պլաններում չի հաշվառել: Եվ արդյունքում՝ ՀԽՍՀ-ն բնակարանային սահմանափակ ֆոնդի և բնակչությանը բնակարանով ապահովման ծայրահեղ ցածր մակարդակով ստիպված բնակարաններով առաջնահերթ ապահովում է նոր եկած հայրենադարձներին: Մասնավորապես, միայն 1963թ. այդ նպատակով տրամադրվել էր 41 հազ. քառակուսի մետր բնակարան՝ երկար տարիներ բնակարան ստանալու հերթում սպասող ՀԽՍՀ քաղաքացիների հասանելիք հաշվից:

[1] Համապատասխանաբար տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, զզ. 22, 24, 26, 28, 29, 31, 35; ց. 42, գ. 22:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 43, գ. 48, թ. 100: Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, էջ 20-21:

Դրանից բացի, դեռ 1946-1947թթ. հայրենադարձված շուրջ 4 հազ. ընտանիք բնակվում էր նկուղներում կամ վարձով և բնակարանով ապահովված չէր: Նկատի ունենալով այս ամենը՝ խնդրվում էր 1964թ. հայրենադարձների ապահովման նպատակով լրացուցիչ 5 միլիոն ռուբլի հատկացնել 35 հազ. քառակուսի մետր բնակարան կառուցելու համար:

ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1961թ. օգոստոսի 12-ին ՀԽՍՀ Նախարարների խորհրդին թույլատրել էր 1961-1965թթ. արտասահմանյան երկրներից կազմակերպել հայերի վերադարձ հայրենիք՝ մինչև 40 հազ. հոգի: Հայերի զանգվածային ներգաղթը սկսվեց 1962թ.: Երեք տարվա ընթացքում հայրենադարձվեց և աշխատանքով ապահովվեց 4.200 մարդ: ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1961թ. սեպտեմբերի 29-ի որոշմամբ 1965թ. համար հայտարարվել էր 15 հազ. հոգու ընդունման ծրագիր, սակայն «հաշվի առնելով, որ մի շարք օտար երկրների կառավարություններ զանգվածային հայրենադարձության համաձայնություն չտվեցին, ինչպես նաև լավագույն աշխատատեղավորման նպատակներով» ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1965թ. հունվարի 9-ին ՀԿԿ Կենտկոմին առաջարկեց հայրենադարձների ընդունման 1965թ. պլանը 15 հազ. փոխարեն հաստատել 6 հազ.[1]:

ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը 1965թ. հունվարի 26-ին, այդ թվաքանակը նկատի ունենալով, միաժամանակ կուսակցական և գործադիր իշխանություններին պարտավորեցրեց

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ.15, թ. 49: ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը հայրենադարձների ընդունման միջոցառումների մասին 1964թ. մարտի 6-ին և 1965թ. մարտի 2-ին որոշումներ էր ընդունել: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 70, թթ. 2-6; ց. 96, գ. 73, թ. 19:

լուծել հայրենադարձների ընդունման, բնակարանով ապահովման և աշխատանքի տեղավորման հետ կապված բոլոր հարցերը: Հաստատվեց հայրենադարձների ընդունման և տեղավորման կառավարական հանձնաժողով Նախարարների խորհրդի նախագահի 1-ին տեղակալ Սուրեն Մովսիսյանի գլխավորությամբ[1]:

1965թ. հոկտեմբերի 19-ին Յա. Զարոբյանը և Ա.Քոչինյանը դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմին և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին հայրենադարձությունը շարունակելու խնդրանքով[2]: Նշվում էր, որ հայերի զանգվածային ընդունումը սկսվել է 1962թ., և 3 տարվա ընթացքում հայրենադարձվել ու աշխատանքով ապահովվել է 4.200 մարդ: Հայրենադարձության նման ոչ մեծ ծավալը բացատրվում էր նրանով, որ հայրենադարձներին ընդունում են նրանց բնակարանով ու աշխատանքով ապահովման հնարավորությանը համապատասխան: Հաշվի առնելով հայերի հայրենադարձությունից «քաղաքական մեծ օգուտը»՝ խնդրում էին թույլատրել ըստ 1961թ. օգոստոսի 10-ի ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշման՝ շարունակել արտասահմանյան երկրներից հայերի հայրենադարձությունը և հետագա տարիներին՝ մինչև նշյալ որոշմամբ նախատեսված 40 հազ. մարդու չափաբաժինը:

ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1966թ. օգոստոսի 9-ի «Արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ հայերի հայրենադարձության մասին» որոշմամբ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին թույլատրեց 1966-1970թթ. իրականացնել հայերի հայրենադարձություն՝ յուրաքանչյուր տարի 1.000 մարդ թվաքանակով, նրանց

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 48:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 42, թ. 79:

համար նախօրոք աշխատանքի տեղավորման և բնակարանով ապահովման համապատասխան պայմանների առկայության հիման վրա: Հատուկ շեշտադրմամբ, որպես կանոն, արգելվեց անաշխատունակ տարրերի, ինչպես նաև արտասահմանում ծնողներին և երեխաներին թողնող անձանց մուտքը ԽՍՀՄ: Հայրենադարձության կազմակերպման նպատակով, ՀԽՍՀ Նախարարների խորհրդին թույլատրվեց ԽՍՀՄ ԱԳՆ-ի հետ համաձայնությամբ իր ներկայացուցիչներին ուղարկել արտասահման: Ի դեպ, ուշագրավ է այն հանգամանքը, որ 1966թ. հայրենադարձության համար ծախսերը պետք է հաշվարկվեին ՀԽՍՀ բյուջեի միջոցների հաշվին[1]:

Մոսկովյան վերադասի նշյալ որոշման հիման վրա արդեն 1966թ. սեպտեմբերի 8-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը հաստատեցին 1966-1970թթ. հայերի հայրենադարձության համակարգված ծրագիր՝ լրիվ հենված ՀԽՍՀ բյուջեի միջոցների վրա: Հիշատակելի է նաև այն կարևոր փաստը, որ այդ ամենի կատարման իրականացումը և համակարգումը հանձնարարվեց պետական լիազոր մարմնի՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից «Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեին», որին բոլոր պատկան պետական մարմինները պարտավոր էին ցույց տալ «աջակցություն և ամենայն օգնություն, ժամանակին ընդունել հայրենակիցների բնակարանային-կենցաղային և աշխատանքային տեղավորման բոլոր միջոցները, նրանց կարիքներին և հարցումներին ցուցաբերել առավելագույն ուշադրություն»[2]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65, թթ. 40-41:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 48, թթ. 4-5:

Որոշվեց հայրենադարձներին տեղավորել հիմնականում Լենինական, Կիրովական, Աբովյան, Հրազդան, Չարենցավան, Իջևան քաղաքներում և Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Թալինի, Վեդիի և Աշտարակի շրջաններում՝ ըստ զբաղմունքի և մասնագիտության: Սկսած 1967թ.՝ հրահանգվեց ՀԽՍՀ բյուջեում նախատեսել հայրենադարձության նպատակների համար անհրաժեշտ դրամական միջոցներ: Հրահանգվեց Բաթումում և երթուղում, մինչև տեղ հասնելը, կազմակերպել հայրենադարձվողների սննդի, բժշկական և մշակութային սպասարկումը: Ուշադրության կենտրոնում էին պահվում հայրենադարձների նորովի խորհրդային քարոզչության հարցերը: Ըստ այդմ, պարտավորեցրին միջոցներ ձեռնարկել հայրենադարձների շրջանում «քաղաքական և զանգվածային-բացատրական աշխատանքների, մարքս-լենինյան գաղափարախոսության ոգով դաստիարակության» ուղղությամբ[1]:

ՀԿԿ Կենտկոմի նոր 1-ին քարտուղար Ա.Քոչինյանը և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Բ.Մուրադյանը հայրենադարձությունը թույլատրելու մասին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարության 1966թ. փետրվարի 21-ի որոշման մասին վերջինիս հանձնարարությամբ արդեն 1966թ. մարտի սկզբին ԽՍՀՄ Նախարարների խորհրդին համապատասխան որոշման նախագծի առաջարկ ներկայացրին[2]: Ըստ դրա՝ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը բավարարում էր տարեկան 5 հազ. հոգու հայրենադարձության քանակը: Հայրենադարձությունը պետք է կատարվեր միայն անհատական ընտրությամբ, նրանց բնակու-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 48, թթ. 4-5:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 68, թ. 68:

թյան երկրների քաղաքական իրավիճակի հաշվառմամբ, ըստ մասնագիտությունների բնակարանով և աշխատանքով նախ-օրոք ապահովմամբ: ԽՍՀՄ Պետպլանին հանձնարարվելու էր տարեկան պլաններում նկատի ունենալ ՀԽՍՀ-ին բնակարանա-յին, կոմունալ և կուլտուր-կենցաղային շինարարության ոլորտ-ներում կապիտալ ներդրումների ավելացումը, ինչն անհրա-ժեշտ էր հայրենադարձների ընդունման համար: ԽՍՀՄ ֆի-նանսների նախարարությանը պարտավորեցվելու էր 1966թ. սկսած՝ ՀԽՍՀ-ին հայրենադարձների տեղափոխման և ընդու-նելության հետ կապված ծախսերի հատուցման տրամադրում[1]:

Յա. Զարոբյանի սկսած գործը շարունակեց Ա.Քոչինյանը: Այդ առումով մեջբերենք ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Վլադի-միր Ղալումյանի վկայությունը. «Ա.Քոչինյանը ուշադրության կենտրոնում էր պահում սփյուռքահայության և հայրենիքի միջև կապի ամրապնդման, զարգացման, էլ ավելի սերտացման գեր-խնդիրը: Անչափ ուշադիր էր հայրենադարձների նկատմամբ, հետաքրքրվում էր նրանց աշխատանքով, բնակարանով ապա-հովվածության, սոցիալական վիճակի բարելավման հարցերով: Անհրաժեշտության դեպքում ինքն էր անձամբ զբաղվում այդ հարցերի կարգավորմամբ»[2]:

Եվ միանգամայն օրինաչափ էր, որ նրա ղեկավարության օրոք ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը բազմաթիվ որոշումներ է ընդունել հայրենադարձներին օգնության, բնակարանով ապահովման և կենցաղային հարցերի լուծման վերաբերյալ[3]:

[1] Տե՛ս Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, էջ 29-31:
[2] Տե՛ս Ժամանակակիցները Անտոն Քոչինյանի մասին, էջ 22:
[3] Օրինակ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 95, գ. 947, թ. 13; ց. 96, գ. 260, թ. 25:

Նշյալի համապատկերում արդեն 1967թ. մայիսի 12-ին Ա.Քոչինյանը, նկատի ունենալով Սփյուռքի հետ տարվող աշխատանքների ծավալի աննախադեպ աճը, դիմեց ԽՄԿԿ Կենտկոմ՝ ՀԿԿ Կենտկոմում Տեղեկատվության և արտասահմանյան կապերի բաժնի ստեղծման թույլտվության խնդրով[1]:

1970թ. հունիսի 10-ին Ա.Քոչինյանը և Բ.Մուրադյանը դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմ և ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ՝ հայրենադարձությունը մինչև 1975թ. շարունակելու թույլտվության խնդրանքով՝ ՀԽՍՀ բյուջեի հաշվին[2]: Նշվում էր, որ հայրենադարձությունը կատարվում է ՀԽՍՀ բյուջեի հաշվին: Հաշվի առնելով հայրենադարձության քաղաքական նշանակությունը և այն փաստը, որ 1970թ. լրանում էր ԽՍՀՄ Նախարարների խորհրդի սահմանած հայրենադարձության ժամկետը, խնդրվում էր թույլատրել շարունակել այն 1971-1975թթ. և հետագա տարիներին:

Հայրենադարձության նկատմամբ առանձնակի հոգատար վերաբերմունք ուներ Սփյուռքի կոմիտեն: 1966թ. ապրիլի 19-ին տեղի ունեցած հայրենադարձների 2-րդ հավաքում կոմիտեի նախագահ Վ.Համազասպյանը մասնավորապես կարևորեց հետևյալը. «Հայրենադարձը հպարտ է իր երկրով, նա հայրենիքի բոլոր գործերի ղեկավարման ու կառավարման ակտիվ մասնակիցն է: Հայրենադարձը իր հայաստանցի հարազատ եղբոր հետ լծվեց սոցիալիզմի կառուցմանը, նրա հետ աշխատեց գործարանում, նրա հետ մշակեց հողը, սովորեց միջնակարգ ու բարձրա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 47, գ. 57, թթ. 112-114:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 50, գ. 53, թթ. 143-145: Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, էջ 63-65: Այս նամակի մեկ օրինակը Մոսկվայում Ա.Քոչինյանը փոխանցել էր Լ.Բրեժնևին:

գույն ուսումնական հաստատություններում և նրա հետ գրոհեց գիտության ու տեխնիկայի բարձունքները: Սովետական Հայաստանը միշտ մայրական սեր է տածել դեպի սփյուռքահայ իր հարազատները: Կոմիտեի ստեղծումը հայրենասիրական մեծ քայլ է հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման համար, մի «ոսկի կամուրջ», որի վրայով միմյանց են ողջագուրվում հայրենիքի ու սփյուռքի հարազատները: Հայրենիքի հետ կապը մեծ ուժ է սփյուռքահայության համար հայրենասիրական ոգին վառ պահելու տեսակետից: Սփյուռքը, հակառակ իր ջանքերին և ուժին՝ վաղ թե ուշ դատապարտված է կորստյան, եթե չամրապնդի իր կապերը մայր հայրենիքի հետ»[1]:

ՀԽՍՀ պետական կառավարման համակարգում գործում էր հատուկ մարմին, որի գործառույթը հենց հայրենադարձների սոցիալ-տնտեսական, բնակարանա-կենցաղային, մշակութային-կրթական տարաբնույթ հարցերի լուծումն էր: Այսպես, դեռ 1945թ. դեկտեմբերի 8-ին ՀԽՍՀ կառավարության որոշմամբ ստեղծվել էր Հայ էմիգրանտների ընդունման և տեղավորման կոմիտե: 1951թ. այն վերանվանվեց Վերաբնակեցման և բանվորների կազմակերպված հավաքագրման գլխավոր վարչություն: Իսկ արդեն 1961թ. օգոստոսի 29-ին այս մարմինը վերակառուցվեց, և ստեղծվեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե[2]:

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 32, թթ. 1-23:
[2] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 11, գգ. 1-10:

Այս պետական մարմինը 1959-1985թթ. նիստերում[1] քննարկեց հայրենադարձների[2] հարցը: 1965թ. առանձնակի ակտիվ աշխատեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդի Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողովը, և զբաղվելով անհատական հայրենադարձման հարցով՝ թույլատրեց 244 հոգու մուտք[3]:

ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարությունը ևս զբաղվում էր հայրենադարձությամբ՝ 1961թ. կազմակերպչական հրահանգների պատրաստում[4], 1963թ. համապատասխան ներկայացուցիչների ուղարկում գաղթօջախներ[5], 1958-ից՝ հայրենադարձության կազմակերպում[6], 1960-1980-ական թվականներին սփյուռքահայ կառույցների հետ համագործակցության ամրապնդում[7], ուսուցիչների վերապատրաստման դասընթացների[8] և ուսանող-ասպիրանտների ուսումնառության[9] կազմակերպում:

Անշուշտ, հասկանալի պատճառներով, 1965 թվականը ՀԽՍՀ ԱԳՆ-ի համար առավել արդյունավետ էր: Եվ այդ առումով ամենևին պատահական չէր, որ նրա գործունեության համար այդ տարի անկյունաքարային նշանակություն ունեին՝ 1. արտասահմանում հայ գաղթօջախների, 2. հայրենադարձության հար-

[1] Տե՛ս ՀԱԱ, Ֆոնդ 326, ց. 1, զզ. 328, 352; ց. 2, զզ. 24, 28, 35, 52, 72, 87, 121, 143, 147, 153, 167, 179; ց. 4, զզ. 7, 28, 43, 70, 110, 163, 173, 203:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 11, զզ. 11, 13, 84, 89; ց. 12, զզ. 10, 11, 16, 19-21, 24-26, 28, 29:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 380
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 307, թթ. 1-10:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 332, թթ. 1-6:
[6] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 257; ց. 2, զզ. 21, 25, 48, 61, 135, 162, 194:
[7] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 3, զզ. 2, 17, 19, 23, 35, 36, 51; ց. 4, զզ. 94, 183, 220; ց. 7, գ. 9:
[8] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, զզ. 325, 476:
[9] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, զզ. 520, 563, 583; ց. 4, զզ. 25, 85:

ցերը: Այդ ամենը որպես գերակա առաջնահերթություն համարելով՝ ԱԳՆ-ն ընդգծում էր. «Արտաքին գործերի նախարարությունը գտնում է, որ մեր շահերից է բխում, որպեսզի հետայսու ավելի ուժեղացնենք և ընդլայնենք արտասահմանյան գաղութների հետ կապերը»: Բավական ուշագրավ պետք է համարել պաշտոնական հաշվետվության մեջ (որը նաև պարտադիր կարգով հղվում էր ԽՍՀՄ ԱԳՆ-ին) հետևյալ հանգամանքի փաստագրումը. «Հայկական գաղութների կյանքում մեծ իրադարձություն էր թուրքերի կողմից հայկական կոտորածների 50-ամյակի նշումը: Բոլոր գաղութներում այն լայնորեն նշեցին: Այդ առթիվ հայկական կազմակերպությունները և ընկերությունները Թուրքիայում հայկական հողերի՝ Հայկական ԽՍՀ-ին վերադարձի հարցը կրկին բարձրացրեցին: Նաև բարձրացվեց՝ մասնավորապես դաշնակցական մամուլում, Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Ախալքալաքը Հայկական ԽՍՀ-ին վերադարձի հարցը»[1]:

Եզրափակելով՝ ներկայացնենք որոշակի ամփոփ վիճակագրություն: 1962-1965թթ. հայրենադարձվել է 6.849 հոգի: Եթե մինչև 1964թ. ՀԽՍՀ բուհեր էր ավարտել 1.300, ապա 1966թ. դրությամբ սովորում էր շուրջ 1.000 հայրենադարձ: Հայրենադարձների տոկոսային կշիռը հանրապետության տնտեսական, գիտամշակութային բոլոր ոլորտներում զգալի էր: Այսպես, 1966թ. կային 400 ինժեներ, Երևանի ձեռնարկություններում՝ 8.000 բանվոր-ծառայող, Երևանի դպրոցներում՝ 400 ուսուցիչ, ԳԱ համակարգում՝ 200 գիտաշխատող: Վերջապես, հայրենադարձներ էին հայ մշակույթի անվանի գործիչներ Գոհար Գասպարյանը, Միհրան Երկաթը, Վարդուհի Վարդերեսյանը, Հով-

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 380, թթ. 1-9:

հաննես Բաղալյանը, Հովհաննես Չեքիջյանը, Օհան Դուրյանը, Պերճ Զեյթունցյանը[1]:

Իսկ ընդհանուր առմամբ, 1962-1982թթ. հայրենադարձվել էր 31.910 հոգի[2]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 31:

[2] Տե՛ս *Մելիքսեթյան Հ.,* Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.): Ե., 1985, էջ 241, 300:

7. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒՄԸ

Հայոց ցեղասպանության 50-ամյակի համազգային զարթոնքով էր պայմանավորված նաև Արցախի հարցի հերթական բարձրացումը, երբ հարցի լուծման համար միանգամայն առարկայական պայմաններ և իրական հնարավորություններ էին ստեղծվել: ԽՄԿԿ և ՀԿԿ Կենտկոմներին այդ հարցի լուծման նպատակով բազմաթիվ դիմում-նամակներով դիմել էին հասարակայնության տարբեր խավերի ներկայացուցիչներ: Այսինքն՝ նպաստավոր իրավիճակ էր ձևավորվել, ինչը բոլորին իրատեսական հույսեր էր ներշնչում[1]:

Հատկանշական է, որ նույն ժամանակահատվածում արցախահայությունը նույնպես անմասն չմնաց, և շարժում սկսվեց Արցախը Հայաստանին վերամիավորելու պահանջով: Այսպես, դեռևս 1962-1963թթ. ԼՂԻՄ-ից շուրջ 2.500 հոգու ստորագրությամբ դիմում հղվեց ԽՍՀՄ ղեկավար Ն.Խրուշչովին: Ներկայացնելով հարցի պատմությունը, Ադրբեջանի կազմում արցախահայության թշվառ գոյությունը և ադրբեջանական իշխանությունների հայահալած խտրական քաղաքականությունը՝ դիմումագիրները պահանջում էին «անհապաղ վճռել ԼՂԻՄ-ը և

[1] Արցախի հարցի բարձրացման մասին տե՛ս *Աբրահամյան Հր.,* Մարտնչող Արցախը, 1917-2000: Գիրք 2, 1923-1985. Ե., 2005; *Խաչատրյան Կ.,* Խորհրդային Հայաստանի ղեկավարության քայլերը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ի հետ վերամիավորելու ուղղությամբ (1945-85թթ.): Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան: Զեկուցումների հիմնադրույթներ, Ե., 2007, էջ 66-72:

հարակից հայկական բնիկ շրջանները Հայկական ԽՍՀ-ի մեջ վերամիավորելու կամ ՌԽՖՍՀ-ի կազմի մեջ մտցնելու հարցը»[1]:

1965-1966թթ. Խորհրդային Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում շարունակվեցին Արցախը Հայաստանին վերամիավորելու պահանջները: Արդեն վերը նշեցինք, որ այդ հարցը նաև 1965թ. ապրիլյան ցույցի մասնակիցների գլխավոր պահանջներից մեկն էր:

Հասկանալի պատճառներով Յա. Զարոբյանն Արցախի հարցը պետական մակարդակով մոսկովյան վերադասի առջև չէր կարող բարձրացնել՝ Հայոց ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչումն ավելի ռազմավարական նշանակություն ուներ: Նաև, միաժամանակ երկու մեծ գերխնդրի բարձրացումն ինքնին կնշանակեր երկուսի էլ տապալում:

Արցախյան հարցի բարձրացումը ժամանակաշրջանի բերումով վերապահված էր ՀԿԿ նոր ղեկավար Անտոն Քոչինյանին: Այս առումով տեղին է մեջբերել վերջինիս ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Եղիշե Ասծատրյանի տված գնահատականը. «Քոչինյանը հանրապետության այն հազվագյուտ ղեկավարներից էր, որ եղել էր Ղարաբաղում, ծանոթ էր նրա բնական պայմաններին և ականավոր գործիչներին: Գուցե այդ էր պատճառը, որ նա մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Ղարաբաղի և նրա ժողովրդի բախտորոշ խնդիրների նկատմամբ: Մենք Քոչինյանի հետ շատ ենք զբաղվել Ղարաբաղի ակտիվի եռուն գործունեությանը նպաստելու և բուն Հայաստանի մտավորականության՝ այդ ուղղությամբ հարցադրումներին ընթացք տալու»[2]:

[1] Տե՛ս «Սփյուռք», Բեյրութ, 1963, դեկտեմբերի 31:
[2] Տե՛ս Ժամանակակիցները Անտոն Քոչինյանի մասին, էջ 70:

Եվ որպես Հայոց ցեղասպանության 50-ամյակի համազգային զարթոնքի արդյունք՝ Արցախյան պահանջատիրության գագաթնակետը դարձավ 1966 թվականը, երբ հարցը բարձրացվեց արդեն ՀԽՍՀ բարձրագույն ղեկավարության մակարդակով: 1966թ. օգոստոսին ԽՄԿԿ 23-րդ համագումարին, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ.Բրեժնևին, Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներ Վ.Ախունդովին ու Ա.Քոչինյանին էին դիմել Հայաստանի գիտական և ստեղծագործական շրջանակների ներկայացուցիչները[1]:

Այդ դիմումում մասնավորապես նշվում էր. «Լեռնային Ղարաբաղի ազգակիցներին Հայկական ԽՍՀ կազմում մեզ հետ ուս ուսի մեր միալեզու ազգային մշակույթը, գիտությունն ու տնտեսական կյանքը զարգացնելով տեսնելու հայ ժողովրդի նվիրական, խոր ու անկեղծ երազանքը՝ լիովին համընկնում է լենինյան մեծ սկզբունքների հետ:

Ղարաբաղը Հայաստան է տարածքով և ազգային կազմով, Հայաստան է՝ կենսաձևով, հոգևոր կերտվածքով ու կենցաղով: Ղարաբաղի պատմությունը՝ Հայաստանի պատմությունն է՝ հայկական են Ղարաբաղի լեզուն, արվեստը և գրականությունը: Եվ քանի որ գոյություն ունի Հայկական ԽՍՀ, նպատակահարմար չէ նրա անբաժանելի մասը արհեստականորեն կտրել Խորհրդային Հայաստանից: Հավատում ենք, որ դուք կդառնաք այս հարցի լուծման նախաձեռնողները: Մենք համոզված ենք, որ այս հարցի լուծումը էլ ավելի կամրապնդի մեր ժողովուրդների համագործակցությունը, իսկ սահմանների անհրաժեշտ

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65բ, թթ. 1-2; Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, էջ 33-34:

ճշտումը մեկ անգամ ևս կապացուցի մեր ժողովուրդների եղբայրությունը և կապիտալիստական աշխարհին ցույց կտա, որ սոցիալիզմի երկնակամարի տակ իշխում է փոխըմբռնման ոգին, որ ազգամիջյան բոլոր հարցերը վճռում են կոմունիստական բարձր գիտակցականությամբ: Մենք երկյուղածությամբ ենք փայփայում մեր լինելիության հիմքերի հիմքը՝ մեր բարեկամությունը:

Մեր երկու ժողովուրդները հոգեբանորեն վաղուց են հասունացել հարցի նման լուծման համար: Դեռ ավելին, մենք վստահ ենք, որ յուրաքանչյուր ադրբեջանցի հոգու խորքում համոզված է հայ եղբայրների պահանջների արդարացիության մեջ: Մեր երկու ժողովուրդները հոգեբանորեն պատրաստ են հարցի նման լուծմանը, քանի որ խորհրդային կարգերի 50 տարիների ընթացքում մենք դաստիարակվել ենք ինտերնացիոնալիզմի ոգով, եղբայրության ոգով: Մենք արմատախիլ ենք արել ազգամիջյան հակակրանքներն ու նախախորհրդային շրջանի բացասական տրամադրությունները և նման հարցերի վճռման ժամանակ պետք է հենվենք ոչ թե ինչ-որ մտացածին տարաձայնությունների, այլ մեր կոմունիստական փոխըմբռնման և անկեղծ համագործակցության վրա:

Մենք առավել քան համոզված ենք, որ այս հարցի լուծումը վստահելի ձեռքերում է, և խիստ ցանկալի կլինի, որ այն համընկներ Հայաստանում խորհրդային իշխանության կարգերի հաստատման տարելիցին»[1]:

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65բ, թթ. 1-2; Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, էջ 33-34:

Այս հավաքական նամակը 106 էջ կազմող ծավալով ստորագրել էին ԳԱ, ԵՊՀ, Հայկական և Ռուսական մանկավարժական, Պոլիտեխնիկական, Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների, Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի, Գրողների և Նկարիչների միությունների, հրատարակչությունների, Ռադիոյի կոլեկտիվների անդամները՝ 1906 հոգի, Մ.Սարյանի, Ե.Քոչարի, Հ.Սահյանի, Պ.Սևակի գլխավորությամբ[1]: Նամակի ստորագրությունների բնագրերը 106 էջ և պատճենները 47 էջ ծավալով ուղարկվել են Վ.Ախունդովին և Ա.Քոչինյանին:

Մտավորականության ջանքերին զուգահեռ՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրն ակտուալացվել էր նաև ուսանողական շրջանակներում: Ինչպես հայտնի է, այդ ժամանակաշրջանում, հատկապես Երևանում, գործում էին մի շարք, եթե այդպես կարելի է անվանել, ընդհատակյա կազմակերպություններ (խմբեր), որոնք իրենց պատկերացումների, համոզմունքների և հնարավորությունների չափով, ձգտում էին ակտիվացնել և միավորել սկսված ազգային շարժումը: Այդ համատեքստում, թերևս, բնորոշ է 1966թ. մարտ ամսին իրեն «Միացյալ Ազատ Հայաստան» անվանող խմբի տարածած՝ հայերեն և ռուսերեն լեզուներով տպագրված թռուցիկները, որոնք նույնպես ուղղված էին ԽՍՀՄ ղեկավարությանը: Մասնավորապես թռուցիկներում կոչ էր արվում ապրիլի 3-ին հավաքվել Երևանի օպերային թատրոնի հրապարակում և դիմել մարտի 29-ից ապրիլի 5-ը ընթացող Կոմկուսի 23-րդ համագումարին, որպեսզի վերջինս արդարացի լուծի Ղարաբաղի և Նախիջևանի խնդիրները (տե՛ս Նկ. 1, 2): Այդ խմբի անդամներն էին Ղևոնդ Կարապետյանը,

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65բ, թթ. 3-51:

Ռաֆիկ Հովհաննիսյանը, Միեր Սուքիասյանը, Գագիկ Հարությունյանը, Արմեն Կանայանը, Ռազմիկ Բարսեղյանը, Հայկ Ղանալանյանը, Կարեն Աղամյանը և երեք տասնյակից ավելի այլ երիտասարդներ: Խմբին գաղափարական և կազմակերպչական մեծ օգնություն էր ցուցաբերում «ավագ սերունդը», մասնավորապես տարբեր ինստիտուտների գիտաշխատողներ Բելա Հարությունյանը, Մարտին Իսրայելյանը և Ռաֆայել Տեր-Մաթևոսյանը, որի Պուշկինի փողոցում գտնվող տանն էլ տպագրվել էին այդ թռուցիկները: Տպագրության խնդիրներով հիմնականում զբաղվում էր Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Միեր Սուքիասյանը, որին գործնական օգնություն էր ցուցաբերում նրա հայրը՝ Աբիսակ Սուքիասյանը, որն աշխատում էր Գիտությունների ակադեմիայի տպարանում: Տպագրվեց մոտ 2-3 հազար թռուցիկ, որոնք տարածվեցին բուհերում, կինոթատրոններում և բնակելի շենքերի փոստարկղերում: Ցավոք, ապրիլի 3-ին Երևանում առավոտվանից սկսվեց արտակարգ հորդ և երկարատև անձրև, ինչն էլ, ըստ ամենայնի, տապալեց միտինգ իրականացնելու բոլոր հույսերը:

Նկար 1



ԲՈՂՈՔԻՆ

ԲՆԱԳԻԾ ՀԱՅՏՆԻ Է. ՍԱՀՍՏԻ 29-ՈՒ ԱԼԱՖԱԼՈՒ
Է ՍՈՒՄԿ 23-ԱՄ ՀԱՄԱՀՈՒՄՈՒՆ: ԵՎ ՔԱՆԻ ՈՐ ԽՈՐ-
ՀՈՐԻՍՅՈՒՆ ԱԽՈՒԵՑԱՆ Ն ԳԱՏԱԿԱ Է ՑԱՆԱԼԻ ԺՈՂՈՎՈՒՄ
ԿՈՐՈՒԹՅԱՆ ԱԿԵԼԻ ՕՐ ԱՎԵԼԻ ՄԱՍԱԿԱՑ ԴԱՍԱՑՈՒԵԼ ՊԵՏ-
ՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԵՐԻՆ. ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻ
ԸՆԿԵՐՈՒՄԻ ԿՈՉԻՆ 3-ԻՆ ԺԱՄԸ 11-ԻՆ ՀԱԿԱՌԱԿԵՑԵԼ
ՕՊԵՐԱՑԻԻ ՀՐԱՄԱՅՈՎ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԵՑԵԼ ՈՐՈՇԵՆԻ
ՁԻ ԱՅՍ ՍՐՈՒՄ ՀԱՄԱՐՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐԵՐԻ ՇԱՆ-
ՐԱՊԵՏԻ ԵՎ ԴԱՄԲԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ:

ГРАЖДАНЕ!

СРАЗУ ЖЕ ПОСЛЕ УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АРМЕНИИ ПРАВИТЕЛЬСТВО СОВ. АЗЕРБАЙДЖАНА ДОБРОВОЛЬНО ОТКАЗАЛОСЬ ОТ ОБЛАСТЕЙ НАГОРНОГО КАРАБАХА И ОБ'ЯВИЛО ОБ ЭТОМ 1-го ДЕК. 1920 г.

2 ДЕК. РЕВКОМ АЗЕРБАЙДЖАНА ЗАЯВИЛ, ЧТО ТЕРРИТОРИИ ЗАНГЕЗУРСКОГО, НАХИЧЕВАНСКОГО УЕЗДОВ ЯВЛЯЮТСЯ НЕРАЗДЕЛЬНОЙ ЧАСТЬЮ СОВ. АРМЕНИИ, А ТРУДОВОМУ КРЕСТЯНСТВУ НАГОРНОГО КАРАБАХА ПРЕДОСТАВЛЯЕТСЯ ПРАВО САМООПРЕДЕЛЕНИЯ. см. "ВЕЛИКАЯ ОКТ. СОЦ. РЕВ. И ПОБЕДА СОВ. ВЛАСТИ В АРМЕНИИ." ЕР. 1957 г. стр. 437.

ЭТО БЫЛО РАЗРЕШЕНИЕ ВОПРОСА НА ЛЕНИНСКОЙ ОСНОВЕ. ОДНАКО ПРОШЛО 45 ЛЕТ, НО ОНО НЕ ОСУЩЕСТВЛЕНО. НАШ ДОЛГ НАПОМНИТЬ ОБ ЭТОМ XXIII С'ЕЗДУ КПСС И ПОТРЕБОВАТЬ ЕГО ОСУЩЕСТВЛЕНИЯ. СОБЕРЕМСЯ 3-го АПРЕЛЯ В 11ч. НА ПЛОЩАДИ ПЕРЕД ОПЕРОЙ И СКАЖЕМ НАШЕ СЛОВО.

1966թ. օգոստոսի 8-ին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը որոշում ընդունեց, որով հանձնարարվում էր Ադրբեջանից Ախունդովին, Ալիխանովին, Իսկենդերովին և Հայաստանից Ա.Քոչինյանին, Բ.Մուրադյանին, Ն.Հարությունյանին[1] համատեղ ջանքերով քննել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Խորհրդային Հայաստանին միացնելու հնարավորությունը և իրենց առաջարկները ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմին՝ հարցի վերջնական լուծման համար: Ա.Քոչինյանն անհապաղ հրավիրում է ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի նիստ, մեծ եռանդով տեղեկացնում այդ որոշման բովանդակության և անելիքների մասին: Ադրբեջանի ղեկավարության հետ բանակցություններ վարելու համար նյութեր պատրաստելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ ընտրվեց հինգ հոգուց բաղկացած հանձնաժողով[2]:

ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարության հանձնարարությամբ քննելով այս նամակը և նկատի ունենալով, որ Արցախի և Նախիջևանի հիմնահարցերի առաջքաշումը լայն արձագանք և հավանություն է ստացել հանրապետության հասարակայնության շրջանում, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Քոչինյանը և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Բ.Մուրադյանը[3] 1966թ. սեպտեմբերի 30-ին ԽՄԿԿ Կենտկոմին ուղղված նամակով հանգամանալից պատմական հիմնավորումով առաջ

[1] Ըստ ազգանունների նշման հերթականության՝ հանրապետության կոմկուսի առաջին քարտուղար, կառավարության և Գերագույն խորհրդի նախագահության նախագահ:

[2] Հանձնաժողովի կազմում էին ՀԿԿ ԿԿ քարտուղար Ե.Ասծատրյանը և ՀԿԿ Երևանի քաղկոմի 1-ին քարտուղար Լ.Ղարիբջանյանը:

[3] **Մուրադյան Բադալ Հմայակի** – 1961-66թթ. Երևանի քաղկոմի 1-ին քարտուղար, 1966-72թթ.՝ Նախարարների խորհրդի նախագահ:

քաշեցին Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը ՀԽՍՀ-ին միացնելու հարցը[1]:

Նախ և առաջ, ընդհանուր գծերով տրվում էր նշյալ նամակի բովանդակությունը և նշվում, որ «բարձրացված հարցերն առաջին անգամ չէ, որ հարցադրվում են», որ հատկապես վերջին տարիների ընթացքում ԽՄԿԿ և ՀԿԿ Կենտկոմներին բազմաթիվ դիմումներով և նամակներով դիմել են գիտնականների, ստեղծագործական աշխատողների մեծ խմբեր, մտավորականության, բանվորների, գյուղատնտեսության աշխատողների, ուսանողության ներկայացուցիչներ: Արդյունքում՝ այդ հարցերի առաջքաշումը լայն արձագանք և հավանություն է ստացել ՀԽՍՀ հասարակայնության շրջանում, և բաժանելով նման տրամադրություններ՝ ՀԽՍՀ բնակչության գերակշիռ մասը թե՛ գրավոր և թե՛ բանավոր ձևով ակտիվ դնում է Ղարաբաղը և Նախիջևանը Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հարցը:

Որպես հավելում՝ շեշտվում էր, որ նման տրամադրություններ լայնորեն տարածված են և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության շրջանում, ինչի մասին վկայում են ԼՂԻՄ աշխատավորության տարբեր խմբերից ՀԿԿ Կենտկոմում ստացվող բազմաթիվ նամակները:

Ըստ էության, Ա.Քոչինյանի և Բ.Մուրադյանի այս նամակը հիմնավորապես պատրաստված էր՝ պատմական փաստերի ներկայացման և կոմկուսի քաղաքական կոնյունկտուրայի հաշվարկման տեսանկյունից:

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թթ. 1-9; Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, էջ 35-43:

Տարածքային հարցը հայ ժողովրդի համար գնահատելով «կենսական կարևոր նշանակություն» ունեցող, միաժամանակ «մեծագույն ազգային ողբերգություն» էր համարվում Հայաստանի տարածքի «2/3-ը կազմող արևմտյան մարզերի բռնազավթումը» Թուրքիայի կողմից, որն ուղեկցվել էր «մեկ ու կես միլիոն հայերի զանգվածային բնաջնջմամբ»: Հենց այս հանգամանքով էր բացատրվում ՀԽՍՀ բնակչության «ցավագին վերաբերմունքը թուրքական դիվանագիտության նենգության հանդեպ, որ փորձում է խեղաթյուրել պատմությունը և ձերբազատվել ցեղասպանության և հայկական հողերի բռնազավթման համար պատասխանատվությունից»: Անշուշտ, հաշվի էր առնվում նաև մոսկովյան վերադասի հնարավոր բացասական վերաբերմունքը: Այդ հասկանալի պատճառով ՀԽՍՀ ղեկավարները միանգամից նաև շեշտում էին, որ երկար ժամանակի ընթացքում Հայաստանի Կոմկուսը ժողովրդի շրջանում խոշոր բացատրական աշխատանք է վարում, պարզաբանում ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը՝ ուղղված պետությունների միջև խաղաղ համագոյակցության և ժողովուրդների միջև բարեկամության սկզբունքի կյանքում իրագործմանը, և որ ՀԽՍՀ-ն ընկալում է այդ ամենի «ճշմարտացիությունը և իմաստությունը»[1]:

Այսուհանդերձ, Կրեմլի առջև դիվանագիտորեն և նրբանկատ կերպով շեշտվում էր հետևյալ կարևոր հանգամանքը. «Սակայն, եթե Թուրքիայի կողմից խլված տարածքների մասին ներկայումս հարցադրման աննպատակահարմարության մասին փաստարկները ժողովրդի կողմից ընկալվում են ըմբռնմամբ,

[1] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թթ. 1-9:

ապա Հայկական ԽՍՀ-ին Ղարաբաղի և Նախիջևանի վերադարձման հետ կապված հարցերի առումով մենք լուրջ դժվարություններ ենք զգում»: Եվ, ըստ այդմ, նշվում էր, որ. «Բանը նրանում է, որ իրականում Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի պատկանելիությունն անցյալում ոչ ոքի կողմից կասկածի տակ չի դրվել»: Ու ամենաշահագրգռող պարագան. հատուկ շեշտվում էր, որ «արհեստականորեն ստեղծված այդ տարածքային հարցի արդարացի լուծման համար իրական պայմաններ և հնարավորություններ առաջացան և այդ ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկվեցին» հենց խորհրդային կարգերի հաստատումից հետո: Որպես համոզիչ և վստահելի սկզբնաղբյուր հիշատակվում էր Խորհրդային Ադրբեջանի առաջին ղեկավար, «անվանի հեղափոխական գործիչ» Նարիման Նարիմանովի ստորագրած դեկրետը Նախիջևանը Խորհրդային Հայաստանի «անբաժան մաս» հանդիսանալու, իսկ Լեռնային Ղարաբաղին՝ ինքնորոշման լրիվ իրավունք ընձեռելու մասին: Նախիջևանի՝ ՀԽՍՀ կազմում չընդգրկվելը բացատրվում էր խորհրդային հանրապետությունների դեմ Թուրքիայի հետապնդած համաթուրանական նպատակով, իսկ «գերակշիռ հայկական բնակչությամբ» Լեռնային Ղարաբաղը «միակողմանիորեն մտցվեց Ադրբեջանի կազմի մեջ միակ փաստարկի, այսինքն՝ Բաքու քաղաքին Լեռնային Ղարաբաղի բնակչության տնտեսական կապվածության մասին փաստարկի հիման վրա»: Թեպետ Ադրբեջանական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի փոխանցումից հետո անցել է ավելի քան 40 տարի, սակայն ՀԽՍՀ ղեկավարները միանշանակ համոզված փաստում էին, որ որոշման ընդունման պահին «Հայաստանին

Լեռնային Ղարաբաղի պատկանելիության առումով որևէ իրավական և քաղաքական կասկածներ չկային»[1]:

Եվ այդ ենթատեքստում Բաքվին տնտեսական կապվածության գործոնը հարցի լուծման դեպքում իրավացիորեն գլխավոր չէր համարվում, քանզի ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև ողջ Հայաստանն այն ժամանակ տնտեսապես կապված էր Բաքվին և Թբիլիսիին՝ նրա տնտեսական ծայրահեղ հետամնացությունը նկատի ունենալով: Այդ առումով, նշյալ գործոն-փաստարկն արդեն ժամանակավրեպ էր համարվում երկու հիմնավոր պատճառով: Առաջին, Հայաստանը խորհրդային իշխանության տարիներին, «շնորհիվ մեծ ռուս ժողովրդի անշահախնդիր օգնության», դարձել է Խորհրդային Միության առաջատար արդյունաբերական հանրապետություններից մեկը և «լրիվ ի զորու է ապահովել Լեռնային Ղարաբաղի հաջող տնտեսական զարգացումը»: Երկրորդ, Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի քառասնամյա մնալը իրավունք է տալիս խոսել այն մասին, որ դա «չի ապահովել այդ երկրամասի անհրաժեշտ տնտեսական և մշակութային զարգացումը»[2]:

Ավելին, բերվում էին պաշտոնական վիճակագրության տվյալներ, ըստ որոնց՝ Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչությունը վերջին երեսուներեք տարիների (1926 և 1959) ընթացքում պակասել է: Եթե 1926թ. Լեռնային Ղարաբաղում հաշվվում էր 111.694 հայ, ապա 1959թ.՝ 110.053 հայ: Հաշվի առնելով տվյալ ժամանակ Լեռնային Ղարաբաղի բնակչության 85%-ով հայերից բաղկացած լինելը՝ հենց այդ հիման վրա էլ նրանց համար ըն-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թթ. 1-9:
[2] Տե՛ս նույն տեղում:

դունված էր համարվում ազգային ինքնավարությունը: Միաժամանակ, փաստվում էր, որ մարզը կից է Հայաստանին՝ լինելով նրա «օրգանական շարունակությունը»: Ելնելով վերոշարադրյալից՝ եզրակացվում էր. «Այսպիսով, ցանկացած տարածքային հարցի լուծման դեպքում հիմնական փաստարկները խոսում են Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի միավորման հարցադրման օրինաչափության մասին»[1]:

Ուշագրավ անդրադարձ կա հնարավոր այն հակափաստարկի առթիվ, ըստ որի՝ և՛ Ադրբեջանը, և՛ Հայաստանը խորհրդային են, ու տարածքի հանձնման հարցն անիմաստ է: Սակայն նման կարծիքը համարվեց անհիմն, քանզի «այնքանով, որ եթե քաղաքական առումով դա իրականում միևնույնն է, ապա միևնույնը չէ ինչքանով հաջող մշակութային և տնտեսական առումներով զարգանում է այս կամ այն խորհրդային երկրամասը, որտեղ ապրում են խորհրդային մարդիկ»[2]:

Ըստ նամակի՝ ՀԽՍՀ-ին Ղարաբաղը հանձնելով կլուծվեին նաև հետևյալ կարևորագույն հարցերը.

«ա) Լրիվ հասկանալի է, որ հայկական սոցիալիստական մշակույթը, այսինքն՝ Ղարաբաղի բնիկ բնակչության մշակույթը կարող է զգալիորեն լավ զարգանալ Հայկական ԽՍՀ մշակույթի ընդհանուր համակարգում: Ղարաբաղի արվեստը, մամուլը, ռադիոն, մշակութային-լուսավորչական հաստատությունները, գեղարվեստական ինքնագործունեությունն առավել լիարժեք կզարգանային հայ մշակույթի հետ շփման մեջ, այն դեպքում, երբ այժմ նույնիսկ Ղարաբաղում Հայաստանից առանձին հյուրախաղային խմբերը հազվադեպ երևույթ են:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թթ. 1-9:
[2] Տե՛ս նույն տեղում:

բ) Ղարաբաղի բնակչության միջին և բարձրագույն կրթության զարգացման համար Հայաստանն ավելի շատ հնարավորություններ ունի՝ ուսուցչական և այլ կադրերով ապահովման իմաստով: Ղարաբաղի պատանիները և աղջիկները ավարտելով միջնակարգ դպրոցները՝ կրթությունը մայրենի լեզվով շարունակելու ավելի շատ հնարավորություններ կստանան»[1]:

ՀԽՍՀ ղեկավարության համոզմամբ, Լեռնային Ղարաբաղի փոխանցումը կվերացնի ստեղծված իրադրության աննորմալությունը, երբ փոքրաթիվ հայ ժողովուրդը Խորհրդային Միության պայմաններում ունի երկու պետականություն՝ մեկը միութենական հայկական հանրապետություն, և մյուսը՝ հենց նրան հարակից ինքնավար ազգային մարզ, բայց ուրիշ միութենական հանրապետության կազմում: Վերոնշյալի հիման վրա և հաշվի առնելով հանրապետությունում ստեղծված ներկա իրավիճակը՝ Քոչինյանը և Մուրադյանը «ծայրահեղ անհրաժեշտ» էին գտնում Հայկական ԽՍՀ-ին Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի վերադարձման հետ կապված հարցերի քննարկումը[2]:

Միաժամանակ, պարտավորված շեշտվում էր, որ բարձրացված հարցերի քննարկման ժամանակ ելել են Խորհրդային Միության ժողովուրդների և, մասնավորապես՝ հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև եղբայրական բարեկամության հետագա ամրապնդման ապահովման հիմնական գլխավոր խնդրից: Ուշագրավ կերպով շեշտվում էր, որ հարցի լուծված չլինելը կուսակցական մարմինների գործունեության և հանրապետության բնակչության լայն խավերի շրջանում քաղաքական-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թթ. 1-9:
[2] Տե՛ս նույն տեղում:

դաստիարակչական աշխատանքի անցկացման մեջ լուրջ դժվարություններ է ստեղծում:

Իրապաշտական դիրքորոշում որդեգրելով՝ Ղարաբաղի և Նախիջևանի հարցերի նկատմամբ որոշակի տարբերակված մոտեցում էր ցուցաբերվում: Այսպես, ըստ նամակագիրների՝ եթե ՀԽՍՀ-ին Նախիջևանի վերադարձնելը ժամանակակից փուլում կապված է «հայտնի դժվարությունների» հետ (նկատի ունեն Թուրքիայի գործոնը), ապա ՀԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերադարձնելը որևէ դժվարության հետ կապված չէ և կարող է «անցավագին» իրականացվել: Ավելին, «հնարավոր անցանկալի հակազդեցության երկյուղները հիմնազուրկ» էին համարվում, քանի որ Ադրբեջանական ԽՍՀ տարածքի ինչ-որ մասի «օտարման-խլման» մասին չի հարցը դրվում, այլ՝ ինքնավար ազգային մարզի՝ միութենական հանրապետությանը միաձուլման, որոնցում բնիկ բնակչությունը «միատեսակ-հայկական» է[1]:

Որպես վերջնական եզրահանգում՝ Ա.Քոչինյանը և Բ.Մուրադյանը խորապես համոզված էին. «Այդ հարցի դրական լուծումը բացառիկ կարևոր քաղաքական նշանակություն կունենա ու կուսակցության, Լենինյան Կենտրոնական կոմիտեի և ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի իմաստուն ազգային քաղաքականության հաղթահանդեսի նոր վկայություն կհանդիսանա»[2]:

Սակայն, չնայած Ա.Քոչինյանի ակտիվությանը և մեծ շահագրգռվածությանը[3], ադրբեջանական կողմն ամեն կերպ հե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թթ. 1-9:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Հետագայում Ա.Քոչինյանը վկայեց, որ իրեն Մ.Սուսլովը Ղարաբաղի հարցի բարձրացման համար է գործից հանել: Տե՛ս Ժամանակակիցները Անտոն Քոչինյանի մասին, էջ 290-291:

տաձգում էր հանդիպումը, իսկ հետո համոզեց ԽՄԿԿ Կենտկոմի ղեկավարությանը, որպեսզի Ղարաբաղի հարցը հանվի քննարկումից:

Նկատի ունենալով բուն թեմայի հետ կազմակերպչական առումով ոչ անմիջական կապը, այնուամենայնիվ, հիշատակենք նաև ոչ պետական կառույցների՝ ավելի կոնկրետ՝ ազգային-հայրենասիրական խմբերի, գործունեության որոշ օրինակներ[1]:

Այսպես, «Հայաստանի վերամիավորման շարժման կենտրոնական խորհուրդ» կոչվող նախաձեռնող խումբը հանդես եկավ ընդարձակ վերլուծականով: Երեք էջանոց «Կոչ բոլոր հայրենասեր հայերին» թռուցիկում, «Պայքարը պետք է շարունակվի» կարգախոսով, տրվում էր ապրիլի 24-ի ցույցի գնահատականը և նշվում հետագա անելիքները: Անդրադառնալով Հայկական հարցի անցած ուղուն, հայոց իրավունքների ոտնահարման փորձերին, վերլուծելով այդ հարցում ԽՍՀՄ քաղաքականությունը՝ կոչում նշվում էր. «Հայկական հարցը ընդհանրապես չի ստացել իր լուծումը, ինչպես ամբողջ աշխարհի, այնպես էլ ԽՍՀՄ սահմաններում: Հայ ժողովուրդը երբեք չի կարող անտեսել պատմական այս մեծ անարդարությունը և չի կարող հաշտվել ներկա վիճակի հետ: Ապրիլի 24-ը առաջին անգամ կոտրեց լռության սառույցը և դրեց Հայկական հարցի լուծման համաժողովրդական պայքարի սկիզբը: Այդ պայքարը պետք է շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ արդարացի ու վերջնական լուծում չի ստացել Հայաստանի ու Հայ ժողովրդի վերամիավորման հարցը»[2]:

[1]Տե՛ս *Զատիկյան Հովհ.,* Հայկական հարցը և ազգային զարթոնքը 1960-ական թվականներին, ԲՀԱ, 2009, թ. 1, էջ 205-209:
[2] Տե՛ս նույն տեղում:

Հայկական հարցի լուծման գործում վճռական դեր վերապահելով հայ ժողովրդին՝ կոչ էր արվում հայության ձայնը հասցնել «աշխարհի բախտը տնօրինող մեծ տերությունների ականջին, ազդարարել ամբողջ աշխարհին, թե մենք չենք հաշտվել ու երբեք չենք հաշտվելու Հայաստանի ու հայ ժողովրդի մասնատված վիճակի հետ, որ Հայկական հարցը օրակարգից երբեք չպետք է հանվի: Նրա լուծման համար մենք պետք է պայքարենք ամեն օր, ամեն ժամ, տարբեր ձևերով ու միջոցներով»[1]:

Որպես ԽՍՀՄ-ում Հայկական հարցի լուծման ուղի՝ պահանջվում էր Վրաստանին ու Ադրբեջանին բռնակցված հայկական հողերի (Ղարաբաղ և Նախիջևան) վերամիավորում Հայաստանին, համաձայն տեղի բնակչության ցանկության, ինքնորոշման իրավունքի պահանջներով: Իսկ արդեն միջազգային ասպարեզում՝ հասնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դնել պատմական Հայրենիքի ազատագրման խնդիր[2]:

Իսկ արդեն 1967թ. հայ ժողովրդի անունից ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյին ուղղված «Բաց նամակ» փաստաթղթում դատապարտվում էր ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի 1966թ. դեկտեմբերի 20-ին Անկարայում արված հայտարարությունը. «Հայտնի է, որ Հայաստանի տերիտորիայի մեծ մասը ժամանակավորապես գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ: Այդ տերիտորիաների օրինական տերը հայ ժողովուրդն է և առանց նրա կարծիքը հաշվի առնելու ոչ ոք իրավունք չունի նման հայտարարություն անելու: ՍՍՀՄ-ը սուվերեն հանրապետությունների միություն է, և նրա կառավարությունը պարտա-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

վոր է հավասար կերպով արտահայտել և պաշտպանել նրա կազմի մեջ մտնող սոցիալիստական հանրապետությունների և ազգերի շահերը: Մինչդեռ, Ա.Կոսիգինի հայտարարությունը, որն արվել է առանց հայ ժողովրդի գիտության ու համաձայնության, հակասում է ողջ հայության ամենակենսական շահերին: Հայ ժողովուրդը լավ է գիտակցում, որ այսօր, ստեղծված միջազգային իրադրության պայմաններում, հնարավոր չէ հայկական հողերը առանց արյունի միացնել Սովետական Հայաստանին: Նա չի էլ պահանջում այդ: Սակայն դա իրավունք չի տալիս հրաժարվել այդ տերիտորիաներից: Բողոքելով Ա.Կոսիգինի Անկարայում կատարած քայլի դեմ՝ հայ ժողովուրդը գտնում է, որ Սովետական կառավարությունը իրավունք չունի առանց հայ ժողովրդի գիտության ու համաձայնության հանդես գալ այնպիսի հայտարարություններով, որոնք հակասում են նրա կենսական շահերին»[1]:

Ինչևէ, հետագա տարիներին նույնպես Լեռնային Ղարաբաղում Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների հայահալած քաղաքականությունն էլ ավելի մեծ թափով շարունակվեց և ուժգնացավ: Անշուշտ, այդ ամենը թե՛ Արցախում և թե՛ Խորհրդային Հայաստանում բողոքի ալիք բարձրացրեց, ընդ որում՝ ինչպես մտավորական, այնպես էլ կուսակցական-պետական շրջանակներում:

Այսպես, 1976-1977թթ. ԽՍՀՄ-ում նոր սահմանադրության նախագծի քննարկման արդյունքում Արցախի հարցը կրկին բարձրացվեց ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև: Դիմումների, հուշագրերի, պահանջագրերի, տեղեկատու փաս-

[1] Տե՛ս *Զատիկյան Հովհ.,* նշվ. աշխ., էջ 205-209:

տաթղթերի հեղեղ հորդեց դեպի Մոսկվա, որը մի պահ կարծես թե հակված էր հայկական պահանջներին ընդառաջ գնալ: Սակայն հերթական անգամ հայոց օգտին հարցի արդարացի լուծումը տապալվեց[1]:

Նշյալի համապատկերում հատկանշական և դիպուկ է ժամանակի ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսյանի հետևյալ գնահատականը. «Խոր համոզմունքով պիտի ասեմ, որ երբ մեր ազգային քաղաքական գործիչները շոշափել են հարցեր, որոնք կապված են եղել Թուրքիայի կամ Ադրբեջանի հետ, Մոսկվայի միջոցով տապալել են մեզ: Այդպես տապալեցին Գ.Հարությունյանին Ղարաբաղի հարցի համար, այդպես վարվեցին Զարոբյանի հետ ազգային զարթոնքի և Մեծ եղեռնը նշելու համար, նույն ճակատագրին արժանացավ Քոչինյանը, երբ Շելեպինին, որը եկել էր Հայաստան, կառավարության նախագահության կողմից նամակ ներկայացրեց այն մասին, որ անհրաժեշտ է Ղարաբաղի հարցը վերանայել և այն վերադարձնել Հայաստանին»[2]:

Եվ միմիայն 1988 թվականին սկսված համազգային նոր զարթոնքի արդյունքում՝ Արցախյան ազգային-ազատագրական պատերազմում հաղթանակի շնորհիվ, Արցախը վերջնականապես թոթափեց ադրբեջանական լուծը, և նորօրյա ազատամարտիկների կյանքի գնով լուծվեց տասնամյակներ շարունակ այդքան չարչրկված հարցը՝ ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

[1] Տե՛ս *Խաչատրյան Գ.,* Խորհրդային Հայաստանի ղեկավարության քայլերը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ի հետ վերամիավորելու ուղղությամբ (1945-1985թթ.), էջ 71:
[2] Տե՛ս Ժամանակակիցները Անտոն Քոչինյանի մասին, էջ 28-29:

8. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ 1970-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Թեպետ 1965 թվականից հետո Հայոց ցեղասպանության թեմայի ոգեկոչումն այլևս նախկին համապետական-համազգային ծավալը չունեցավ, այնուամենայնիվ, ՀԽՍՀ ղեկավարության մակարդակով շարունակվեց արդեն գրեթե ընթացակարգային բնույթ ստացած որոշակի միջոցառումների իրականացումը:

Այսպես, 1975թ. ապրիլի 14-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հաստատեց «1915թ. հայերի ցեղասպանության 60-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին» համալիր ծրագիր[1]:

Այս առումով շեշտենք այն ուշագրավ փաստը, որ խորհրդահայ իրականության մեջ առաջին անգամ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ.Դեմիրճյանը հանդես եկավ հեռուստաելույթով, ապրիլի 24-ին, ժամը 19.00-ին հեռուստատեսությամբ և ռադիոյով ցեղասպանության զոհերի հիշատակը հարգվեց մեկ րոպե լռությամբ, իսկ ՀԽՍՀ կուսակցական-պետական ղեկավարությունը ծաղկեպսակներ դրեց անմար կրակին[2]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 55, գ. 32, թթ. 2-3:

[2] Այս ելույթի տեքստը գրել է Կ.Դալլաքյանը. «Առաջին անգամ էր, որ Հայաստանի բարձրագույն ղեկավարը հեռուստատեսությամբ հանդես էր գալիս ապրիլի 24-ի առիթով: Բուն օրը ամբողջ ղեկավարությունը այցելեց Եղեռնի հուշարձան, ծաղկեպսակներ դրեց: Դա էլ դարձավ ավանդույթի սկիզբը, երբ հետագա բոլոր տարիներին ղեկավարությունը ժողովրդի հետ միասին ծաղիկներ էր դնում անմեղ զոհերի հիշատակին»: Տե՛ս *Դալլաքյան Կ.,* նշվ. աշխ., էջ 191:

1975թ. նոյեմբերի 12-ին Կ.Դեմիրճյանը դիմեց ԽՄԿԿ Կենտկոմին հայերի հայրենադարձության շարունակման թույլտվության հարցով[1]:

1985թ. ապրիլի 16-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հաստատեց «Հայերի ցեղասպանության 70-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին» համալիր ծրագիր[2]:

Ըստ դրա՝ նախատեսվում էր. «1. Ապրիլի 24-ին հեռուստատեսությամբ և ռադիոյով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ.Դեմիրճյանի ելույթը՝ տեքստը մամուլում հրապարակելով: 2. Ծիծեռնակաբերդում գտնվող Ցեղասպանության զոհերի հիշատակի հուշարձանին ծաղկեպսակ դնել: 3. Ըստ ձևավորված ավանդույթի՝ ապրիլի 24-ին, ժամը 19-ին հեռուստատեսությամբ և ռադիոյով լռության րոպեով զոհվածների հիշատակը հարգել: 4. Հանրապետական մամուլում նյութեր հրապարակել, ինչպես նաև դրանք ուղարկել սփյուռքահայ առաջադիմական թերթերի և ամսագրերի համար: Այդ նյութերում ցույց տալ խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում տնտեսական և մշակութային շինարարության մեջ Հայաստանի հաջողությունները, շեշտել Ռուսաստանի, ռուս ժողովրդի դերը հայերի պատմական ճակատագրում, հայ ժողովրդի սոցիալական ազատագրության և ազգային վերածննդի գործում Մեծ հոկտեմբերի, ԽՄԿԿ ազգային քաղաքականության նշանակությունը: Բացահայտել Կոմունիստական կուսակցության և Խորհրդային պետության խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը: 5. Ցույց տալ խորհրդային տարիներին ԽՄԿԿ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 55, գ. 81, թթ. 122-123:
2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 77, գ. 89, թթ. 70-71:

լենինյան ազգային քաղաքականության հաղթահանդես հանդիսացող վերածնված հայ ժողովրդի ձեռքբերումները: Հանրապետության աշխատավորության ջանքերն ուղղորդել ԽՄԿԿ 26-րդ համագումարի, ԽՄԿԿ Կենտկոմի հետագա պլենումների որոշումների կենսագործմանը, 11-րդ հնգամյակի՝ ամբողջությամբ և եզրափակիչ տարվա տնտեսական և սոցիալական զարգացման առաջադրանքների կատարմանը և գերակատարմանը, կուսակցության հերթական 27-րդ համագումարի արժանվույն դիմավորմանը»[1]:

Փաստորեն, նախորդների համեմատ այս ծրագիրն ավելի շատ այսպես կոչված «կոմունիստական և կրեմլահաճո» էր:

Մինչ այդ, 1985թ. հունվարի 25-ին, Կ.Դեմիրճյանը դիմել էր ԽՄԿԿ Կենտկոմին՝ ապրիլի 24-ը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով որպես «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հռչակելու խնդրանքով[2]:

Հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ խորհրդային իրականության պատմության ողջ ընթացքում առաջին անգամ միութենական հանրապետության կոմկուսի ղեկավարը ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությանը ոչ խորհրդային և ոչ կոմունիստական օրենսդրական առաջարկ էր ներկայացնում, նպատակահարմար ենք գտնում ընդհանուր գծերով ներկայացնել այն:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 77, գ. 89, թթ. 70-71:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 418, թթ. 2-հակ: Փաստաթղթի 1-ին էջը բացակայում է: Փաստաթղթի վրա կա Կ.Դեմիրճյանի ռուսերեն մակագրությունը. «1985թ. փետրվարի 12-ին քննարկված է Կենտկոմի քարտուղարությունում (ներկա էի): Քարտուղարությունն ընդունեց առաջարկը: Քաղբյուրոն քննարկել է 1985թ. փետրվարի 21-ի նիստում: Կարծիքների փոխանակման ժամանակ (ընկերներ Գրոմիկո, Գրիշին, Տիխոնով, Զիմյանին, Չեբրիկով) հանձնարարեցին չընդունել նոր առաջարկներ»:

Նախ և առաջ, շեշտելով, որ «արտասահմանում ծավալվել է պատմության խեղաթյուրման լայն գործընթաց, դաշնակները ձգտում են առաջիկա յոթանասունամյակի շուրջ աղմուկն ուժեղացնել», Կ.Դեմիրճյանը նպատակահարմար էր գտնում, որպեսզի. «1. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ապրիլի 24-ը հռչակվի «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր»: 2. 1985թ. 24-ին նախատեսել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի ելույթը ռադիոյով և հեռուստատեսությամբ՝ հանրապետական մամուլում տեքստի հրապարակմամբ: 3. Վերջին տարիներին հաստատված պրակտիկայի համաձայն՝ հանրապետության ղեկավարության ցեղասպանության զոհերի հուշարձան այցելության և ծաղկեպսակներ դնելու, այդ օրը ռադիոյով և հեռուստատեսությամբ լռության րոպեի հայտարարում: 4. Թեմայի մասին նյութերի հրապարակում հանրապետական մամուլում, ինչպես նաև՝ սփյուռքահայ առաջադիմական թերթերին և հանդեսներին ուղարկում: 5. Համապատասխան հոդվածների հրապարակում «Պրավդա», «Իզվեստիա», «Լիտերատուրնայա գազետա», ինչպես նաև՝ առանձին կենտրոնական հանդեսներում»[1]:

Սակայն ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն, 1985թ. փետրվարի 21-ի նիստում քննարկելով «Հայերի ցեղասպանության 70-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին» հարցը, միանշանակ կերպով մերժեց նման օրենսդրական առաջարկությունը[2]:

ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում Կ.Դեմիրճյանը հանգամանալից ներկայացրեց հարցադրման ներքին ազգային-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 77, գ. 89, թթ. 70-71:
[2] Տե՛ս «Голос Армении», 2005, 17 марта.

հասարակական և արտաքին քաղաքական-քարոզչական կողմերը, փորձեց միայնակ հակաճառել հնչող դոգմատիկ-քարացած կարծիքներին: Նիստը նախագահող ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Գորբաչովն սկզբից հատուկ շեշտեց, որ. «Ներկայացված առաջարկությունների մասին, բացի ընկեր Կ.Ս. Դեմիրճյանից, դեռևս ոչ ոք չգիտի, և պետք չէ, որպեսզի որևէ մեկը իմանա դրանց մասին»: Ապա, երկերեսանիորեն վերջակետ դրեց ձանձրալի դարձած քննարկումներին, և արդյունքում քաղբյուրոն միաձայն ընդունեց նրա հետևյալ առաջարկը. «Ամբողջության մեջ մեզ երևի նոր միջոցառումների անցկացման հարկավոր չէ գնալ: Բայց և նահանջել նրանից, ինչ նախկինում անցկացվել է, հավանաբար հարկավոր չէ: Ամենայն հավանականությամբ, մենք կարող ենք Կենտկոմի Քաղբյուրոյի որոշման մեջ այն մասին գրել, որպեսզի թույլատրել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմին նշել 1985թ. ապրիլին լրացող հայերի ցեղասպանության 70-ամյակը, ավանդականորեն ձևավորված հասարակական միջոցառումների իրականացմամբ, հենվելով Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջարկությունների վրա և հաշվի առնելով Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում տեղի ունեցած մտքերի փոխանակությունը: Միաժամանակ կարելի է հանձնարարել «Պրավդա»-ի խմբագրությանը հանդես գալ այդ առթիվ խմբագրական հոդվածով, որտեղ արտացոլվեն մեր Խորհրդային Միության կազմում հայ ժողովրդի պատմական ձեռքբերումները»[1]:

Այսինքն՝ պարզ և հստակ հասկացվեց ու խստորեն հրահանգվեց, որ գրեթե ամեն ինչ կարող եք անել, բացի մեկ բանից՝ ցեղասպանության օրենսդրական ճանաչումից:

[1] Տե՛ս «Голос Армении», 2005, 17 марта.

1987թ. մարտի 27-ին Կ.Դեմիրճյանն արդեն երկրորդ անգամ նույն հարցով դիմեց ԽՄԿԿ Կենտկոմին՝ հետևյալ նկատառումներով. «Ցեղասպանության տարեթվին նվիրված միջոցառումները անցկացվում են և բոլոր սփյուռքահայ գաղութներում: Դրա հանդեպ նկատելի հետաքրքրություն են ցուցաբերում համապատասխան երկրների պաշտոնական իշխանությունները: Ընդ որում, նրանցից մի քանիսի՝ հատկապես ԱՄՆ-ի, ռեակցիոն շրջանները և հատուկ ծառայությունները ձգտում են այդ օգտագործել իրենց նպատակներով, տեղի են ունենում քաղաքական սպեկուլյացիայի փորձեր, ամեն տեսակ գաղափարախոսական դիվերսիաներ: Պատմության խեղաթյուրման, հայերի ցեղասպանության փաստի ժխտման, և ընդհակառակը, հայերին թուրքերի ցեղասպանության մեջ մեղադրման սանձազերծ գործընթաց են ծավալել ներկայումս ռեակցիոն թուրքական շրջանները: Այդ ամենը արտասահմանում հակախորհրդային նպատակներով օգտագործում է դաշնակցություն ազգայնական կուսակցությունը: Ընդառաջ գնալով հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա հաստատման մասին աշխատավորների բազմաթիվ առաջարկություններին, ինչպես նաև հակառակորդի կողմից իրենց քաղաքական նպատակներով ժողովրդի ողբերգության փաստի օգտագործման կանխման համար, ՀԿԿ Կենտկոմը նպատակահարմար է գտնում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ապրիլի 24-ը հաստատել «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր»[1]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 418, թ. 3-հակ.:

Թեև երկու անգամ էլ Կ.Դեմիրճյանը հարցը նախօրոք համաձայնեցրել էր ԽՍՀՄ ՊԱԿ ղեկավարության հետ, սակայն այս անգամ էլ այն մերժվեց:

Նույն հարցի շուրջ 1988թ. սեպտեմբերի 12-ին Մ.Գորբաչովին դիմեց ՀԿԿ Կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Ս.Հարությունյանը[1]: Մասնավորապես, նա շեշտում էր հետևյալը. «Բազմաթիվ տարիների ընթացքում օրակարգից չիջնող այդ հարցը վերջին շրջանում հանրապետությունում ձևավորված բարդ և լարված իրավիճակի կապակցությամբ արտակարգ սրվել է: Ցեղասպանության տարեթիվը նշվում է և բոլոր սփյուռքահայ գաղութներում: Դրա նկատմամբ նկատելի հետաքրքրություն են ցուցաբերում այն երկրների պաշտոնական իշխանությունները, որտեղ ապրում է հայկական բնակչություն: Դրանցից մի քանիսի՝ հատկապես ԱՄՆ-ի, հետադեմ շրջանակները և հատուկ ծառայությունները քաղաքական սպեկուլյացիայի և գաղափարական դիվերսիաների նպատակներով օգտագործում են այն փաստը, որ այդ տարեթիվը մեր երկրում պաշտոնական կարգավիճակ չունի»[2]:

Այս անգամ պատասխանը ճարահատյալ դրական էր, քանզի ահազնանալով թափ էր հավաքում արցախյան ազատագրական պայքարը, և մոսկովյան կենտրոնն էլ արդեն նախկին վարչահրամայական ներուժը չուներ:

Իսկ արդեն 1988թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» և ապ-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 2, թթ. 63-64:
[2] Տե՛ս նույն տեղում:

րիլի 24-ը հայտարարեց «Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»[1]:

Այս օրենքը հանրապետական օրենսդիր մարմինների կողմից ընդունված առաջին և առայժմ միակ ակտն է, որ վերաբերում է Հայոց ցեղասպանությանը:

Այս օրենքի համաձայն. «1. Դատապարտելով 1915 թվականին օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր: 2. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն[2] առաջարկություն ներկայացնել հայերի 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին: 3. Հանձնարարել Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին Հայաստանի Արհմիությունների խորհրդի հետ համատեղ քննության առնել և լուծել ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր հայտարարելու հարցը[3], հանգստյան օրերից մեկը տեղափոխելով այդ օրը»:

ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1989թ. մարտի 17-ին այս օրենքի հիման վրա որոշում ընդունեց ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր հաստատելու մասին[4]:

1990թ. հունվարի 8-ին՝ խորհրդային իշխանության մայրամուտին, ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հաստատեց Եղեռնի 75-ամյակի միջոցառումների ծրագիրը[5]:

---

[1] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, թ. 2, էջ 5:
[2] ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը որևէ որոշում չի ընդունել:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 161, գ. 111, թ. 1:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 40, թթ. 2-9:

Եվ ապա, Արցախյան շարժման արդյունքում, անկախություն նվաճած Հայաստանի Երրորդ Հանրապետությունն արդեն միջազգային քաղաքական-դիվանագիտական ասպարեզում սկսեց ինքնիշխան կերպով պայքարել հանուն Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման:

ՎԵՐՋԱԲԱՆ

Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության 50-ամյակը պետական բարձր մակարդակով նշելը կարևոր բարոյահոգեբանական և ազգային-քաղաքական խթան հանդիսացավ հետագա տարիներին այդ ուղղությամբ կատարված աշխատանքների համար:

1965թ. ապրիլի 24-ին խորհրդային ամբողջատիրության պայմաններում հայ ժողովուրդն առաջին անգամ բարոյապես և հոգեպես, իսկ ՀԽՍՀ կուսակցական-գործադիր իշխանական համակարգը՝ պետական բարձր մակարդակով ճանաչեցին ու բազմակողմանիորեն նշեցին 1915թ. Հայոց ցեղասպանության 50-ամյակը:

Ճիշտ է, ՀԽՍՀ օրենսդիր բարձրագույն մարմինը՝ Գերագույն խորհուրդը, Եղեռնի ճանաչման համապատասխան իրավական որոշում չընդունեց, սակայն Հայոց ցեղասպանության 50-ամյակը համատարած ձևով նշելն ինքնին ունեցավ կարևոր քաղաքական նշանակություն: Ավելին, այս պարագան անուղղակիորեն պետք է վերագրել նաև ԽՍՀՄ-ին (թեպետ Մոսկվայում և խորհրդային մյուս հանրապետություններում կատարյալ լռություն և անուշադրություն էր տիրում), որի ղեկավար մարմինը՝ ԽՄԿԿ Կենտկոմը և պաշտոնաթերթ «Պրավդա»-ն, ստիպված եղան թեպետ որոշակի դժկամորեն, բայց այնուամենայնիվ, թեկուզ հայեցողաբար՝ ճանաչել հայոց ողբերգությունը:

ԽՍՀՄ պատմության մեջ առաջին և միակ անգամ Կոմունիստական ամենատիրության կաղապարված համակարգում գտնվող Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանի կենտրոնի ամենատեսանելի վայրում, վեր հառնեց ոչ խորհրդային կամ ոչ կոմունիստական կառույց՝ Հայոց ցեղասպանության նահատակների հուշահամալիրը:

Վերջապես, Հայաստանին և հայությանը հուզող ազգային հիմնախնդիրներին ընդառաջելու և լուծում տալու հարցում ԽՍՀՄ ղեկավարության վերաբերմունքը որոշ չափով փոխվեց:

1965թ. ապրիլի 24-ի ցույցը և Հայոց ցեղասպանության 50-ամյակի միջոցառումների համազգային ընդգրկումները խորհրդային համակարգին հասկանալ-զգալ տվեցին, որ հայ ժողովուրդն արդեն հասել է ինքնագիտակցության և ինքնակազմակերպման այն աստիճանին, որ այլընտրանք չկա. հարկավոր է զիջման գնալ և փոփոխության ենթարկել 15 խորհրդային հանրապետություններից մեկի ժողովրդի՝ հայերի հանդեպ վարվող քաղաքականությունը:

Փաստորեն, խորհրդային իշխանության պատմության մեջ առաջին անգամ ծովածավալ հայ ժողովուրդը կազմակերպված ձևով ոչ խորհրդային, ոչ կոմունիստական քաղաքական բնույթի ազգային-հայրենասիրական զանգվածային ակցիա իրականացրեց:

1965թ. ապրիլի 24-ը հայերի համար հոգեբանական պատնեշի հաղթահարում էր՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում համազգային միասնության դրսևորմամբ սեփական երկրին ու համաշխարհային հանրությանը համանման ոճիրնե-

րից ապահովագրելուն ուղղված պայքարի մեկնարկ: Այդ օրը սկիզբ դրվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Անշուշտ, Հայոց ցեղասպանության 50-ամյակի նշման կազմակերպչական ոգին և ավանգարդ գործիչը Խորհրդային Հայաստանի ղեկավար Յակով Զարոբյանն էր, որի նպատակասլացության, խոչընդոտների հաղթահարման հարցում ցուցաբերած հաստատակամության շնորհիվ հնարավոր եղավ տասնամյակներ շարունակ մոռացության մատնված նահատակների հիշատակի հավուր պատշաճի պետականորեն ոգեկոչումը: Նրա շնորհիվ ապրիլի 24-ի ցուցարարները չարժանացան 1962թ. Նովոչերկասկի սպանդի ճակատագրին: Արդյունքում, ինչպես արդեն նշել ենք, Յա. Զարոբյանը զրկվեց ՀԽՍՀ ղեկավարի պաշտոնից:

Այսուհանդերձ, հասկանալի պատճառներով, գաղափարախոսական աշխատանքում անբավարար էին հաշվի առնվում Խորհրդային Հայաստանի տեղային առանձնահատկությունները՝ մասնավորապես, և առաջին հերթին՝ սփյուռքահայ գաղթօջախների առկայությունը և հայրենադարձությունը: Այսպես կոչված բուրժուական կամ իմպերիալիստական քարոզչության և գաղափարական ներթափանցման դեմ պայքարի քողի տակ հաճախ անտեղի քննադատվում և արգելակվում էին նաև զուտ ազգային-հայրենասիրական նկրտումները, որոնք ամենևին հակախորհրդային բնույթ չէին կրում:

Թեպետ որոշ ստեղծագործական միությունների (օրինակ՝ գրողների), պարբերականների և անհատ մտավորականների ՀԽՍՀ կուսակցական-պետական ղեկավարության կողմից որո-

շակի գաղափարական ազատականություն էր թույլատրվել, այդուհանդերձ, այդպիսիք ի զորու չեղան համակարգի պայմաններում մինչև վերջ հետևողական և հաստատակամ լինել:

Ապրիլի 24-ին երիտասարդության ինքնաբուխ (կամ էլ թեկուզ որոշ կազմակերպական ուղղորդմամբ) զանգվածային ցույցի դուրս գալն ինքնին վկայում էր, որ նրանք անվերադարձ կերպով և անվերապահորեն չէ, որ նվիրված էին խորհրդային համակարգին և կոմունիզմի գաղափարներին: Չնայած համատարած խորհրդային հակաքարոզչության առկայությանը, այնուամենայնիվ, ի հայտ եկան ազգային-ազգայնական (բայց ոչ ազգայնամոլական) գաղափարական առաջին ծիլերը: Ակնհայտ էր երիտասարդության վրա ՀԼԿԵՄ գաղափարա-կազմակերպչական անհրաժեշտ ազդեցության բացակայությունը և կտրվածությունն ազգային գաղափարների համար պայքարի ելած երիտասարդությունից:

Ցույցերն ապացուցեցին, որ խորհրդային ամբողջատիրական համակարգի հենասյուն համարվող մարքսիզմ-լենինիզմի սկզբունքները, կոմունիզմի հրամցվող վերացական իդեալները, խորհրդային հայրենասիրություն, պրոլետարական ինտերնացիոնալիզմ և ժողովուրդների լենինյան բարեկամություն կոչվող երևույթներն ամենևին չեն կարող ազգային իղձերի իրականացման ճանապարհին հայ երիտասարդի համար միանշանակ սպառիչ բավարարում տալ, բավարարել նրա հոգևոր պահանջները:

1965թ. ապրիլյան ցույցի մասնակից երիտասարդներն ազգային ոգով իրենց հետագա դաստիարակությունը ստացան

1970-1980-ական թվականներին շարունակված Մեծ եղեռնի ոգեկոչումների, Սփյուռքում ծավալված նորօրյա Զինյալ պայքարի և ապա՝ Արցախյան շարժման, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության վերահաստատման ճանապարհին:

Հայոց ցեղասպանության 50-ամյակի շրջանակներում վերսկսվեց և ակտիվ ընթացք ստացավ հայրենադարձությունը: Պետք է հաշվի առնենք այն հանգամանքը, որ հայրենադարձությունը պահանջում էր լրացուցիչ, հաճախ չնախատեսված հսկայական ծախսեր, սոցիալական խնդիրների լուծում և, բնականաբար՝ Մոսկվային տնտեսապես ձեռնտու չէր: Ի վերջո, հայրենադարձների մեծ մասը մասնագիտական կրթություն չուներ, զգալի էր տարեցների և երեխաների, այսինքն՝ անաշխատունակների թիվը:

Կազմակերպչական բնույթ ստացած Հայրենիք-Սփյուռք կապերն ընդլայնվեցին հետագա տարիներին, իսկ արդեն մեր նորօրյա անկախ պետականության պայմաններում այդ ամենը դրվեց միանգամայն նոր հարաբերակցության համակարգում:

Հայոց ցեղասպանության 50-ամյակի նշումն ամենևին էլ սոսկ հայրենասիրության մեկանգամյա առկայծում չէր, այլ Յա. Զարոբյանի ու Խորհրդային Հայաստանի ընդհանուր կուսակցապետական քաղաքականության կարևորագույն տարր: Այն նաև նպատակաուղղված էր հանրապետության ինքնատիպության ամրապնդմանը, հայ ժողովրդի ընդհանրական միասնության վերականգնմանը, Եղեռնի հարցում պատմական ճշմարտության վերականգնմանը:

Հավելված[1]

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄԸ ՄՈՍԿԱՎՅՈՒՄ[2]

Վարդան Հայկազյան[3]

Լյոնիկ Հարությունյանի հիշատակին

Անձիս կյանքում Մեծ եղեռնը, կարելի է ասել, խորհրդանշական եղավ. 11 տարեկան հայրս՝ Վանից ոչ հեռու գտնվող Կղզի գյուղից և 4 տարեկան մայրս Բիթլիս քաղաքից, գաղթի ճամփաներով հասան Ալեքսանդրապոլ, ուր տարբեր որբանոցներում մեծացան, ապա հանդիպեցին և ամուսնացան:

Սերունդը, որին ես պատկանում էի, փոքր-ինչ ուշ տեղեկացավ, թե ինչ էր եղեռնը. սկզբում փորձում էինք անտեսել պատերազմն ու սովը, ապա՝ ստալինիզմն ու դրա հետ կապված բոլոր նողկանքները, և դրանք մեր գիտակցության մեջ իրենց արժանի փոքր մասշտաբի հասցնելուց հետո միայն տեղ ազատեցինք մորս քեռի Արամի, դաշնակցական Տիգրան պապի և Անգին տատիս պատմությունների համար:

---

[1] Հուշերը հավելվել են «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից:

[2] Տեքստում նկարագրվող իրադարձությունների ակտիվ մասնակից ընկերներս՝ Հայկ Ղազարյանը և Վազգեն Մանուկյանը, կատարել են անհրաժեշտ ճշտումներ և լրացումներ:

[3] Ագրոէկոլոգիայի գծով փորձագետ-վերլուծաբան Վարդան Ցոլակի Հայկազյանն ավարտել է Երևանի և Մոսկվայի պետական համալսարանները, 1965-1969թթ.՝ Մոսկվայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: 1969-1992թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ համակարգում՝ կրտսերից մինչև առաջատար գիտաշխատող: Քիմիական գիտությունների թեկնածու, 50-ից ավելի գիտական աշխատությունների հեղինակ: 1992-ից աշխատում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում, ուր հիմնել և 7 տարի գլխավորել է գյուղատնտեսական խորհրդատվության համակարգը:

Մինչ մեր հաջորդ սերունդը կձևավորվեր և կձևավորեր իր վերաբերմունքը պատմության կարևոր էջերի և հատկապես այն էջերի նկատմամբ, որոնք վերաբերում են հայերիս, գնացինք մոսկվաներ՝ սովորելու: Պրոպագանդան անազատ երկրներում կարողանում է հիմարացնել բնակչության 80-90 տոկոսին, այն ժամանակ էլ նույն արդյունավետությամբ էր գործում: Ուսանողական տարիներին շատ չէինք տարբերվում միջավայրից և բոլորի հետ միասին 1956թ. հրճվեցինք Խրուշչովի խիզախությամբ, բայց Մոսկվայում անցկացրած ասպիրանտական տարիներն ավելի բովանդակալից ստացվեցին: Մի կողմից, ամենքս արդեն մեր շրջապատն ունեինք՝ հիմնականում տեղի մտավորականներից բաղկացած, մյուս կողմից՝ հայերով կանոնավոր՝ շաբաթը 1-2 անգամ, երեկոյան հավաքվում էինք ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Դմ.Ուլյանովի փողոցի վրա գտնվող մեր հանրակացարանում, ուր մինչև ուշ գիշեր ծավալվում էին զրույցներ՝ երկրից ու աշխարհից, գիտությունից ու կենցաղից, արվեստից ու քաղաքականությունից: Հատկապես ուշագրավ էին մեր գյուղաբնակ ընկերների հուշերը՝ գյուղի գունազարդ և հյութեղ առօրյայից՝ համեմված համապատասխան տարածաշրջանին հատուկ հումորով:

1965թ. մոտենալով՝ զգում էինք, որ թեպետ «ձնհալը» կարծես ավարտվել է, բայց և գիտակից կյանքն արդեն սկիզբ էր առել ու ընթանում էր. մեր կշիռն արդեն զգում էինք, համարձակությունը որոշ հարցերում կարող էր հանդգնության տպավորություն թողնել: Ուշիուշով հետևում էինք երկրում ընթացող դրական շարժերին: Երեկոյան հավաքներին ավելի շատ էինք խո-

սում հայրենիք վերադառնալուց հետո մեր անելիքների մասին. գիտության, կրթության բնագավառում ով ինչ կարող է անել, դրա համար ինչ աջակցություն պետք կլինի, որքանով է դա իրական, և ինչ է պետք տվյալ ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար: Նախատեսվածի մեծ մասն իրոք սկսեց իրականացվել Երևան վերադառնալուց անմիջապես հետո և տևեց մոտ մեկ տասնամյակ:

1965թ. սկզբից եղեռնի թեման կամաց-կամաց սկսեց դուրս մղել այլ թեմաներ: Ոգևորված էինք Յա.Ն. Զարոբյանի և նրա գլխավորած իշխանությունների ժողովրդամերձ տրամադրություններով: Ինչևէ, մեր մինչև 2 տասնյակի հասնող համախոհներով սկսեցինք տարբերակներ առաջարկել և քննարկել՝ հնարավորինս մեր ակտիվ մասնակցությունը բերելու գալիք նշանավոր իրադարձություններին: Երկար-բարակ քննարկումներից հետո գտանք լավագույն տարբերակը, սակայն… այն պիտանի էր միայն հաջորդ տարվա համար, քանի որ տևական նախապատրաստական գործողություններ էր պահանջում:

Այդպես էլ որոշեցինք. 1965թ. ապրիլ 24-ի առավոտ հավաքվեցինք և ոտքով գնացինք հայկական եկեղեցի և գերեզմանատուն, ուր լսեցինք պատարագը և այցելեցինք մեծաց գերեզմաններին: Իսկ ոտքով գնալն այն խորհուրդն ուներ, որ այդ պահից սկսած՝ արդեն նախապատրաստվում էինք 1966-ին:

Մի քանի օր անց զումարեցինք առաջին նիստը, հաջորդ տարվա միջոցառումների պատասխանատու ընտրեցին ինձ ու Հարությունյան Լյոնիկին, որին մտերիմներով Լյոնկա էինք ասում, բոլորս համակրում էինք, դրա համար երբեմն հոգու հետ

էինք խաղում (ցավոք, արդեն 10 տարի այլևս ոչ ևս է): Նա իմ ընկերն էր, մեր մտերմությունը սկիզբ էր առել մանկությունից, աճել մեր ընտանիքների զուլալ ու մաքուր հարաբերություններից: Լյոնիկը բարեկազմ, պայծառամիտ տղա էր, և՛ ոգևորվել գիտեր, և՛, ամենակարևորը՝ ոգևորել, հատկություններ, որ պետք էին գալու հատկապես մեկ տարի անց կայանալիք երթի ժամանակ, ինչի համար էլ պատասխանատու էր լինելու նա: Իմ պարտականությունը մոսկվայաբնակ հայերի հետ կոնտակտ կազմակերպելն էր, ընտանիքի անդամներին առաջարկել մեր ծառայությունները հայերենի ուսուցման կամ մասնագիտական առարկաներում (թե՛ դպրոցական, թե՛ բուհական) հմտանալու ուղղությամբ: Կարծում եմ, որ ճիշտ էինք ընտրել այն միջոցը, որը վստահություն պետք է ստեղծեր մեր միջև՝ անշուշտ օգտակար լինելով մեր երկրացիներին և միաժամանակ ընդգծելով մեր պիտանելիությունը:

Քանի որ բոլորս խիստ զբաղված էինք՝ աշխատանքային խմբերի կազմն ավելի շատ փոփոխական էր, քան հաստատուն: Բացի երկուսիցս, հենց սկզբից ընդգրկվեցին Արտաշես Փոչիկյանը, երկու Ռոլանդները՝ Ավետիսյան և Վարդանյան, Արա Մխիթարյանը, Ֆելիքս Սաֆարյանը, Էմանվելը, որի ազգանունը, ցավոք, մոռացել եմ, բայց գիտեմ, որ համենայնդեպս՝ մինչև վերջերս, բավական ակտիվ է եղել և օգտակար Մոսկվայի հայ համայնքի համար, Համլետ Կատվալյանը, ավելի ուշ միացան Հայկ Ղազարյանը և ապա Բաբիկ Արարքցյանը: Գուցե չեմ նշում մասնակիցների, որոնք ավելի ակտիվ են եղել, քան թվարկածներս, որի համար նրանց ներողամտությունն եմ հայցում. գրա-

ռումներ, ցավոք, ժամանակին չեմ արել, հիշողությանս մեջ մնացել են նրանք, որոնց հետ ավելի հաճախ եմ առնչվել:

Առաջին գործնական քայլն այն եղավ, որ ինչ-որ տեղից թոցրած հեռախոսագիրքը բոլորիս միջև բաժանեցինք: Երեկոյան գրավում էինք հանրակացարանի սակավ հեռախոսներից մեկը և զանգահարում հեռախոսագրքից վերցված մոսկվաբնակ հայերին: Ես մի երեկո ցուցադրական «համերգ» տվեցի, զանգեցի մի քանի համարներով՝ ներկայանալով և ներկայացնելով մեր առաքելությունը: Լինում էին հուզական արձագանքներ. ճիշտ է, հազվադեպ, երբեմն լսում էի զրուցակցիս գլխում պտտվող ատամնանիվների ձայնն ու կասկածամիտ ֆսֆսոցը. չի հասկանում՝ ինչ են իրենից ուզում: Երբեմն էլ հեռախոսը շրխկոցով կախում էին՝ հասցնելով «նադոելի» բառն արտաբերել: Վերջում վերլուծեցինք արդյունքները, գտանք թույլ և ուժեղ կողմերը և հասկացանք, որ սարսափելի չէ, և, ինչպես ցույց տվեցին նաև հետագա օրերի զանգերը՝ գործադրված ջանքերը 5-7 տոկոս արդյունավետություն ապահովեցին: Մոտ 300 հոգանոց ցուցակ առաջացավ, որից մի 20-30-ի հետ գրեթե մեկ տարի անձամբ աշխատեցի[1]:

Տարին անցավ հայկական համայնքի համախմբման դրոշի տակ, և առնվազն հազարից ավելի հայ ընտանիք իրեն հայ զգալու ուրախություն ապրեց: Մեր փորձերը՝ գոնե մոտավոր կերպով որոշել, թե օրեցօր մոտեցող ապրիլ 24-ին քանի մարդ փողոց դուրս կգա, հաջողությամբ չէին պսակվում. մեր ոգևորու-

[1] Տարիներ անց, երբ հորեղբորս տղան՝ Է.Ա. Հայկազյանը, նշանակվեց մեր երկրի ներկայացուցիչ Մոսկվայում, իմ և էլի 2-3 ցուցակ, որոնք չգիտես ինչպես պահպանվել էին, նրան պետք եկան մշակութային և կրթական ծրագրեր իրականացնելու համար:

թյունը փոխարինվում էր անվստահությամբ, մեր մոսկովյան հայրենակիցները մեկ շաբաթներով կորչում էին, մեկ օրեր անընդմեջ ակտիվանում, մեր «բրիգադավարներն» էլ անընդհատ տարբեր թվեր էին տալիս ու ավելի շփոթեցնում, մոլորեցնում մեզ: Բայց արդեն մոտենում էր ապրիլ 24-ը, և դրա հետ էլ՝ պաստառների պատրաստման, երթուղիների ճշտման ու հազար ու մի այլ կարգավորումների ժամանակը: Չմոռանամ նաև, որ ոչ ոք մեր ասպիրանտական պարտականություններից մեզ չէր ազատել, ավելին, մեր բարձր առաքելությունը մեզ թույլ չէր տալիս այն իրականացնել մեկ այլ բանի հաշվին:

Պարզ է, որ չեմ հիշում ոչ դրամահավաքի, ոչ էլ պաստառներկ-վրձիններ գնելու մանրամասները: Հիշում եմ միայն, որ պաստառների ձողերի առումով դժվարություններ ունեցանք, որոնք էլ պատվիրեցինք Լյոնկայի և իմ ինստիտուտներում՝ ընդհատակյա ձևով, քանի որ երկուսիս ինստիտուտներն էլ փակ, խիստ ռեժիմի հաստատություններ էին:

Պաստառների թիվը մոտ 20 էր, մեկ պաստառի ճշտությամբ կարող եմ թվարկել. 6-7-ը ռուսերեն էին, մի այդքան էլ՝ հայերեն, մոտ երեքական էլ անգլերեն և ֆրանսերեն էին: Բոլորի վրա (իսկ դրանք թավ սև գույնի էին, չափերը՝ մոտավորապես 80 սանտիմետրը 4-5 մետրի վրա, վառ կարմիր կամ մուգ նարնջագույն տառերով) գրված էր. «Հայերը երբեք չեն մոռանա 1915 թիվը» կամ «Հայերը երբեք չեն մոռանա 2 միլիոն անմեղ զոհերին»:

Ապրիլ 24-ի առավոտյան 9-10-ին մոտ, երբ Մոսկվայում մարում էր առաջին խցանման ալիքը, պայմանավորվել էինք

հանդիպել՝ մենք և մեր կողմից ազգային զարթոնքով արթնացված մեր հայրենակիցները, Գերցենի փողոցի այն մասում, որը սկիզբ է առնում Կոնսերվատորիայից և ավարտվում թուրքական դեսպանատնով: Խնդրել էինք, որ չկուտակվեն այնտեղ, որտեղ արդեն կուտակումներ կան, այլ ստեղծեն մի միջին «գիրության» զանգված այդ 3-400 մետր երկարությամբ հատվածում: Պարզ է, որ որևէ թույլտվության մասին խոսք անգամ լինել չէր կարող. դիմողներս կհայտնվեինք այնքան հեռվում, որ բավական ժամանակ կանցներ միայն այն բանի համար, որպեսզի մեր հարազատները պարզեին, թե այդ հեռուն որքան է հեռու: Պաստառները՝ փաթաթված վիճակում, մեր տղաների մոտ էին, չնայած մոսկվաբնակ մեր երկրացիներից մի քանիսը խնդրեցին և ստացան դրանցով շարժվելու իրավունք:

Ինչպես և նախատեսում էինք, դժվար եղավ որոշել առաջ շարժվելու պահը: Մինչդեռ, մարդկային զանգվածը արդեն կուտակվում էր և՛ մերոնց, և՛ արդեն մեզանով հետաքրքրվողների հաշվին, բայց, բարեբախտաբար, նրանք առայժմ ընդամենը անցորդներ էին, ինչը հասկացվում էր նրանց անկեղծ զարմանքից ու հետաքրքրությունից: Պետք էր պահը որսալ, կազմակերպված անցնել թուրքական դեսպանատան մոտով և փորձել իջեցնել տալ դրանց դրոշը, որը միշտ այնտեղ ցցված էր: Ապա պիտի շարունակեինք մեր ճանապարհը դեպի հայկական եկեղեցի և գերեզմանատուն, որն այդտեղից մոտ 3 կիլոմետր կամ գուցե քիչ ավելի հեռու էր: Երթի և ակցիայի փաստը՝ իր հուժկու և ազդեցիկ տպավորությունով, պետք էր վավերացնել՝ մինչև սովետական ներքին, արտաքին և այլ օրգանները կարթնանային ու գլխի կընկնեին, թե ով ում բարեկամն է:

Լյոնիկն ու ես այդ 3-400 մետրը մի քանի անգամ հետ ու առաջ արեցինք, վայրկյանի ճշտությամբ որոշեցինք մեկնարկի պահը. պատվիրեցինք առջևից ընթացողներին ուշիուշով հետևել թիկունքից սկսվող շարժին, անհապաղ առաջ անցնել՝ միաժամանակ տեմպ հաղորդելով առջևում կանգնածներին: Դրա հետ մեկտեղ նախազգուշացված էր՝ երթը պահպանել հանդարտ և հանդիսավոր:

Մի քանի րոպե անցավ անասելի լարվածության մեջ, մինչև հասկացանք, որ մեր բոլոր սպասելիքներն իրագործվել են ավելի, քան սպասում էինք, կարելի է ասել՝ շռնդալից արդյունքով: Մոսկվայի այդ հատվածում բավական երկար էի ապրել. անաղմուկ, խաղաղ փոքր կենտրոնն էր, որտեղ կենտրոնացած էին տարբեր երկրների դեսպանատներ, և որտեղ «Նիկիտսկիե վորոտա» բարդ խաչմերուկը ի մի էր բերում երկու զբոսայգի, Գերցենի և Կաչալովի փողոցները: Բնակելի տներն այդտեղ քիչ էին, բայց դրանց փողոցահայաց պատուհաններից և պատշգամբներից մարդիկ ոչ թե պարզապես դիտում էին, այլ հորդում էին դեպի փողոց, և միայն լավ արարք կատարողին պահպանող Աստծո ուժն էր, որ չէր թողնում նրանք վայր ընկնեն:

Իսկ վայր ընկնելու բան կար. մի քանի հազար մարդ՝ լուռ և հանդիսավոր, պաստառները բարձր պարզած (որոնց վրա հասկանալի ու անհասկանալի լեզուներով սարսափելի, մարդու ուղեղում չտեղավորվող, նաև իրենց գույնով աչք կուրացնող բառեր էին գրված), Գերցենով դեպի թուրքական դեսպանատուն էր բարձրանում, ու թվում էր՝ որքան նրանց անբարբառ, առինքնող կեցվածքն է խոսուն, այնքան էլ անկասելի է նրանց հոսքը:

Կեսը մայթով, կեսը փողոցով շարժվող զանգվածի գլուխը հասավ դեսպանատուն և հրահանգի համաձայն՝ պինդ խցանեց փողոցն ու կանգ առավ: Մենք իրար միաժամանակ տեսանք. ես ու Լյոնկան՝ մի կողմից, Սիրուն գնդապետը՝ մյուս: Այդ հետո մենք նրան էդպես անվանեցինք. երկարահասակ էր, ընտիր, ճաշակով հագնված (քաղաքացիական հագուստով), հայանման (ինչպես հետո խոստովանեց, իսկապես հայ էր, անվտանգության գնդապետ, չնայած ոչ ազգանունն ասաց, ոչ էլ մերը հարցրեց), խելացի հայացքով մարդ էր: Մինչ, պայմանավորվածության համաձայն՝ ամբոխը դրոշն իջեցնելու պահանջն ու դրա իմաստն էր հասցնում մեզ օղակած և մասնակի խռնված ռուսներին (ասեմ, որ մեր մոսկվաբնակ հայրենակիցներն արդեն բոլոր առումներով մեզ հետ մեկ ամբողջ էին դարձել և մեզնից սերտած դասերը հավուր պատշաճի նրանց էին հրամցնում), մենք գնդապետի հետ խաղաղ զրուցում էինք:

Ասաց, որ գիտի ում հետ գործ ունի, ինչ էլ չգիտեր, հիմա տեսնում է, որ չի սխալվել՝ հանդարտեցնելով իրենից բարձր կանգնածների հուզումը և կասեցնելով արտակարգ միջոցների կիրառումը: Երբ Լյոնկայի հետ թերահավատորեն իրար նայեցինք, ասաց՝ շուտով կհամոզվեք դրանում: Մեր նկատմամբ հարգալից էր թվում ու անկեղծ: Ասաց՝ եկեք էսօր դրոշն իջեցնելը մի կողմ դնենք, հազար ու մի պատճառ կբերեմ դրա համար, ու ամենաանհավանականը ձեզ ընդունելի կթվա: Բայց չեմ անի այդ. դուք ինքներդ կգտնեք այն պատճառը, որին կհավատաք:

Միմյանց հետ կարճ խորհրդակցելուց հետո ընդունեցինք գնդապետի պայմանը. խաղաղ երթ դեպի եկեղեցի և գերեզմա-

նատուն: Հասանք մինչև Ապստամբության հրապարակ, որտեղ երկու բան պարզեցինք. դեպի Կրասնայա Պրեսնյա փողոց հեռացող զանգվածը երևում էր ինչպես ափի մեջ, և զարմացանք, որ մինչև 10 հազար մարդ կարողացել էինք հավաքել: Տղաներից մեկը կասկածեց, բայց նորից հայտնված գնդապետը լուռ գլխով արեց հօգուտ արտասանված թվի: Ապա երկուսիս մի կողմ քաշեց ու հրաժեշտ տվեց՝ ասելով, որ մեզ ապահովության համար կուղեկցեն այլ մարդիկ, ինքն իր գործն ավարտված է համարում, առաջարկեց մի քանի րոպե դանդաղել, մինչև որ 4 ծածկած բեռնատարները (հրապարակի բարձրաքերի մոտ կանգնած երկուական մեքենա՝ չերևացող զինվորներով) կհեռանան:

Այդպես էլ եղավ. զանգվածն անկորուստ հասնում էր իր նպատակին, երբեմն ինչ-որ մեկը մոտենում և կիրթ խնդրում էր ազատել փողոցի մի մասը: Լսեցինք պատարագի ավարտը: Ով ծաղիկ էր հասցրել գնել, դրեց տասնյակից ավելի նվիրյալների գերեզմաններին, որոնց հիշում էին տղաները կամ մոսկվացիները:

Ներկաներից մեկը հանկարծ հիշեց, որ այստեղ եղել է ցուցանակ, որն ազդարարել է, որ հայկական եկեղեցուն հարող գերեզմանատան հատվածը հայկական պատկանելություն ունի (ի տարբերություն ամբողջի, որը կոչվում էր Վագանկովսկոյե): Շուտով գտնվեց նաև ցուցանակը: Անկեղծ ասած՝ մեզ լիարժեք հաղթանակած էինք զգում, բայց այդ պահին կարծես հասկացանք, որ չիջեցված դրոշի դառը նստվածքը բարձրացվող ցուցանակով չեզոքացնելու առիթ է առաջացել: Պահակի և բանվո-

րի ուղեկցությամբ ներկայացած տնօրենը (համոզված եմ, որ մեր տղաներից ավելի ակտիվ՝ դրանց բերման ենթարկելու առումով գործել էին հայ գնդապետին հերթափոխած սպաները, որոնց արդեն դեմքով էինք ճանաչում) գլխավորեց արդարության վերականգնման աշխատանքը, իսկ սկզբունքային պայքարում ամենաակտիվների թվում էին մաթեմատիկոս Եվգենը, Գալուստով Վահանը և Չիլոյան Սլավիկը, որն օրեր առաջ Երևանից էր ժամանել: Հոգնած և երջանիկ հասանք մեր կացարանը՝ համոզված, որ որքան էլ կյանքում երջանիկ օրեր ապրենք, սա առանձնակի տեղ է գրավելու, հատկապես բոլորիս միավորելու առումով:

Տարին ընթացավ և ավարտվեց մոսկվացիների կապի բնական թուլացումով, բայց մենք համոզված էինք, որ գարնանը նորից կակտիվանանք, իսկ նրանք համարում էին, որ իրենց մասնակցությամբ պատմության մի կարևոր էջ է լրացվել: Եվ իրոք, ակցիայի արձագանքը շուտ չմարեց մայրաքաղաքում: Հատկապես տպավորված էր համալսարանի հայությունը, հիմնականում ուսանողությունը, որը մեզանից շատ ավելի մեծաթիվ էր: Չնայած մեր՝ «ծերուկներիս» հասցեին հոխորտացել էին. մի դրա՛նց տես, ոնց էլ կարողացել են… «Ծերուկները» դա նորմալ ընդունեցին: Ճիշտն ասած՝ մի քիչ էլ զարմացանք, որ «ջահելների դուխը տեղն է», քանզի լսել էինք, որ մեր արածի կեսն անելու համար այնտեղի հանդուգն ուզբեկների մի մասին հեռացրել էին համալսարանից, մի մասին էլ՝ նստեցրել:

1967թ. աշնանը Վազգեն Մանուկյանը, լրացուցիչ քննություններ հանձնելով, համալրեց Մոսկվայի համալսարանի

ուսանողների շարքերը և շուտով, Վրեժ Համբարձումյանի և Կարեն Թախտաջյանի հետ, հայտնվեց մեզ մոտ. այս երկուսի մասին գրքեր պետք է գրվեին, էլ չեմ ասում, որ իրենք էլ գրքեր ունեին գրելու… Վրեժի մասին միայն մի բան ասեմ. ապրեց ընդամենը 30 տարի, բայց ոչ մի պետական կառույցի կողմից առարկություն չեղավ, որ դպրոցը, որտեղ սովորել էր, կոչվի իր անունով: Իսկ Կարենի մասին Վազգենը հետագայում, երբ ընկերացել էինք, խոսքեր ասաց, որոնք երբևէ ոչ մեկի հասցեին շռայլած չկար: Այնպես ստացվեց, որ համալսարանականները նախաձեռնությունը վերցրին իրենց ձեռքը, իսկ կապը նրանց հետ իրականացվում էր հիմնականում Արարքցյան Բաբիկի միջոցով, ով արդեն ասպիրանտ էր ու համալսարանից տեղափոխվել էր մեր և Թախտաջյան Կարենի մոտ, որը նաև Բաբիկի մտերիմն էր:

Բուն գործին վերաբերող գործընթացները զարգանում էին հետևյալ կերպ: Վրեժն ուներ մի հետաքրքիր առանձնահատկություն. որևէ բան նախաձեռնելիս այդ մասին ուզում էր խորհրդակցել տվյալ բնագավառի առաջին դեմքերի հետ: Ինչ խոսք, վատ միտք չէ, և շատերը կուզենային հնարավորության դեպքում նման կերպ վարվել: Վրեժը հենց այն մարդն էր, որ այդպիսի հնարավորություն ուներ. նա անձամբ ծանոթ էր շատ առաջին դեմքերի, իսկ եթե ծանոթ էլ չէր, ամենասեղմ ժամկետում և հեշտ ծանոթանում էր: Այս անգամ էլ Վազգենի հետ որոշում են պարզել՝ իրո՞ք մեր ազգի համար թուրքական դրոշն իջեցնելն այդքան կարևոր է, որ դրա համար արժե որոշակի ռիսկի գնալ: Եվ որպես այդ հարցի ճիշտ պատասխանն իմացո-

ղի՝ ընտրում են Համո Հարությունյանին, որը տարիներ շարունակ Կանադայի դեսպան աշխատելուց հետո այդ պահին ղեկավարում էր ՍՍՀՄ Արտգործնախարարության արտաքին քաղաքականության պլանավորման բաժինը:

Հանդիպումը կայանում է, և նախկին դեսպանն անկեղծ ասում է հետևյալը. «Իհարկե, դա կբարձրացնի հայերի վարկանիշն աշխարհում և դրական ազդեցություն կունենա ժողովրդի ոգու վրա: Բայց ես չէ, որ ձեզ պետք է ասեմ, որ կարող են լինել նաև տուժողներ»:

Սա համալսարանականներին ընդունելի թվաց և ծրագրվող գործողությունների հիմք եղավ: Նույն հարցին դրական պատասխանեցինք նաև մենք, և նախապատրաստական փուլը մեկնարկեց: Մենք թարմացնում և զարգացնում էինք մեր կապերը, իսկ համալսարանականները փորձում էին անսպասելի տարբերակներ մտածել: Կարճ ասած՝ մենք պետք է պատասխանատու լինեինք այն բանի համար, ինչը մեզ հաջողվել էր, իսկ նրանք պետք է փորձեին մեր չլուծած խնդրի համար լուծումներ գտնել:

Միանգամից ասեմ, որ նրանք լուծումը գտան. տարվա ընթացքում շրջելով բազմաթիվ բուհերով և հանրակացարաններով՝ նախաձեռնող խումբը հանդիպեց շուրջ 3.000 ուսանողի, որոնցից հետագայում ընտրվեց մոտ 70 մարդ, որոնք էլ կազմեցին այսպես կոչված կենտրոնական ջոկատը, որի ստույգ գործողությունների մասին շատ մարդ չգիտեր: Ապրիլ 24-ի համար բոլորին ասված էր, որ ցուցարարների զանգվածը պետք է լինի դեսպանատան առջև՝ առավոտյան ժամը 10-ին, մինչդեռ այդ 70 հոգին՝ տասն-

յակների բաժանված, տարբեր տեղերից, բայց միաժամանակ պետք է հայտնվեր դեսպանատան առջև և «Զարթի՛ր, լառ» երգելով անքակտելի շղթա կազմեր ստույգ հերթականությամբ, իսկ շղթայի տրոհման կամ որևէ մեկի մեկուսացման վտանգի դեպքում նախօրոք մտածված սխեմաներով կասեցներ դրանք:

Այս մտածված սցենարով էլ ընթացել էին գործողությունները, երբ մենք հիմնական զանգվածի հետ հայտնվեցինք դեսպանատան առջև, ականատես եղանք դեռ գոյություն ունեցող շղթայի, որի հատուկենտ կորուստները, խցկված լինելով պատժիչների մեքենաները, նորից հետ էին բերվում: Որոշիչ եղավ այն, որ օպերացիայի գաղտնի մասը կես ժամ շուտ սկսվեց. հակառակորդը չէր հասցրել բավարար ուժեր հավաքել, իսկ մեր ժամանակին հասնելը՝ հասունացող ոչ ոքիի իրավիճակում, վճռորոշ եղավ. մարտնչող ջոկատի համառությունը բազմապատկվեց մոտեցած զանգվածի տպավորիչ փաստով: Դրոշն իջեցվեց, իսկ զինվորներն ու տեխնիկան, որ վերջապես ընդհուպ մոտեցել էին, արդեն մեր մոտենալուց հետո հեռացվեցին մեր ճանապարհից:

Այնուամենայնիվ, ցավոք, կորուստներ եղան. մեզանից մի քանիսը հուժկու հոգեբանական ճնշումներին չդիմացան: Դա, կարծեմ, պարտիզանական սինդրոմ է կոչվում, երբ պատերազմն ավարտվելուց հետո չես կարողանում խաղաղ կյանքի վերադառնալ և ի մի գալ: Ափսո՛ս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Արխիվային սկզբնաղբյուրներ

Հայաստանի Ազգային արխիվ

1. ֆ. 1 (Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե) – ց. 6, գ. 6; ց. 41, զզ. 22, 24, 26, 28, 29, 31, 35, 85, 86; ց. 42, գ. 22; ց. 43, զզ. 10, 48; ց. 44, զզ. 31, 42, 43, 54, 73; ց. 45, զզ. 6, 7, 1, 2, 4, 18, 67, 20, 15, 41, 19, 31, 42, 44; ց. 46, զզ. 6, 48, 65, 65ա, 65բ, 68; ց. 47, գ. 57; ց. 50, գ. 53; ց. 55, զզ. 32, 81; ց. 77, գ. 89; ց. 84, զզ. 40, 48; ց. 87, գ. 2; ց. 127, զզ. 141, 418:
2. ֆ. 113 (ՀԽՍՀ Նախարարների խորհուրդ) – ց. 94, զզ. 70, 191, 192; ց. 95, զզ. 374, 547, 942; ց. 96, զզ. 73, 88, 102; ց. 97, գ. 255; ց. 161, գ. 111 :
3. ֆ. 170 (Հայաստանի Գրողների միության սկզբնական կուսակցական կոմիտե) – ց. 1, զզ. 158, 165:
4. ֆ. 326 (ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարություն) – ց. 1, զզ. 257, 307, 325, 328, 352, 380, 476, 520, 563, 583; ց. 2, զզ. 21, 24, 25, 28, 35, 48, 52, 61, 72, 87, 121, 135, 143, 147, 153, 162, 167, 179, 194; ց. 3, զզ. 2, 17, 19, 23, 35, 36, 51; ց. 4, զզ. 7, 25, 28, 43, 70, 85, 94, 110, 163, 173, 183, 203, 220, ց. 7, գ. 9:
5. ֆ. 326, ցց. 11-12 (ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե) – ց. 11, զզ. 1-11, 13, 84, 89; ց. 12, զզ. 10, 11, 16, 19-21, 24-26, 28, 29:
6. ֆ. 709 (Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերություն) – ց. 3, զզ. 140, 143, 145, 147, 149, 155, 171, 321:

7. ֆ. 714 (ՀԽՍՀ պետական շինարարական կոմիտե) – ց. 4, գ. 75:
8. ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդ) – ց. 7, գ. 73; ց. 8, գ. 127:
9. ֆ. 875 (Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե) – ց. 1, գգ. 2, 3, 7, 9, 11, 12, 18, 25, 31, 32, 40, 42, 44, 46, 48; ց. 2, գգ. 1, 6, 21, 24; ց. 3, գգ. 2, 10; ց. 4, գգ. 1, 4-6, 9, 11, 12, 14, 17, 66, 74, 77, 86-215; ց. 5, գգ. 13, 19-262, 340, 345; ց. 6, գգ. 1, 3, 4, 19, 31, 33; 36-501; ց. 8, գգ. 14, 26, 33; ց. 9, գգ. 9, 16, 27, 32, 40, 47, 54; ց. 10, գգ. 1-466; ց. 11, գգ. 1-508; ց. 12, գգ. 1-600; ց. 13, գգ. 24, 25, 41:
10. ֆ. 1149 (Զոն Կիրակոսյան) – ց. 1, գ. 36:
11. ֆ. 1254 (ՀԽՍՀ Պետական գաղտնիքների պահպանման գլխավոր վարչություն) – ց. 3, գգ. 76, 78, 86, 90:
12. ֆ. 1318, ցց. 9-11 («Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրություն) – ց. 9, գգ. 1, 2, 3, 6; ց. 10, գգ. 9-15, 28, 196; ց. 11, գգ. 2, 16:

Բ. Տպագիր սկզբնաղբյուրներ

ա) հայերեն

1. Ալեքսանյան Ս., Էվոյան Վ., Սարգսյան Ա., Մարդկությունը չպետք է ների: ԲՀԱ, 1965, թ. 1, էջ 34-103:
2. Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր: Կազմ.՝ Է.Հովսեփյան, Ա.Հարությունյան: Ե., «Հայաստանի ազգային արխիվ», 2003, 200 էջ:
3. Ասծատրյան Ե., XX դար. Հայաստանի կառուցման ճանապարհին: Հուշեր: Ե., «Էդիթ Պրինտ», 2004:
4. Արևմտահայերի ցեղասպանության վերաբերյալ երիտթուրքական կոմիտեի փաստաթղթերը, 1915-1916թթ.: Կազմ. և առաջ.՝ Ռ.Սահակյան, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 3, էջ 73-86:
5. Դալլաքյան Կ., Հուշապատում: Ե., 1998:
6. Ժամանակակիցները Անտոն Քոչինյանի մասին: Ե., «Էդիթ Պրինտ», 2013, 304 էջ:
7. Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն, 1920-1980: Ե., 1981:

8. Հայկական կինո - Լիակատար կատալոգ, 1924-1999: Ե., 2000:
9. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ.՝ Մ.Ներսիսյան, Ռ.Սահակյան: Խմբ.՝ Մ.Ներսիսյան: Ե., «Հայաստան», 1991, 758 էջ:
10. Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու): Կազմ. և խմբ. Ա.Հարությունյան: Ե., «Գիտություն», 2005, 260 էջ:
11. Հարությունյան Շ., Սովետական Հայաստան. Տարեգրություն, 1920-1980: Ե., 1982:
12. Մարտիրոսյան Մ., Փաստաթղթեր 1915թ. Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու վերաբերյալ, ԲՀԱ, 2003, թ. 5, էջ 52-62:
13. Նամակներն են պատմում: Ե., «Հայաստան», 1967, 58 էջ:
14. Պետրոսյան Վ., Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես … իմ վիշտը: Ե., 2003:
15. Վիրաբյան Ա., Հանդիպումներ խորհրդային պետության ղեկավարների հետ, ԲՀԱ, 2003, թ. 1, էջ 156-173:

բ) ռուսերեն

1. Геноцид армян в Османской империи. Сб. Документов и материалов. Ред. М. Нерсисян. Сост. М. Нерсисян, Р. Саакян.- Е.: АН Арм. ССР, 1966, 563 с. Е.: Айастан, 1982, 1983, 685 с.
2. Заробян Я.Н., Отчетный доклад Центрального Комитета Компартии Армении XXII сьезду Компартии Армении. Е.: Армгосиздат, 1961.
3. Заробян Я.Н., Отчетный доклад Центрального Комитета Компартии Армении XXIII сьезду Компартии Армении. Е.: Армгосиздат, 1964.

Գ. Աշխատություններ

ա) հայերեն

1. Աբրահամյան Հր., Մարտնչող Արցախը, 1917-2000: Գիրք 2, 1923-1985: Ե., «Զանգակ-97», 2005, 276 էջ:
2. Աղաբաբյան Ռ., Ուղևորություն դեպի անցյալն ու ներկան: Տպավորություն Թուրքիայից: Ե., «Հայաստան», 1965, 47 էջ:
3. Բաբլոյան Մ., Սփյուռքահայ մամուլի պատմությունից: Ե., «ՀՍՍՀ ԳԱ», 1965, 204 էջ:
4. Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր: Ե., «Հայպետհրատ», 1962, 348 էջ:
5. Դալլաքյան Կ., Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից: Ե., «Հայաստան», 1964, 234 էջ:
6. Դալլաքյան Կ., Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում: Ե., 1962, 42 էջ:
7. Թոփչյան Էդ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ճակատագիրը: Ե., «Միտք», 1965, 26 էջ:
8. Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը: Ե., «Հայաստան», 1965, 271 էջ:
9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան և ապագան: Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Ե., «Երևանի համալսարան», 2007, 588 էջ:
10. Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում: Ե., «ՀՍՍՀ ԳԱ», 1964, 470 էջ:
11. Կապուտիկյան Ս., Քարավանները դեռ քայլում են: Ե., «Հայաստան», 1964, 531 էջ:
12. Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ.: Ե., «Հայաստան», 1965, 510 էջ; 1967, 557 էջ:
13. Համազասպյան Վ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը: Ե., «Տիգրան Մեծ», 2001, 304 էջ:

14. Հարությունյան Վ., Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում: Ե., 2014:
15. Մանուկյան Ա., Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988թթ.: Ե., «Ամրոց գրուպ», 2005, 104 էջ:
16. Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.): Ե., «Երևանի համալսարան», 1985:
17. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890թթ.: Ե., «Գիտություն», 2002, 492 էջ:
18. Ներսիսյան Մ., Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր: Ե., «Գիտություն», 2005, 336 էջ:
19. Ներսիսյան Մ., Պատմության կեղծարարները: Ե., «Գիտություն», 1998, 343 էջ:
20. Ջոն Կիրակոսյան. անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում: Ե., «Տիգրան Մեծ», 2009, 679 էջ:
21. Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ: Ե., «Հայպետհրատ», 1963, 96 էջ:
22. Սիմոնյան Հր., Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում: Ե., «Հայաստան», 1968, 672 էջ:

բ) ռուսերեն

1. Заробян Н.Я., Яков Заробян и его эпоха. Ер.: Изд. РАУ, 2008, 246 с.
2. Капутикян С., Каравани еще в пути. М.: Советский писатель, 1969, 359 с.

Դ. Հոդվածներ

ա) հայերեն

1. Ա.Սեմա, «Գրական թերթ», 1965, մայիսի 21:
2. Բաբլոյան Մ., Սովետական Հայաստանը և Սփյուռքը, «Սովետական արվեստ», 1960, թ. 7, էջ 41-47:
3. Գալոյան Գ., Կիրակոսյան Ջ., Արհավիրքից վերածնունդ, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24:
4. Գասպարյան Հ., Մի դրվագ հայկական Մեծ եղեռնից, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 4, էջ 73-80:
5. Գասպարյան Ս., Սովետական Հայաստանի 40-ամյակը և սփյուռքահայությունը, ՊԲՀ, 1961, թ. 1, էջ 222-228:
6. Գրիգորյան Զ., Յակով Զարոբյանի դերը հայոց Մեծ եղեռնի 50-ամյակը Խորհրդային Հայաստանում նշելու և հայրենադարձության կազմակերպման գործում, ԲՀԱ, 2003, թ. 1, էջ 202-205:
7. Դ. Վ., Գիտական նստաշրջան նվիրված Եղեռնի 50-ամյակին, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 5, էջ 96-97:
8. Երկանյան Վ., Մշակութային կյանքը Սփյուռքում, ՊԲՀ, 1962, թ. 3, էջ 261-264; 1963, թ. 3, էջ 333-335; 1964, թ. 1, էջ 294-298; թ. 3, էջ 247-250:
9. Զատիկյան Հովհ., Հայկական հարցը և ազգային զարթոնքը 1960-ական թվականներին, ԲՀԱ, 2009, թ. 1, էջ 205-209:
10. Ինճիկյան Հ., Երիտթուրքական շարժման գնահատման շուրջ, «Արևելագիտական ժողովածու», 1964, հտ. 2, էջ 216-239:
11. Խաչատրյան Կ., Խորհրդային Հայաստանի ղեկավարության քայլերը ԼՂԻՄ-Ը ՀԽՍՀ-ի հետ վերամիավորելու ուղղությամբ (1945-1985թթ.): Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան: Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Ե., 2007, էջ 66-72:
12. Խրլոպյան Գ., Սփյուռքի մի քանի հիմնական խնդիրների մասին, «Տեղեկագիր» հաս. գիտ., թ. 8, էջ 63-76:
13. Կապուտիկյան Ս., Ծաղկեպսակի փոխարեն. Վահան Թեքեյանի մահվան 20-ամյակը, «Գրական թերթ», 1965, ապրիլի 16:

14. Կիրակոսյան Ջ., Արևմտահայերի ծանր դրությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, ՊԲՀ, 1965, թ. 1:
15. Կիրակոսյան Ջ., Արևմտահայերի ողբերգությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, «Լենինյան ուղիով», 1965, թ. 4:
16. Կիրակոսյան Ջ., Միջազգային իմպերիալիզմը և հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 4:
17. Հակոբյան Լ., Գիտական սեսիա՝ նվիրված Մեծ եղեռնի 50-ամյակին, ՊԲՀ, 1965, թ. 2, էջ 276-277:
18. Հակոբյան Ս., Արևմտահայերի ինքնապաշտպանությունը 1915-1916թթ., «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 4, էջ 61-72:
19. Հակոբյան Ս., Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում և իմպերիալիստական Գերմանիայի պատասխանատվության հարցը, ՊԲՀ, 1963, թ. 1, էջ 53-66:
20. Համազասպյան Վ., Հայրենիքի և Սփյուռքի սերտ կապերի համար, «Սովետական Հայաստան», 1964, հոկտեմբերի 29:
21. Համբարձումյան Վ., Եղեռն և վերածնունդ, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 4, էջ 23-36; ՊԲՀ, 1965, թ. 2, էջ 41-54
22. Համբարձումյան Վ., Մեծ եղեռնը, ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 19-20:
23. Հարությունյան Ա., Անդրանիկը որպես մարտիկ և զորավար, ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 109-124
24. Հարությունյան Ն., Բացման խոսք 1915թ. Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հանդիսավոր նիստում, ՊԲՀ, 1965, թ. 2, էջ 37-40:
25. Հովհաննիսյան Լ., Հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջը, ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 21-22:
26. Հովհաննիսյան Վ., Խոտորջրի 1918 թվականի հերոսամարտը, ՊԲՀ, 1966, թ. 1, էջ 208-210
27. Հովնանյան Ս., Հայերի կոտորածները 1890-ական թվերին և բուլղար հասարակայնությունը, ՊԲՀ, 1965, թ. 2, էջ 207-210:
28. Մանուկյան Ա., Այլախոհության դրսևորումները Հայաստանում 1950-1970-ական թվերին, ԲՀԱ, 2003, թ. 5, էջ 189-211:

29. Մարտիրոսյան Լ., Ուսումնառությունը հարազատ երկրում, «Սովետական Հայաստան», 1964, թ. 12, էջ 24-25:
30. Մենք եկանք տեսանք Հայաստանը, «Սովետական Հայաստան», 1962, թ. 12, էջ 9-11:
31. Ներսիսյան Մ., Նյութեր հայկական կոտորածների մասին, ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 85-100:
32. Ներսիսյան Մ., Ուշակով Ն., Գենոցիդը ամենաածանր հանցագործությունն է մարդկության հանդեպ, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 25, թ. 97:
33. Պողոսյան Վ., «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի լույսընծայման նախապատմության շուրջ, ՊԲՀ, 2010, թ. 1, էջ 234-244:
34. Ռշտունի Հ., Դանիել Վարուժանի պոեզիան, ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 69-84:
35. Սահակյան Ռ., Հայերի ցեղասպանությունը առաջավոր հասարակայնության գնահատմամբ, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 4, էջ 101-112:
36. Սարգսյան Ե., Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը 1915-1916 թվականներին, ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 23-36:
37. Սարգսյան Ե., Երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը 1915-1916թթ., «Սովետական Հայաստան», 1965, թ. 4, էջ 16-23:
38. Ստեփանյան Գ., Արևմտահայ մտավորականության զոհերը, ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 37-50:
39. Սփյուռքահայ կյանք, ՊԲՀ, 1958, թ. 1, էջ 304-309; թ. 2, էջ 318-322; թ. 3, էջ 296-302; 1959, թ. 1, էջ 295-299; 1960, թ. 1, էջ 267-274:
40. Վարդանյան Հ., Արևմտահայերի սոցիալական և ազգային ճնշման ուժեղացումը Բեռլինի կոնգրեսից հետո, ՊԲՀ, 1964, թ. 3, էջ 69-78:
41. Վարդանյան Հ., Մեծ եղեռնի պատմության էջերից, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, թ. 4, էջ 51-60:

42. Վարդանյան Ն., Մշակութային կյանքը Սփյուռքում, ՊԲՀ, 1964, թ. 1, էջ 318-321; 1965, թ. 1, էջ 293-296; թ. 3, էջ 287-290; 1969, թ. 3, էջ 255-260:
43. Վիրաբյան Ա., Մեծ եղեռնի հուշահամալիրի ոդիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն, ԲՀԱ, 2008, թ. 1, էջ 292-296:
44. Քոչար Հր., Մտորումներ, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24

բ) ռուսերեն

1. Инджикян О., На суд истории, «Известия» АН Арм. ССР, Общ. науки, 1965, N. 4, сс. 37-50.
2. Нерсисян М., Геноцид западных армян в 1915 году, ИФЖ, 1965, № 2, сс. 55-60.
3. Нерсисян М., Ушаков Н., Геноцид самое тяжелое преступление против человечества, «Правда», 1965, 25 апреля.
4. Саакян Р., Геноцид армян в оценке передовой общественности, «Известия» АН Арм. ССР, Общ. науки, 1965, N. 4, сс. 101-112.
5. Саакян Р., Мемуары Наим-бея об избиении армян, ИФЖ, 1965, N. 1, сс. 101-108.
6. Саркисян Е., Геноцид армян 1915-1916гг., ИФЖ, 1965, N. 1, сс. 23-36.

գ) ֆրանսերեն

1. Mavian Séta, Tzitzèrnakabèrd: histoire d'un memorial, «Revue Arménienne». Des Questions contemporaines, 2005, Juin, N. 3, pp. 8-20

Ե. Պարբերական մամուլ

Թերթեր

ա) հայերեն

1. «Աշխարհ», Փարիզ, 1965:
2. «Ավանգարդ», Երևան, 1965:
3. «Գրական թերթ», Երևան, 1965:
4. «Զարթոնք», Բեյրութ, 1964:
5. «Հայրենիքի ձայն», Երևան, 1965:
6. «Սովետական Հայաստան», Երևան, 1965, 1967:
7. «Սփյուռք», Բեյրութ, 1963:

բ) ռուսերեն

1. «Голос Армении», Ереван, 2005.
2. «Коммунист», Ереван, 1965.

Ամսագրեր

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1965, 1989:
2. «Էջմիածին», Էջմիածին, 1964, 1965:
3. «Լենինյան ուղիով», Երևան, 1965:
4. «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1965:
5. «Սովետական Հայաստան», Երևան, 1966:
6. «Սովետական մանկավարժ», Երևան, 1965:
7. «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, Երևան, 1965:

Ավագ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ
ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Գիտական խմբագիր՝
Ամատունի ՎԻՐԱԲՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ կավճապատ, ծավալը՝ 10,25 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 300։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում։